

15630

Պրոլետարիատ բոլոր յերկրների, միացե՛ք

ԽՍՀՄ

ՅԵՎ

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՅԵՐԿՐՆԵՐԸ

321.8

Խ-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԴԾՈՒՅՑ • 1938 • ՅԵՐԵՎԱՆ, Խ



26 SEP 2006

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

E'4 NOV 2009

37-K
Ca 1679
321.8
12-11

ԽՍՀՄ
ՅԵՎ
ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՑԵՐԿՐՆԵՐԸ

Ա. ԱՏԵԶԿՈՒ, Լ. ՄԵԽԼԻՍԻ, ՅԵ. ՎԱՐԴԱՅԻ ՅԵՎ. Վ. ԿԱՐՊԻՆՍԿՈՒ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆՔ

75630

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

11 SEP 2013

Քսան տարի առաջ մուսաստանի բանվորներն ու գյուղացիները բոլցկիկների կուսակցության ղեկավարությամբ տապալեցին կալվածատերերի ու բուրժուազիայի տիրապետությունը:

Յերբ կալվածատերերի ու կապիտալիստների լուծը թութափեց, կապիտալիստներն ու նրանց արբանյակները—եսերներն ու մենշևիկները պնդում եյին, թե աշխարհի վերջը հասել է, թե առանց բուրժուազիայի բանվորները չեն կարողանա բանացնել գործարանները, չեն կարողանա կառավարել յերկերը, թե սովոր ու անկուլտուրականությունը—ահա ժողովրդի բաժինը, մինչև վոր կվերականգնվեն բուրժուական կարգերը: Կապիտալիստները մենշևիկների ու եսերների հետ միասին 14 պետությունների բանակներին գրգռեցին հարձակվելու Խորհրդային Միության վրա, բուն յերկրում սպիտակ-դվարդիական ապստամբություններ եյին բարձրացնում, յերեք տարի բանվորների ու գյուղացիների դեմ հականեղափոխական պատերազմ եյին մղում:

Նրանք հասան իրենց նպատակին: Խորհրդային Միության բանվորներն ու գյուղացիները համառ կովում պաշտպանեցին իրենց աղատությունը և Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության նվաճումները, հետ մղեցին թշնամիների բոլոր հարձակումները: Կապիտալիստական յերկրների պրոլետարներն ոգնեցին Խորհրդային Միության բանվորներին ու գյուղացիներին հականեղափոխության դեմ սրանց մղած կռվում:

Խորհրդային յերկրում ծավալվեց սոցիալիզմի լայն շինարարությունը: Քսան տարի առաջ մեր յերկերն աղքատ եր ու չքավոր: Գյուղացին սովահար եր, յուրաքանչյուր գարուն արուրով փորփում եր իր հողը. այժմ նա դարձել ե ունեոր, ծանր աշխատանքը նրա փոխարեն տրակտորներն ու կոմբայններն են կատարում: Հարյուր-հազարավոր չքավորներ թափառում եյին ճանապարհներին՝ աշխատանք վորոնելով. այժմ սոցիալիզմի յերկրում գործազուրկներ չկան:

Անել են հաղարավոր նոր ձեռնարկություններ, կառուցվել



60944-67

СССР И СТРАНЫ
КАПИТАЛИЗМА
АРМПАРТИЗДАТ, ЕРЕВАН, 1937 г.

Են նոր յերկաթուղիներ, ջրանցքներ, հուժկու ելեկտրակայաններ: Այս մեքենաները, վորոնք առաջ արտասահմանից եյին ներմուծվում, այժմ արտադրվում են Խորհրդային Միության մեջ: Մեր յերկիրը դարձավ կապիտալիստական յերկրներից անկախ: Աղքային ճնշման տեղը բռնեց յուրաքանչյուր ժողովրդի կուլտուրական ուժերի ազատ գարգացումը: Հանգիստ և առանց յերկյուղի յե նայում ապագային խորհրդային ժողովություն ապահովում ե աշխատանքի, հանգստի, կրթության իրավունք, ապահովություն՝ ծերության ժամանակ, հիմանդրության և աշխատունակությունը կորցնելու դեպքում: Կյանքն ավելի լավ ե դարձել, կյանքն ավելի ուրախ ե դարձել: Հզոր Կարմիր Բանակը, վոր ԽՍՀՄ աշխատավորների միս ու արյունից ե, պաշտպանում ե Խորհրդային Միության սահմանները:

Ի՞նչ կարող ե սրան հակադրել կապիտալիզմը:

Ճգնաժամեր, մեռյալ գործարաններ, միլիոնավոր գործադրություններ, բանվորների աղքատացում և գյուղացիների աղքատացում, ֆաշիստական բռնություն, վորն աշխատավորներին զրկում ե ամեն տեսակի աղատությունից, կատաղի զինումներ, իմպերիալիստների հափշտակողական պատերազմներ, կուլտուրայի անկում, սովորողների թվի նվազում, շարունակվող և ուժեղացող աղքային ու գաղութային ճնշում, տանջալից յերկյուղ ապագայի համար, աշխատավորների ընդհանուր դժգոհություն ու գաղազում գոյություն ունեցող կարգերի դեմ:

Անցած քսան տարիներն ակնհայտ կերպով ցույց տվին նոր հասարակակարգի բոլոր առավելությունները հնի հանդեպ, սոցիալիզմինը՝ կապիտալիզմի հանդեպ:

I.

1914—1913 թ. թ. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊԻ
ՆՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Ի՞նչ ՆՍՏԵՑ ՍՊՐԴԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հաղթական Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը վերջ գրեց Ռուսաստանի մասնակցությանը համաշխարհային իմպերիալիստական պատերազմին:

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ պատերազմում եյին կապիտալիստական պետությունների յերկու միություններ՝ Անգլիան, Ֆրանսիան, Բելգիան, Սերբիան, Ռուսաստանը, Իտալիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները — մի կողմից. Գերմանիան, Ավստր-Հունգարիան, Թյուրքիան, Բուլղարիան — մյուս կողմից: Մնացած պետությունները, բայց Ռուսաստանից, շարունակեցին պատերազմել դարձյալ մի ամբողջ տարի: 51 ամսվա ընթացքում, ընդհուպ մինչև 1918 թ. նոյեմբերը, տասնյակ միլիոնավոր մարդիկ վոչչացնում եյին միմյանց:

Պատերազմն ահազին քանակությամբ զոհեր կլանեց: Սպանվեց 10 միլիոն և վիրավորվեց 20,3 միլիոն մարդ (այդ թվում Ռուսաստանը կորցրեց սպանված 2,3 միլիոն և վիրավոր 5 միլիոն մարդ): Պատերազմը միլիոնավոր մարդկանց վերածեց հաշմանդամների, կույրերի, անձեռների և անվոտների: Պատերազմից հետո այրիների և վորբերի մի ամբողջ բանակ մնաց:

Անմիջականորեն պատերազմի վրա արված ծախսերը բոլոր յերկրներում կազմեցին 500 միլիարդ ռուբլի վոսկով: Նրանք ծածկվեցին գլխավորապես փոխառությունների միջոցով: Աշխարհի բոլոր յերկրների պետական պարտքը կազմում եր (միլիարդ վոսկի ռուբլիներով).

1914 թ.	· · · · ·	65
1920 »	· · · · ·	550

Պատերազմած յերկրների տնտեսությունն անկման հասավ: Պատերազմը մի հարվածով վոչնչացրեց արժեքներ, վորոնք ստեղծվել եյին շատ սերունդների աշխատանքով: Ուազմական գործողությունների շրջանները բոլորովին ամայացվեցին: Բայց թիկունքում ել ահազին ավերածություններ եյին տեղի ունենում: Տներն ու գործարանները պատերազմի տարիներին չեյին վերանորոգվում: Մաշված մեքենաները նորերով չեյին փոխարինվում: Պաշարները սպառվեցին: Տներում բոնագրավլում եյին դռան պղնձե բռնակները, ուազմական արդյունաբերության համար հարկավոր գունավոր մետաղներից պատրաստված ամեն տեսակ շինվածքներ:

Պատերազմող յերկրների աշխատավոր բնակչությունը սաստիւ աղքատացավ: Բայց ընդհանուր աղքատությունից ու սովոր ոգտվելով հարստացան կապիտալիստները: Նրանք ապրանքների պակասությունը սպեկուլացիայի միջոց եյին դարձնում: Նրանք բանակին մատակարարում եյին վատ վորակի ապրանքներ բարձր գներով: Նրանք խարդախում եյին բոլոր մթերքները: Լավորակ մթերքների փոխարեն գործածության մեջ մտան թերաժեք փոխարինողներ: Բամբակը փոխարինվում եր արհեստական մանրաթելով, բուրդը—բրդի քուրելով, կաշվե կոշկատակերը—մամլած թղթե զանգվածից պատրաստած կոշկատակերով: Կապիտալիստներն ապրանքները ծախում եյին բարձր գներով, բայց բանվորներին նրանք վճարում եյին մուրացկանային աշխատավարձ: Գործարաններն ու ֆաբրիկաները փոխադրվել եյին ուազմական գրության: Այն բանվորներին, վորոնք համարձակվում եյին դժգոհություն արտահայտել, ուղարկում եյին ֆրոնտ: Կապիտալիստներն առասպելական շահույթներ եյին դիզում: Լենինի խոսքերով՝ պատերազմը բանվորների համար դժոխք եր և կապիտալիստների համար դրախտ:

Խոշոր կալվածատերերն ու կուլակները նույնպես հարստացան: Ուազմագերիները նրանց հողերը մշակում եյին անվճար: Բանակների համար կատարած մատակարարումները հարստացնում եյին նրանց:

Բայց աշխատավոր գյուղացիությունն աղքատացավ: Բնատանիքների կերակրողներին ֆրոնտ եյին տարել: Զիերն ու տավարը տանում եյին բանակների համար: Զգացվում եր բանվորական ուժի սուր պակասություն: Պարարտանյութերը չեյին բավականացնում, հողն ուժասպառ եր լինում: Գուղացիական

տներն անկման հասան, գյուղատնտեսական ինվենտարը քայլացիլեց: Ծերերը, կանայք և յերեխաներն ուժասպառ եյին լինում, վորպեսզի թեկուզ աղքատիկ բերք ստանան:

Նույնպես սաստիկ աղքատացավ մանր բուրժուազիան քաղաքներում: Արհեստավորները չեյին ստանում հումք, մանր առելտրականները չեյին ստանում ապրանքներ: Այն խնայողությունները, վոր արհեստավորները, ծառայողները, ուսուցիչները, մանր քաղաքային բնակիչները կուտակել եյին իրենց ամբողջ կյանքում, զրկելով իրենց ամենաանհրաժեշտ բաններում, պատերազմը տարավ: Որինակ, Գերմանիայում աշխատավորների ավանդները խնայողական դրամարկղներում պատերազմի սկզբին կազմում եյին 10 միլիարդ ռուբլի վոսկով: Այդ խնայողություններից վոչինչ չմնաց: Աշխատավորներին ստիպում եյին խնայողություններով ուազմական փոխառությունների պարտատումներ գնել: Փողն արժեքազրկվում եր, և միաժամանակ արժեքազրկվում եյին աշխատավորների խնայողությունները: Փոխանակ ապահովված, հանգիստ ծերության, վորի վրա հույս եյին դնում ավանդատունները, նրանց սպասում եր աղքատություն:

Սովոր ու ցուրտը չարաչար տանջում եյին բանվոր դասակարգին: Զկար միս, ճարպեկեն, շաքար, հաց, ածուխ: Բանվորների աշխատավարձը չափազանց քիչ եր, վոր նրանք կարողանային հարուստների որինակով սպեկուլատիկ գներով սննդամթերքներ գնել: Ֆաբրիկաներում և գործարաններում թագավորում եր տաժանալից զինվորական ռեժիմը: Գործադրությունները ձնշվում եյին զինված ուժով: Բանվոր դասակարգին դավաճանած սոցիալիստական կուսակցությունների և արհմիությունների առաջնորդներն իրենց յերկրների բուրժուազիայի հետ «քաղաքացիական հաշտություն» կնքեցին: Նրանք հորդորում եյին աշխատավորներին համբերությամբ դիմանալ բոլոր զոհերին «հանուն հաղթության»: Նրանք չեյին խորշում նույնիսկ հեղափոխական բանվորներին մատնելուց:

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ՀՈՐԻՆՎԵՑ ՊԱՏԵՐԱՋՄԸ

Գերմանական իմպերիալիստները կեղծավորաբար հավատացնում եյին, թե նրանք պատերազմ են մղում, վորպեսզի ուսուժողություն ազատեն ցարիզմի լծից: Ուուսական բուրժուազիան և կալվածատերերը միշտ խոսում եյին ավստրիական

միապետության կողմից ճնշվող «յեղբայրավոններին ոգնելու» մասին։ Ֆրանսական և անգլիական իմպերիալիստներն ասում են, թե նրանք պատերազմ են մզում գերմանական և ավստրո-հունգարական զինվորականության դեմ, վորպեսզի ժողովուրդներին ազատեն գերմանական կայսերի, ավստրիական կայսրի և թյուրքաց սուլթանի լծից։ «Մենք կոփկ ենք մզում խաղաղության համար, — ասում ենին նրանք։ — Յեթե մենք հաղթենք, այս պատերազմը վերջին պատերազմը կլինի»։

Իրականում պատերազմը մզում եր աշխարհն իմպերիալիստական զիշատիչների միջև վերաբաժնելու համար։ Գերմանական բուրժուազիան ձգտում եր հափշտակել Լեհաստանը, Ուկրաինան, Լիտվան, Լատվիան և Եստոնիան։ Նա ձգտում եր իր իշխանությունը տարածել ամբողջ Արևելյան Յեվրոպայի վրա։ Նա ուզում եր իրեն յենթարկել Բելգիան, նոր գաղութներ հափշտակել Աֆրիկայում և այլն։ Ֆրանսական բուրժուազիան ուզում եր ուժով խել Ելզաս-Լոտարինգիան, վոր գերմանացիները հափշտակել եյին կես դար դրանից առաջ։ Անգլիական բուրժուազիան ատամ եր սրում գերմանական գաղութների և Թյուրքիայի դեմ։ Ճապոնիան ուզում եր հափշտակել Չինաստանում գտնվող գերմանական գաղութները և ստրկացնել Չինաստան։ Ցարական մուսաքանչական ուզում եր հափշտակել Կոստանդնուպոլիսը, Գալիցիան, ձգտում եր տիրապետություն հաստատել Բալկանների վրա։

Հաղթությունը մնաց Անգլիային, Ֆրանսիային, Բելգիային և մյուսներին։ Կայզերական Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և սուլթանական Թյուրքիան ջախջախվեցին։ Հաղթված բոլոր պետությունները զինաթափ արգեցին։ Ռազմական ծախսերը հատուցելու պատրավակով նրանց ստիպեցին հսկայական պատերազմական տուրք վճարել։

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԼԻՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԵՐԻՆ

Բանվորների և գյուղացիների գագաղումը պատերազմի վերջերին բոլոր յերկրներում վերածվեց հսկայական մասսայական յելույթների։ Պատերազմած բոլոր յերկրների թիկունքում դործադուլների ավել բարձրացավ, բանակներում սկսվեցին ապրանքագույն նրանց ստիպեցին։ Ավստրո-Հունգարիայում միապետությունը տապալվեց։ Բուրժուազիան իշխանության գլուխ կանգնեցրեց սոցիալ-դեմոկրա-

տական առաջնորդներին, վորոնք առատ խոստումներով փորձում եյին հանգստացնել բանվորներին։ Մի քանի յերկրներում (Հունգարիա, Բավարիա, Ֆինլանդիա) բանվորները բուրժուազիային տապալեցին և խորհրդային իշխանություն ստեղծեցին։ Սակայն կոմունիստական կուսակցությունների թուլությունը, սոցիալիստական կուսակցությունների առաջնորդների դավաճանությունը և համաշխարհային կապիտալի կողմից այս պետությունների բուրժուազիային ցույց տրված աջակցությունը հասցըին խորհրդային իշխանության անկմանն այս յերկրներում։

II Ինտերնացիոնալի սոցիալիստական կուսակցությունների ոգնությամբ բուրժուազիային հաջողվեց հետ մղել բանվոր դասակարգի և գաղութային ժողովուրդների հեղափոխական հարձակումը։

Խորհրդային Միության սահմաններից դուրս բուրժուազիայի իշխանությունը նորից ամրապնդվեց ամենուրեք։ Նրա տիրապետությունը հասցընց աշխատավոր ժողովրդի ել ավելի դաժան ճնշման ու աղքատացման։

1920—1921 թ. թ. ՏՆՏԵՐԱԿՈՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Պատերազմը վերջանալուց հետո յերկու տարի ել չանցավ, վոր ժողովրդական մասսաների գլխին նոր աղեա պայթեց։ Թեպետ այն վերքերը, վոր պատերազմի տարիները հասցըելեյին կապիտալիստական յերկրների տնտեսությանը, գեռ չեյին բուժված, այնուամենայնիվ գերարտագրության ճգնաժամը պայթեց։ Վաճառապետները լեփ-լեցուն եյին ապրանքներով, բայց ըրանք վոչ վոք չեր գնում։ Գործազրկությունն աճեց։ Առևտորականները, գնորդներ չունենալով, դաշտարեցին ապրանքներ գնել գործարանատերերից։ Ապրանքների արտադրությունը կրճատվում եր։

Ինչու տեղի ունեցավ այս։

Կապիտալիզմի որով տնտեսությունը տարվում ե առանց ընդհանուր պլանի։ Ֆաբրիկաներն ու գործարանները կապիտալիստականների մասնավոր սեփականությունն են կազմում։ Կապիտալիստն, ասենք, կողիկներ ե արտադրում վոչ թե նրա համար, վոր ժողովրդին հազցնի, այլ նրա համար, վոր շահույթ ստանա։ Նա ուզում ե յուրաքանչուր զույգ կոշկից վորքան կարելի յե ավելի շատ վաստակել։ Վորպեսզի ավելի շատ ոգուտ ձեռք բերեն, կապիտալիստներն աշխատում են ապրանքներն ըստ կարելույն ավելի

եժան արտագրել, վորքան կարելի յե ավելի թանգ ծախել: Նրանք իջեցնում են բանվորների աշխատավարձը: Նրանք գործածության մեջ են դնում նոր մեքենաներ, վորոնք փոխարինում են բանվորական ուժին: Այսպիսով նրանք իրենք են գործազրկություն ստեղծում: Նրանք ավելի ու ավելի յեն պակասեցնում բանվորների ու գյուղացիների յեկամուտը: Նրանք իջեցնում են այն հումքի գնեռը, վոր գյուղացիները շուկա յեն բերում: Միենույն ժամանակ նրանք միմյանց հետ համաձայնության են գալիս ապրանքները վորոշ գներից ավելի եժան չծախելու:

Ավելի շատ վաստակելու համար ամեն մի կապիտալիստ աշխատում է ավելի շատ ապրանք վաճառահանել: Սրա համար նա արտադրությունն ամեն կերպ ընդարձակում է: Սակայն սպառման արտադրանքներն ուղեւ ենում: Գլխավոր ու հիմնական գնորդներ հանդիսանում են բանվորները և գյուղացիները: Բայց շահույթի հետևից ընկած կապիտալիստներն իջեցնում են աշխատավարձը, «ավելորդ» բանվորներին շարտում են փողոց, գյուղացիներին ստիպում են իրենց ապրանքները ծախել չնչին գնով: Ուստի, բանվորների և գյուղացիների յեկամուտներն ընկնում են, ապրանքները գնորդներ չեն գտնում:

Այս պատճառով կապիտալիստական կարգերում պարբերաբար, վորոշ ժամանակաշրջանից հետո, առաջ են գալիս գերարտադրության ճգնաժամեր: Կապիտալիստները չեն կարող վաճառահանել արտադրված ապրանքները: Յեթե չի կարելի կոշիկները ծախել սպառել, ապա գործարանատերը դադարում է կաշի և մեքենաներ գնել: Յեթե չի կարելի մեքենաները ծախել-սպառել, ապա մեքենակառուց գործարանի տերը պողպատ չի գնում և այլն: Այսպիսով, ճգնաժամը բոլոր ձեռնարկությունների վրա յե տարածվում:

Գերարտադրության այսպիսի ճգնաժամերը կապիտալիստական աշխարհում կրկնվում են վերջին հարյուր հիսուն տարվա ընթացքում: Ամեն մի 10 կամ 8 տարուց հետո հրահրվում է գերարտադրության ճգնաժամը: Ահա թե ինչու համար պատերազմից հետո գերարտադրության ճգնաժամ ծագեց, չնայած վոր ժողովրդական լայն մասսաները սարսափելի գրկանքներ եյին կրում:

1929 թ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՑՑԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Վոտքի կանգնելով 1920—1921 թ. ճգնաժամից, կապիտալիստական յերկրների տնտեսությունը վորոշ ժամանակ ընթանում եր գեպի վեր: Բայց 1929 թ. նորից ճգնաժամ հրահրվեց:

Սա ամենայերկարամակ ու խորը ճգնաժամն եր կապիտալիզմի պատմության մեջ: Յերեք տարվա ընթացքում ապրանքների արտադրությունն անընդհատ ընկնում եր: Ամբողջ յոթը տարի անցավ, մինչև վոր կապիտալիստական աշխարհի արտադրությունը մինչև 1929 թ. մակարդակը բարձրացավ: Լեհաստանը, Ֆրանսիան և ուրիշ յերկրներ մինչև որս չկարողացան միովին հաղթահարել ճգնաժամը: Արդյունաբերության միքանիկարելու ճյուղը հայտնաբեր ճյուղը ապրանքներ արտադրվում եյին նույնիսկ ավելի քիչ, քան 30—50 տարի առաջ: Մեքենաների արտադրությունը կրճատվեց կիսով չափ: Տասնյակ-հազարավոր ֆաբրիկաներ ու գործարաններ կանգնած եյին առանց գործի: Մարքավորումը ժանդառում եր, փշանում, ջարդվում (պսկալօս և սլոմ): Ապրանքների գները սաստիկ ընկան: Բազմաթիվ արհեստավորներ, առևտրականներ, գործարանատերեր, բանկեր սնանկացան, քայլայվեցին: Խոշոր կապիտալիստներին պետությունները մեծ գումարներ եյին տրամադրում, վորպեսզի նրանց սնանկանալուց փրկեն: Խոշոր կապիտալիստները չնչին գնով գնում եյին իրենց քայլայված մրցակիցների ձեռնարկությունները:

Հետևապես՝ մի բուռ հարուստներ ել ավելի ուժեղացրին իրենց իշխանությունը:

Ճգնաժամը չխնայեց և վհչ մի կապիտալիստական յերկիր: Արեսուրը պետությունների միջև կրճատվեց ավելի քան յերեք անգամ: Կապիտալիստական յերկրների մեծամասնության մեջ փողն արեքազրկվեց: Միլիոնավոր գյուղացիներ, արհեստավորներ, մանր առևտրականներ քայլայվեցին: Տասնյակ-միլիոնավոր մարդիկ փողոց ընկան, մնացին առանց աշխատանքի, առանց վոր մարդիկ փողոց ընկան, մնացին առանց աշխատանքի, հարստություններում: Բուրքուազիան անչափ հարստություններ վորովեց, այլեց, ծովը նետեց, վարպեսզի գները նորից բարձրացնի: Ժողովրդական մասսաներն ել ավելի աղքատացան: Բանվորների և գյուղացիների քայլայման հաշվին կապիտալիզմին հաջողվեց դուրս գալ ճգնաժամից, նորից մի քիչ բարձրացնել արտադրությունը: Բայց հենց այս պատճառով բուրքուազիան աղքատացան, ապրանքները վաճառելու հնարավորությունը կրճատվեց: Մրցությունը, շուկայի համար մզվող պայլքարն ել սրվեցին: Այն յերկրներում, վորտեղ արտադրությունն ավելի սրվեցին:

ավելի արագ և բարձրացել, արգեն նոր ճգնաժամ և հասունաւում:

Վերջին տնտեսական ճգնաժամի սրությունը և նրա չտեսնը՝ ված տեսական բնույթը նրանով են բացատրվում, վոր այս ճրդաժամը բռնկեց կապիտալիզմի բնդիանուր ճգնաժամի պայմանակրում:

Այժմ կապիտալիզմը չունի և չի կարող ունենալ այն ուժն ու ամրությունը, վոր նա ուներ մինչև իմպերիալիստական պատերազմը և Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը։ Կապիտալիստական աշխարհը նեխման ժամանակաշրջանն ե ապրում։ Իմպերիալիստական պատերազմն ուժեղացրեց կապիտալիզմի նեխումը և խախտեց նրա հավասարակցությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո տնտեսության կապիտալիստական սխստեմի կողքին հանդիս յեկավ և գոյություն ունի սոցիալիստական սխստեմը։ Նա կանգնած է դիմանդիման կապիտալիզմին և հենց իր գոյության փաստով ցույց ե տալիս կապիտալիզմի նեխվածությունը և քայլայում ե նրա հիմքերը։

Ի՞նչի ՀԱՍՑԵՑ ԲՈՒՐԺՈՅՑԻԱՑԻ ԿԱՌԱՎԱՐԵԼ

Համաշխարհային պատերազմ բռնկելուց հետո 23 տարի յեանցել։ Այս ժամանակաշրջանի տնտեսական հանրագումարները վերին աստիճանի վողբալի յեն կապիտալիստական յերկրների համար։ Ճիշտ ե, 1937 թվին արտադրությունը մինչպատերազմյան մակարդակից մի քիչ ավելի բարձր և կանգնած։ Դրա փոխարեն արտադրության անհամեմատ ավելի մեծ բաժինը ռազմական կարիքներին և սպասարկում։ Բուրժուական աշխարհի բնակչության թիվը մինչպատերազմյան ժամանակի հետ համեմատած աճել է $15^0/_{\circ}$ -ով։ Այժմ բնակչության ամեն մի շնչին միջին հաշվով ընկնում ե մթերքների ավելի քիչ քանակ, քան մինչպատերազմյան ժամանակ։ Տեխնիկական պրոցեսը, գյուտերը, նոր մեքենաները, աշխատանքի արտադրողականության աճը չբարեկեցին լայն մասսաներին ապրանքներ մատակարարելը։

Մինչեռ կտակալիզմի որով արտադրության միջոցների ահութի մասը չօգտագործված ե մեռում։ Այսպիս, որինակ, ԱՄՆ-ում միջին հաշվով վերջին 10 տարում ձեռնարկություններն ոգտագործվում եյին միայն $67,5^0/_{\circ}$ -ով, Գերմանիայում— $53^0/_{\circ}$ -ով։

Այս որ ու գիշերվա մեջ մի հերթափոխություն հաշվելու գելքում միայն։

Իսկ որ ու գիշերվա մեջ յերկու հերթափոխություն հաշվելով՝ արգյունաբերության սարքավորումն ոգտագործվում եր Ամերիկայում միայն $34^0/_{\circ}$ -ով, իսկ Գերմանիայում—միայն $26,5^0/_{\circ}$ -ով։

Կապիտալիզմի որով հարստություններն ավելի ու ավելի յեն կենարունանում ամենահարուստ մարդկանց, խոշոր բանկերների, արեստների պարագլուխների ձեռքում։ Մանր բուրժուազիան քայլացիում ե։ Գյուղացիությունը զրկվում ե հողից։ Բանավոր դասակարգն ավելի ու ավելի յե աղքատանում։ Ժողովուրդն ապրանքներ գնելու համար փող չունի։ Այդ պատճառով արտադրությունը չի կարող զարգանալ։ Բայց քանի վոր արտադրությունը չի զարգանում, բանվորները մնում են առանց գործի և չեն կարող ապրանքներ գնել։ Այս կախարդված շրջագծից կապիտալիզմը չի կարող գուրս դար։

Կապիտալիզմն արգելք ե դարձել մարդկության զարգացման համար։ Առաջ շարժվելու համար անհրաժեշտ ե բուրժուազիայի տիրապետությունը տապալել։

ԱԶԳԱՅԻՆ ՃՆՇՄԱՆ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

Իմպերիալիստական տերությունները համաշխարհային պատերազմը մղում եյին ազգերին ազատագրելու լոգունգի տակ։ Սակայն պատերազմից հետո ազգային ճնշումը շարունակում ե գոյություն ունենալ առաջվա պես։ Նա անբաժանելի յե կապիտալիզմից։ Ցարիզմի որով վելիկոուսները ճնշում եյին լեհերին։ Այժմ պանական կենաստանում լեհերը ճնշում են ուղարկինացիներին, բելոռուսներին, լիտովյաներին, գերմանացիներին և հրեաներին։ Սիրեբերը ճնշում են խորվատներին և սլովեններին։ Խտալացիները—Հարավյային Տիրողում գերմանացիներին և այլն։

Մի քանի գաղութների տերերը փոխվեցին, բայց գաղութային ճնշումը մնաց առաջվա պես։ Նա անբաժանելի յե կապիտալիզմից։ Վերջին անկախ յերկիրն Աֆրիկայում—Հարեշստանը—նվաճված ու ստրկացված ե իստալական ֆաշիզմի կողմից, վերածված ե նրա գաղութի։ Մանջուրիան և չյուսիսային Չինաստանը հափշտակված են ճապոնական բանդիտների կողմից։ Ֆաշիզմը տարածում ե ամենավայրագ աղքային ճնշում, քարոզում ե ատելություն և թշնամություն աղքերի միջև, սպառնում

և մի շարք մանր պետությունների գոյությանը։ Հրեաների և ուրիշ ազգային փոքրամասնությունների ու ժողովուրդների գեմ առանձնապես գաղանային, մարդատյաց հալածանք մղում են գերմանական ֆաշիստները։

ՄԻԼԻՏԱՐԻԶՄՆ ԱՃԵՑ ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ, ԳԱՆ ՅԵՐԵՎԱԿԻՑԵ

Ֆաշիստական յերկրներում արգեն դպրոցների սկզբնական դասարաններում սկսվում ե յերեխանների զինվորական խստավարժեցումը։ Յերիտասարդությունն, ամբողջապես ուղղմականացված եւ Ամբողջ բնակչությունը, ներառյալ կանանց, նախապատրաստվում ե պատերազմին՝ սպասարկելու ֆրոնտում կամ թիկունքում։ Մշտական բանակների թիմն զգալիորեն ավելի շատ է, քան համաշխարհային պատերազմի նախորյակին։ Ռազմական նախապատրաստությունները տենդային թափով են տարփում։ Կապիտալիստական յերկրների վողջ տնտեսությունը լիովին յենթարկված է պատերազմի նախապատրաստման շահերին։ Ռազմական ծախսերն այժմ շատ ավելի բարձր են, քան մինչ համաշխարհային պատերազմը։

Ռազմական ծախսերը կազմում եյին (միլիոններով)։

	1913 թ.	1936 թ.
Անգլիա (Փունս ստերլինգ)	77	197
Գերմանիա (մարկ)	1479	10.000
Իտալիա (լիրա)	813	5840
Ճապոնիա (յեն)	192	1300
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (դոլար)	335	1217

Ռազմական ծախսերն ավելի ու ավելի միջոցներ են կլանում։ Դրա փոխարեն տնտեսական և կուլտուրական կարիքներին հատկացվելիք ծախսերը կրճատվում են։ Ճապոնիայի բյուջեյում 1936—37 թ. համար յելքի հիմնական հոգվածները կազմում եյին (միլիոն յեներով)։

Բանակ և նախառոմիո (ըստ նորմալ և արտակարգ բյուջեների) 1826 ժողովրդական լուսավորություն 143
Դյուզատնտեսություն և անտառաբուծություն 97

Փաստորեն ուղղմական ծախսերն ելավելի շատ են, վորովհետեւ կապիտալիստական յերկրների բյուջեյի ամեն մի հոգվածում թագնված են այս կամ այն ծախսերը ուղղմական նպատակների համար։

Միլիտարիզմի բեռն իր ամբողջ ծանրությամբ ընկնում ե կապիտալիստական յերկրների աշխատավորների ուսերի վրա։ Հարկերը տարեցտարի աճում են։

Յուրաքանչյուր քաղաքացյու վրա հարկ եր ընկնում։

	1913 թ.	1936 թ.
Գերմանիա (մարկ)	31	144
Իտալիա (լիրա)	54	380
Անգլիա (Փունս ստերլինգ)	3,5	15
Ամերիկայի Միացյալ Նահանգներ (դոլար)	6	28
Ճապոնիա (յեն)	6	13

Կապիտալիստական պետությունները խլում են գյուղացիների առանց այն ել խղճուկ յեկամուտի և բանվորների ցածր աշխատավարձի ավելի ու ավելի մեծ մասը։ Աշխատավորների դրությունն ել ավելի յե ծանրանում։

ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՀԱՓԵՑԾԱԿԻՉՆԵՐԸ ՀԱՄԱԾԽԱԲՀԱՑՄԻՆ ՆՈՐ ՊՈՏԵՐԱԶՄ ԵՆ ՀՐԱՀՐՈՒՄ

Համաշխարհային պատերազմը կեղծավորաբար «վերջին պատերազմ» ելին անվանում։ Իրականում ամբողջ հետպատերազմյան ժամանակը լցված է խոշոր և մասն պատերազմներով։ Այժմ արդեն յերկրագնդի բնակչուրյան մեկ յերրորդը պատերազմական դրույյան մեջ ե գտնվում։ Այժմ պատերազմում են։

Զինաստանը, վորն ունի	450 միլիոն բնակիչ
Ճապոնիան	70
Գերմանիան	66
Իտալիան	45
Իսպանիան	25
Հնդկամենը	656 միլիոն բնակիչ

Յերեք աշխարհամասերում — Ասիայում, Աֆրիկայում և Յեվրոպայում — արդեն յեռում ե պատերազմը։ Անորինակ լկարությամբ ու ցինիզմով գերմանական ֆաշիզմը, գաջնակցած իր իտալական, ճապոնական, լեհական յեղբայրակիցների հետ, նոր իմպերիալիստական պատերազմ ե պատրաստում։ Գերմանո-իտալական ինտերվենտներն իսպանիայում, ճապոնական հաֆշատակիչները Զինաստանում փաստորեն արդեն պատերազմ են մղում աշխարհի նոր բաժանման համար։ Նրանց նպատակն ե — ոտարի հողերը թալանչիորեն զավթել, դաժան դատաստան տեսնել բան-

վոր դասակարգի և ամբողջ աշխատավոր բնակչության նկատմամբ:

Ֆազիստական բանդիտները Խորհրդային Միության վրա հարձակվելու համար անընդհատ պլաններ են կառուցում: Նրանք առաջուց լրտեսներ, գիվելսանտներ, ֆասարարներ են ուղարկում մեր յերկիրը, ոգտագործելով վորպես իրենց ագենտուրա՝ արոցկիստական-բուխարինյան զաղբելի տականքը:

Խորհրդային հետախուզությունն ընկ. Յեժովի դեկավարությամբ ջախջախեց ճապոն-գերմանուարոց կիստական լրտեսներին: Հզոր կարսիր Բանակի հանդեպ զգացած սարսափը, սեփական յերկրներում ժողովրդական մասսաների հանդեպ զգացած յերկյուղը ֆաշիստական գիշատիչներին հետ են պահում ԽՍՀՄ վրա հարձակվելուց:

60941-67

II

ՔԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՂՔԱՏԱՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

ՄԱՍՍԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՄԶՐԿՈՒԹՅՈՒՆ

Գործազրկությունը բանվորների ամենասարսափելի պատուհան և կապիտալիստական յերկրներում: Վաղվա որվա առաջ զգացած աանջալից սարսափը շարունակ ճնշում ե բանվորին:


Գործազրկությունը թիվը փոխվում ե, նայած կապիտալիստական տնտեսության գրությանը տվյալ մոմենտին: Ճգնաժամի ժամանակ գործազրկությունը բանակը հսկայորեն աճում ե, տնտեսական գրության բարելավման դեպքում նա մի քիչ կրծատվում ե: Բայց կապիտալիստական տնտեսության նույնիսկ ամենամեծ վերելքի մոմենտներին բազմամիլիոն գործազրկությունը մնում ե: Ազգերի կիգայի տվյալներով գործազրկությունը թիվը 32 կապիտալիստական յերկրներում կազմում եր (միլիոններով).

1929 թ.	1930 թ.	1931 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.	1935 թ.	1936 թ.
6	12	19	26	26	22	21	20,5

Ընտանիքների անդամներին դրանց հետ հաշվելով, կապիտալիստական աշխարհի գործազրկությունը բանակը ներկա մոմենտին թվով հավասար է Խորհրդային Միության բնակչության կեսին: Ընդամենք հաշվի չեն առնվում գործազրկ բատրակները, տնային սպասավորները և այլն: Այսուհետեւ, այս թվի մեջ չեն մտնում Զինաստանի և Հնդկաստանի գործազրկությունը, վորտեղ ապրում ե ամբողջ կապիտալիստական աշխարհի բնակչության կեսը:

Անգլիայում վերջին 16 տարում միջին հաշվով յուրաքանչյուր յոթերորդ բանվորը գործազրկությունը եր, Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1936 թ.—ամեն մի վեցերորդը, Գերմանիայում 1929—1933 թ. թ. միջին հաշվով—յուրաքանչյուր չորրորդը: Նոր մեքենաների գործազրկությունը և աշխատանքի տեմպի արագացումը կրծատում են արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թիվը: Այսպես, որինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների խո-

ԽՍՀՄ և կապիտալիզմի Խրկմերը—2



շուր արդյունաբերության մեջ զբաղված բոլոր բանվորների թիվը
կազմում էր (հազարներով):

1919 թ.	9041
1929 »	8822
1936 »	7304

7304 հազար բանվոր 1936 թ. արտադրում էին մի քառոր-
դով ավելի շատ ապրանք, քան 9041 հազար բանվոր արտադրում
էին 1919 թ., բայց նրանք ստանում էին մի վեցերորդով ավե-
լի պակաս աշխատավարձ: Նշանակում ե, բանվորների թիվը
կրճատվում ե, իսկ նրանց շահագործելու աստիճանը մեծանում:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊՐՈՒՄ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԸ

Կապիտալիստական վոչշատ յերկրներում, որինակ, Ան-
գլիայում, գործազրկությունից կա պետական ապահովագրու-
թյուն. այդ յերկրներում գործազրուրկները ստանում են բոլորու-
վին աննշան նպաստ: Մի քանի յերկրներում արհմիություն-
ները փոքրիկ աջակցություն եին ցույց տալիս իրենց գործա-
զուրկ անդամներին, բայց այդ արհմիությունների միջոցները
ձգնաժամի տարիներին հարվեցին:

Յերկրների մեծ մասում գործազրուրկները լոկ վողորմու-
թյուն են ստանում մասնավոր բարեգործական ընկերություննե-
րից. նրանք ժամկետով կանդնում են յերկար հերթերի մեջ մի
պնակ սուպի համար: Նրանք ծախծիում են իրենց հագուստը,
տնային իրեղենները: Գործազրուրկներին գուրս են շպրտում բնա-
կարաններից: Հարյուր-հազարավոր գործազրուրկներ թափառում
են մեծ ձանապարհներին, վորոնում են աշխատանք, վողորմու-
թյուն են խնդրում, գողանում են: Գործազրուրկների անմիտթար
կյանքը ցայտուն կերպով նկարագրված ե բուրժուական գրող
Ա. Յունանին՝ «Ամերիկայի կործանումն առատությունից» գըր-
քում: Այդ գրքում նա հրապարակել է ամերիկական գործազրուրկ-
ների մի շարք նամակներ: Բասացի մեջ ենք բերում մի քանի
հատվածներ այդ նամակներից.

«1931 թ. յես ընդհանուր հաշվով աշխատեցի 5 որ: Մի ան-
դամ յես տեսա, վերջապես, մի հայտարարություն, վորն առա-
ջարկում էր ամուսնացած մարդկանց հաղորդել իրենց անունը
նավթարեր շրջաններում աշխատանք ստանալու համար: Յես այդ
կարգացի յերկուշարժի առավոտյան: 8 ժամ 50 րոպեյին յես ար-

գեն այնտեղ եյի: 2 ժ. 30 րոպեյին, վերջապես, իմ հերթը հա-
սավ: Ինձ տվին ամենաբազմազան հարցեր ե, վերջապես, ասա-
ցին, վոր յերեք շաբաթվա ընթացքում ինձ կհայտնեն: Յերեք
աբաթը վերածվեց արդեն վեց յերկար ամիսների: Յես միայն
նրա համար չմեռա սովից, վոր կինս դեռ աշխատանք ունիր»:
(Գործազրուրկ Պատ Դոգերտի, Լու-Անժելոս, Կալիֆորնիա):

«Յես վորեմ աշխատանք գտնելու հույս վազուց կորցրած
ծեր մարդ եմ: Յես այլև չեմ ձգտում աշխատանք գտնել, վորովհետե-
յես արդեն մեծ եմ այն հասակից, յերբ այդ առհասարակ հնա-
րավոր ե: Յես նույնիսկ չեմ կարող ճշտորեն ասել, թե քանի տա-
րի յե, վոր յես, խակապես ասած, աշխատանքի հետեւից եմ ընկ-
նում: Բայց յես չեմ վոր միշտ աշխատել եմ, յեթե միայն կարո-
ղացել եմ գեթ վորեմ աշխատանք ստանալ՝ հանգային ձեռնարկու-
թյուններում, խճուղիների վրա և անտառում: Իսկ այժմ յես, իմ
հասակում, հերթի յեմ կանգնած սուպի համար: Յես վերածվել
եմ այն բանին, ինչի կվերածվեն վորոշ ժամանակ անց ջահել յե-
րիտասարդները, վորոնք դեռ ելի հույս ունեն մի գեղեցիկ ոք
հարստանալ: Յես ծեր եմ, սովալուկ, տրորվել ու վողլուտել եմ:
Բայց յես կարող եմ քեզ ասել վոր վերջին յերկու շաբաթը յես
ման եմ յեկել ամբողջ յերկիրը, Սան-Ֆրանցիսկօյից մինչև Սան-
Խողե և Պուան-Ռեյս, ու ամեն տեղ տեսել եմ յերիտասարդ, ուժեղ,
աշխատանքի ձգտող տղաների, վորոնք նույնական ստորացել են,
ինչպես յես... Յես դեռ ելի կարող եմ աշխատել: Ընդամենը մի-
այն յերեք շաբաթ սրանից առաջ յես ստացա մի տեղ, վորտեղ
յես պետք ե վեր կենացի առավոտյան ժամի ծան և աշխատեցի
մինչև յերեկոյան ժամի 6-ը: Յես այս աշխատանքը, մեծ մա-
սմբ 12-ժամյա բանվորական որվա տեղությամբ, կատարում
եյի մեկ գոլլարով»: (Գործազրուրկ Մակ Կորնիկ, Սան-Ֆրանցիս-
կո, Կալիֆորնիա):

«Յես հանգագործ բանվոր եմ, բայց հանգային բոլոր ձեռ-
նարկությունները փակ են: Վերջերս յես դարձյալ Գրասվարլից
եյի գնացել, հանգահորում աշխատանք գտնելու համար... Յես ուղե-
վորվեցի Սոլո-Լեյկ-Սիտի՝ այնտեղից Պոլ-Սիտի գնալու համար...
Հետո յես շրջեցի ամբողջ Արևմուտքը, վոչ մի տեղ աշխատանք
չկա. վերջապես, յես յեկա այստեղ»: (Գործազրուրկ Թոմ Մուլի,
Սիտի, Վաշինգտոնի նահանգ):

«Յես պողպատ ձուլող եմ: Վերջին 30 տարում յես աշխա-
տում եյի պողպատաձուլական գործարաններում: Յերեք տարի

առաջ ինձ փողոց վռնդեցին, և այն որից յես արդեն աշխատանք չելի գտնում: Խնայած փողս վաղուց կերել եմ: Յերեկ յես քննեցի նավաշինարանի ծածկի տակ: Իհարկե, յես հերթի յեմ կանգնում սուպի համար «Հուվերի կաֆեյում»¹, ինչպես այն անվանում են տղաները: Յես շատ ել գոն չեմ սրանից: Յեթև մենք ինքներս վերցնելինք այս գործը մեր ձեռքը, ապա ավելի լավ ուտելիք կունենայինք: Յես արդեն աշխատանք չեմ վորոնում: Յես այն յեզրակացությանն եմ յեկել, վոր աշխարհը վերջացել ե և աշխատանքն ավարտված ե: Սա այն բոլորն ե, ինչ յես ուղում եյի ասել: Լավ ե, վոր կինս ու յերկու տղաներս—նույնպես գործադրուրկներ—մեռել են: Յես այժմ մենակ եմ: (Գործազուրկ Զարլի Դոյլ, Ֆենիքս, Արիզոնի նահանգ:)

«Յես ամուսնացած եմ: Արդեն յերկու տարի յե, 1931 թ. գարնանից, այն բանից հետո, ինչ յես աշխատում եյի բամբակի դաշտերում, յես աշխատանք չունեմ: Կինս ու յերկու յերեխաներս այժմ գնացել են Լոս-Անժելոս, վորովհետև յերեխաներից մեկը կարող ե այստեղ շաբաթական 12 զոլլար վաստակել: Նրանք դրանով են ապրում: Յես արդեն վաղուց հերթի յեմ կանգնել սուպի համար: Յերբեմն յես քննում եմ ապրանքատար վագոններում, յերբեմն ամայի տանը: Մի վորոշ ժամանակ յես աշխատում եյի աղբ դուրս տանելու վրա: Յուրաքանչյուր որ 50 կամ ավելի մարդ փորփրում եյին աղբը՝ վորհեն ուտելու բան գտնելու համար—հացի չորուկ, կաղամբի և մսի մնացորդներ: Բայց դեն շպրտածներից ամենալավ բաները ժամանակին վերցնում եյին աղբահան-բանվորները ծախելու համար: Յես կարող եմ քեզ ասել, վոր շատ քաղաքներում յես տեսա, թե ինչպես շատ, խիստ շատ ընտանիքներ ապրում եյին միայն նրանով, ինչ նրանք գտնում եյին աղբանոցներում: (Գործազուրկ Զարլի Լոգան, Ֆենիքս, Արիզոնի նահանգ:)

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիզմի որով ամենից ավելի անհույս ե յերիտասարդության վիճակը: Յերիտասարդները դպրոցներն ավարտում են, բայց աշխատանք չեն գտնում: Նրանք զբում են, վոր իրենք ավելից են, վոր հասարակությունը նրանց աշխատանքի կարիքը

¹ Այն աեղը, վարակեղ գործազուրկները մի բաժին անժուր սուպ են սպասնում, կատակով կոչված ե «Հուվերի կաֆե»՝ ԱՄՆ-ի նախկին նախագահ Հուվերի անունով:

չունի: Նրանք նստած են ծնողների վզին, վորոնք հաճախ իրենք ուտելու բան չունեն: Բայց ահա գործազուրկ յերիտասարդը թողեց ծնողական տունը: Նա կյանքի մեջ և մտնում վորպես անտուն թափառաշրջիկ, վորպես «ավելորդ բերան»: Հարյուր-հազարավոր գործազուրկ յերիտասարդներ թափառում են աշխարհի ամենաարուստ կապիտալիստական յերկրի—Ամերիկայի Միացյալ Նահանգների ճանապարհներին: Ահա թե ինչ ե գրում Վիեննայի մի թերթի թղթակից՝ Ֆ. Սուլպրը, վորը 1933 թ. շրջել ե այդ յերկիրը.

«Ոտարեկրացու վրա ծանր տպավորություն ե թողնում, յերք նա Միացյալ Նահանգների քաղաքներում հանդիպում ե մաշված, փոշոտված զգեստով, սովից և անքնությունից հյուծված դեմք ունեցող յերիտասարդների, վորոնք ճամբար (լագեր) են գնում հասարակական այգիներում կամ արվարձանների ծայրին:

Վհրտեղից ե առաջ գալիս այս թափառաշրջիկ յերիտասարդությունը: Դրանք մեծ մասամբ յերիտասարդ մարդիկ են 18-ից մինչև 21 տարեկան հասակի, վորոնք հեռացել են ծնողական տնից, վորտեղ կարիքն ու աղքատությունն ե թագավորում: Աշխատանք չգտնելով իրենց ծննդավայրում, նրանք հեռանում են՝ ճաշվորների (հախլենիկօվ) թիվը չշատացնելու համար: Հաճախ նույնիսկ իրենք ծնողները խորհուրդ են տալիս բախտ փորձելու վորեւ այլ տեղում: Այս յերիտասարդները բնավլ ամենաանընդունակները կամ անկուլտուրականները չեն: Վաշինգտոնի հասարակական խնամատարության վարչության կողմից հրապարակված վիճակագրական տվյալները ցույց են տալիս, վոր 7512 թափառաշրջիկներից, վորոնց 1932 թ. 3 ամսվա ընթացքում պետական նպաստ ե տրվել, 1966-ը հաճախել են ծողովդրական զպրոցները, 2 հազարը—միջնակարգները և 258-ը—բարձրագույն դպրոցները: Նրանց ամենաազատան թշնամին ցուրտն ե. Նրանք գերազասում են գիշերը յերթենեկել և ցերեկը քնել: Նրանցից շատերն ամենասարսափելի գրկանքներ են կրում, մեծ մասամբ շատ թեթև են հազնված, հաճախ են հիվանդանում: Իսկ հիվանդանոցները, բացառությամբ շատ լուրջ դեպքերի, իվիճակի չեն ընդունել նրանց՝ դերբեռնվածության պատճառով: Հյուսիսի ճանապարհներին համախ կարելի յե տեսնել ցրտից մեռած դժբախտների ղիակներ:

Ահա թե ինչի՞ յե հասցնում կապիտալի իշխանությունը:

ՎՈՐԱԿՅԵԼՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏԸ ՅԵՐԿԱՐԱՑԵՎ ԳՈՐԾԱՋՐԿՈՒԹՅԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔԱՎՈՐ

Յերկարատես գործազրկության տարիները վորակյալության կորուստի յեն հասցնում: Համատարած յերկույթ և, վոր ուսուցման դասընթացն ավարտելով, բանվորը ստիպված է սև աշխատանքի կպչել: Ձեռքերը կորցնում են ձեռք բերած հմտությունները: Իսկ չե վոր այդ ժամանակամիջոցում տեխնիկան առաջ ե գնում, գործադրության են գրվում մեքենաների նոր տեսակներ, աշխատանքի նոր յեղանակներ: Շատ գործազրուրկներ այնքան են ընկնում, վոր արդեն իվիճակի չեն նոր տեխնիկային հարմարվել: Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր հարյուր վորակյալ բանվորից, վորոնք ձգնաժամի ժամանակ իրենց աշխատանքի տեղը փոխել եյին, 78 բանվոր ստիպված եյին ավելի վատ վարձատրվող, վատորակ աշխատանքի անցնել:

Ահա թե ինչու այս տարի Միացյալ Նահանգներում, վորտեղ 8 միլիոն գործազրուրկ կա, վորակյալ բանվորների պակասություն և զգացվում: Ձգնաժամի ժամանակ ուսյալ շատ բանվորներ մեռան: Շատերն արդեն այն հասակին հասան, յերբ աշխատանքը կապիտալիստական գործարանում արդեն ուժից լեր ե: Շատերը գործազրկության յերկար տարիների ընթացքում իրենց վորակյալությունը կորցրին: Ձգնաժամի ժամանակ կապիտալիստաները բոլորովին դադարեցին նոր բանվորների սովորեցնել: Ահա թե վորտեղից ծագեց, չնայած հսկայական գործազրկությանը, վորակյալ բանվորական ուժի պակասությունը:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵջ ԶԲՈՂՎԱԾ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՂՔԱՏՈՅՈՒՄԸ

Մշտական մասսայական գործազրկությունը տանում և գեղարտադրության մեջ զբաղված բանվորների աշխատանքի պայմանների վատթարացում: Յերբ գործարանների դարպասների մոտ հաղարավոր գործազրուրկներ են խռնվում, կապիտալիստը հեշտությամբ կարող ե բանվոր վարձել ուղած պայմաններով: Համատարած յերկույթ ե, վոր բանվորը մեկ որ աշխատում ե, իսկ մյուս որը նստում ե առանց աշխատանքի: Յերբեմն ձեռնարկատերը բանվորներ ե վարձում աշխատանքային սեղոնի համար, իսկ ապա մի շաբաթ ամիսների ընթացքում նրանց պահում ե «վորպես պահստային», աշխատավարձ չվճարելով:

Առանձնապես ծանր ե բանվորների դրությունը ֆաշիստա-

կան յերկրներում—Գերմանիայում, Ճապոնիայում, Իտալիայում: Այստեղ բանվորները բոլորովին անպաշտպան են, այստեղ ամենաշիակատար կամայականությունն ու ապօրինությունն և թագավորում:

Գերմանիայում սկսած այն ժամանակից, ինչ ֆաշիստերն իշխանության գլուխ անցան (1933 թ.) արգելված ե աշխատավարձի ամեն մի բարձրացում: Վաստակից արված հանումները հարկերը վճարելու համար, «նվիրաբերումների» համար և այլն խիստ ամել են: Անընդհատ աճում և թանգությունը: Ներկայումս գերմանական բանվորն իր աշխատավարձով կարող ե գնել համենայն դեպս մի հինգերորդ մասով ավելի քիչ ապրանք, քան 5 տարի սրանից առաջ:

Զարհուրելի աղքատություն և թագավորում ֆաշիստական Պորտուգալիայում: Պաշտոնական տվյալներով ջուլհակ բանվորուն հիները աշխատանքային որվա համար 3 եսկուդո յին ստանում: Յեգիպտացրունի հացը Պորտուգալիայում արժե կիլոգրամը 1,25 եսկուդո: Այսպիսով, պարտավագական բանվորուն մի որվա աշխատավարձը հավասար ե մոտավորապես 2 կիլոգրամ յեզիրացրենի հացի: Բայց այս մուբացկանային աշխատավարձով ել գործ գտնելը դժվար ե: Զուր չե, վոր Պորտուգալիայում լայնորեն տարածված և այսպես կոչված «աշխատանքն ըստ բարեկամության» սա ձրի աշխատանք և միայն խղճուկ փորհացի համար:

Բանվորները ձապոնիայում, առանձնապես տեքստիլ գործարաններում, կիսաստրուկների դրությամբ են ապրում: Գյուղացիները պայմանագրով իրենց առջիկներին ծախում ևն գործարաններին մի քանի տարով: Բանվորունիներն ապրում են գործարանում աղքատիկ սնունդ: Նրանց արգելված ե ցերեկը կամ գիշերը հեռանալ գործարանի տեղոտորիայից: Ապրանքների այն քանակը, վոր ճապոնական բանվորն իր աշխատավարձով կարող ե գնել տարեցտարի կրատվում ե: Վերջին 6 տարվա ընթացքում, ըստ պաշտոնական վիճակգրության, գներն աճել են 17%՝ ու այնինչ աշխատավարձը միայն 3%՝ ու ու ե բարձրացել:

Առանձնապես ծանր ե բանվորների դրությունը գաղութային և կախյալ յերկրներում:

Գաղափներում մինչև ներկա ժամանակը գյուրդյուն ունի տերսող ստրկություն: Արեւլյան Աֆրիկայում գտնվող պորտուգալական գաղութի նահանգապետն ամեն տարի «մատակարարում ե» 100 հա-

դար նեղբարնիկներ Հարավային Աֆրիկայում գտնվող վոսկու հանքերի համար: Այս նեղբարնին հանքատերերը տեղավորում են հսկայական ճամբարներում, վորոնցից յուրաքանչյուրը 6400 մարդ և տեղավորում: Ճամբարները պատաժ են ցանկապատերով և ուժեղ պահպանության տակ են գտնվում: «Ճամբարային վոստիկանությունն» ամենաչնչին անհնազանդության դեպքում հաստ փայտերով և մտրակներով անդթաքար ծեծում են նեղբերին: Ամեն մի բանվոր ցերեկը և գիշերը ձախ ձեռքի դաստակի վրա պետք է կրի մետաղե համարանիշ: Նեղբերն աշխատում են գետանի տակ, 2 հազար մետր խորության վրա, 40 աստիճան ջերմության պայմաններում: Հսկիչները հետևում են, վոր նեղբերն արագ աշխատեն: Ամեն որ դժբախտ գեղքեր են տեղի ունենում: Զկա վոչ մի ապահովագրություն դժբախտ գեղքերից:

Հնդկաստանում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ որենքները միայն թղթի վրա գոյություն ունեն, վոչ վոք չի ստիպում կապիտալիստներին նրանց բանի տեղ դնելու: Բամբակեղենի գործարաններում բանվորական որը շարունակվում է առավոտյան ժամի 7-ից մինչև յերեկոյան 10 ժամ 30 ըովեն, այսինքն որական 14 ու կես ժամ, իսկ յերբեմն ել շարունակվում ե մինչև կես գիշեր: Աշխատում են առավելապես կանայք ու յերեխաները:

Հնդկաստանի բանվորների բնակարանային պայմանները սարսափելի յեն: Բոմբեյում, վորը 1200 հազար բնակիչ ունի, պաշտոնական վիճակագրության համաձայն բնակչության 97% պապատանել և խղճուկ, բնակվելու համար անպետք հյուղերում: Զարմանալի չե, վոր Բոմբեյում յերեխաների բառորդ մասը մեռնում է մի տարեկան չլուրձած:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԹԵՐԱՍՆՈՒՄԸ

Կապիտալիստական աշխարհում փչանում են մեծ քանակով մթերքներ, վորոնք գնորդներ չեն գտնում: Յեկ միենույն ժամանակ նույնիսկ ամենահարուստ յերկրներում, ինչպես են, որինակ, Անգլիան ու Ամերիկան, բանվորները թերի յեն սնվում:

Անգլիական խոշոր գիտնական, սննդի գիտահետազոտական ինստիտուտի գիրեկառը Որը իր գրքում, վորը լույս է տեսնել 1936 թ., հետևյալ յեղակացությանն ե գալիս.

Անգլիայի բնակչության կեսը չունի այնպիսի յեկամուտ, վորը բավական լինի սնվելու համար: Թերասնումն առանձնապես

ծանր և անդրադանում յերեխաների վրա: Լոնդոնի դպրոցական-ների 67—88% ունի կմախքի կառուցվածքի անկանոնություններ, 88—93% ատամները փչացած են բավականաչափ կաթչգործածելու պատճառով:

1932 թ. Նյու-Յորքի բանվորական արվարձաններում—Մանհատանում դպրոցականների մոտ 29% և Բրուքսում 23% տառապում եյին հյուծվածությունից:

Սովորաների հիվանդությունը—պելագրան—հարուսացյալ Նահանգներում տարեկան 4 հազար զոհեր և տանում:

Ֆաշիստների իշխանության գործում անցնելը խիստ կերպով սրեց պարենավորման գժվարությունները Գերմանիայում: Անգլամթերքների պակասությունը ֆաշիստական Գերմանիայում հանրածանոթ եւ Գերմանիայում պակաս ե յուղը, ձուն, միսը, հացը: Արդեն ճարպեղենի քարտեր են մացված: Սպասվում ե, վոր հացի քարտեր կմտցվեն: Ցորենի և համարի հացի յեղիպտացորենի ալյուր են խառնում:

Զինաստանում սովորաներին ոգնություն հասցնող կոմիտեյի տվյալներով յերկրում կային սովորաներ (միլիոններով):

1927 թ.	9
1928	»	37
1929	»	57
1930	»	71

1916 թ. Ճապոնիայում բոլոր զինապարտների 75% պիտանի յեր համարվում զինվորական ծառայության համար: 1936 թվին պիտանիները միայն 55% եյին: Անպետք ճանաչված նորակոչիկների մեծամասնությունը պիտանի չեր զինվորական ծառայության համար հյուծվածության հետեանքով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՏԵՄՊԵՐԸ

Շահի հետեկոց ընկնելով, կապիտալիստները ձգտում են վորքան կարելի յե քիչ ծախսել աշխատավարձի վրա և բանվորներին ստիպում են վորքան կարելի յե շատ աշխատանք կատարել: Դրա համար նրանք ավելի ու ավելի յեն արագացնում աշխատանքի տեմպը (արագությունը)՝ մեքենաների ավելի արագ շարժվելու միջոցով: Ով չի կարող գիմանալ կապիտալիստական գործարանում կատարվող աշխատանքի կատարի արագությանը, նրան շղթառում են փողոց գործազուրկների մեջ. նրա տեղը ցան-

Կացող հազարավոր մարդիկ կգտնվեն: Ամերիկական ավտոմոբիլային գործարաններում կոնվեյերի մոտ աշխատող բանվորները ժամանակ չունեն նույնիսկ արտաքնոց գնալու կամ մի բաժակ ջուր խմելու: Կապիտալիզմն անողոք և բանվորի առողջության և կյանքի նկատմամբ: Բանվորի կյանքն ամենաեժան ապրանքն և կապիտալիստի համար: Սպանվածի կամ շարքից դուրս յեկածի տեղը իսկույն ենթ տասնյակ նոր վարձու ստրուկներ են հայտնը վում:

Վորտեղ կոնվեյեր չկա, գործարքային այնպիսի գնահատումներ են սահմանվում, վորոնց ժամանակ բանվորները ստիպված են կատաղի տեմպով աշխատել: Յեթե բանվորը նորմայից պակաս արտադրի, իջեցվում և գործարքային ամբողջ աշխատանքի վարձը: Գործարքային գնահատումները սովորաբար սահմանվում են յելնելով ամենից ավելի հմուտ և ճարպիկ բանվորների արտադրանքից: Ապրուստի մինիմումը վաստակելու համար բանվորները ստիպված են իրենց ուժերը ծայր աստիճան լարել:

Աշխատանքի կարծանարար տեմպը կապիտալիստին տալիս ե աշխատավարձի խնայողություն, իսկ բանվորների համար նա նետնակում ե առողջության բայցայում, աջատանակության վաղաժամ կորուս, ավելի ու ավելի հանախակի դժբախտ դեպքեր արտադրության մեջ:

Այսպես, որինակ, ճապոնական մանածագործուհիների աշխատավարձի միջին մակարդակը 1920 թ. կազմում եր որական 1,1 յեն, իսկ 1933 թ.—0,75 յեն: Մեկ բանվորուհին 1920 թ. 29 իլիկի յեր սպասարկում, 1933 թ.—61 իլիկի և որական արտադրում եր 1920 թ. 19 ֆունտ մանվածք, 1933 թ.—28 ֆունտ: Հետեարար, բանվորուհիների աշխատավարձը պակասում ե, իսկ նրանց շահագործման աստիճանը բարձրանում ե:

Ամերիկական գործարանների գարպասներին սովորաբար կախված են այսպիսի ցուցանակներ.

«Մենք աշխատանքի չենք վերցնում 40 տարեկանից մեծ հասակ ունեցող բանվորներին»:

Բառասնամյա բանվորի համար աշխատանքի կատաղի տեմպն արդեն ուժից վեր ե: Իսկ վերջին ժամանակներն արդեն դադարում են նույնիսկ 35 տարեկանից մեծ բանվորներ վարձել Համախ բանվորները կեղծում են իրենց փաստաթղթերը՝ իրենց հասակը փոքրացնելու համար: Շատ բանվորներ, վորոնք ալեներ են դառնում 40 տարուն մոտենալով, մազերը ներկում են՝ ավելի

յերիտասարդ յերեալու համար: Ծերն աշխատանք ստանալու հույս չպետք ե ունենա:

Աշխատանքի կործանարար տեմպն ու անբավարար սնունդը վաղաժամ քայլայում են բանվորների առողջությունը: Նույնիսկ ֆաշիստական բժիշկները ստիպված են խոստովանել, վոր Գերմանիայում բանվորները 40 տարուն մոտենալով, իսկ բանվորուհիները նույնիսկ 30 տարուն մոտենալով արդեն չունեն լրիվ աշխատունակություն: Հաճախ արդեն այս հասակում բանվորներն ու բանվորուհիները ստիպված են իրենց պլրովեսիան թողնել:

Թուլացած, հյուծված որգանիզմը կորցնում է դիմադրողականությունը: Դժբախտ գեպքերի թիմս արտադրության մեջ անում ե: 1935 թ. Գերմանիայում արտադրության մեջ ավելի քան 88 հազար ծանր գժբախտ գեպքեր յեղան (այսինքն այնպիսիները, վորոնց ժամանակ աշխատունակությունը կորչում է ավելի քան 3 ամիս ժամանակով), իսկ 1936 թ. արդեն 99 հազար: Գերմանիայում յուրաքանչյուր հազար բանվորին ընկնում եր արտադրության մեջ պատահած գժբախտ գեպքերի հետեյալ թիվը.

1913 թ.	1932 թ.	1934 թ.	1936 թ.
61	64	79	87

Առանձնապես խիստ կերպով աճեց գժբախտ գեպքերի թիմս արտադրության մեջ յերիտասարդների շրջանում: Վերջին մի քանի տարում նա ավելի քան կրկնապատկվեց:

Արտադրության մեջ պատահած գժբախտ գեպքերի զոհ դարձած բանվորների մեծամասնությունը վոչ մի նպաստ չի ստանում:

Արտադրության մեջ տուժած յուրաքանչյուր հարյուր բանվորից հատուցում են ստացել.

1922 թ.	1932 թ.	1934 թ.	1936 թ.
18	11	7	6

Միենալոյն ժամանակ շահագործող դասակարգերի մարդիկ աչքի յեն ընկնում մեծ յերկարակեցությամբ: Բանվորը սովորաբար արդեն 40 տարուն մոտենալիս ծեր և յերեսում: Ընդհակառակն, Անգլիայում քաղաքական գործիչը սովորաբար կարող է մինիստրական պաշտոնի հավակնություն ունենալ միայն այն ժամանակ, յերբ նա 50 տարեկանից անց ե: Նախկին անգլիական վարչապետ Լոյդ-Ջորջը, վորն արդեն 74 տարեկան ե, յեռուն գործունեյություն և զարգացնում, վորպեսի նորից վարչապետ

դառնաւ Նախկին ֆրանսական վարչապետ Տարդյեն նորերս ամսուսնացավ 64 տարեկան հասակում: Ամերիկական միլիարդեր Ռոկ-Փելլերը մեռավ 98 տարեկան հասակում:

Բուրժուազիայի գործիչները չեն մոռանում իրենց առողջության մասին նույնիսկ ամենածանր ժամանակներում: Լոյդ-Ջորջը, լինելով ռազմական մատակարարման մինիստր համաշխարհային պատերազմի ժամանակ, ամեն որ մի ժամ հատկացնում եր գնդակ խաղալուն: Համաշխարհային պատերազմին գերմանական գլուխոր հրամանատար Հինդենբուրգը նույնիսկ ամենածանր ճակատամարտերի որերին մեկական ժամ զբոսանք եր կատարում ձիով: Միայն պրոլետարներին ե վիճակված վաղաժամ մեռնել հյուծվածությունից, պակաս սննդից և իմպերիալիստական պատերազմների ֆրոնտներում:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԻՐԱՎԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Բուրժուական դեմոկրատիայի յերկրներում բանվորներն այնուամենայնիվ կարող են քաղաքական իրավունքներն ողտագործել աշխատանքի պայմանների վատթարացման դեմ պայքարելու համար:

Ֆաշիստական յերկրներում բանվորները բոլորովին իրավագործ են: Արհմիությունները ջախջախված են: Գործարաններում թագավորում ե կապիտալիստների և նրանց հսկչների ամենալիակատար կամայականությունը: Կոլեկտիվ պայմանագրերը լիովին վերացված են: Վերպետից և կախված, թե ինչ աշխատավարձ կտանա բանվորը: Աշխատավարձի բարձրացումն արգելված է: Գործադուլներն արգելված են: Այս տաժանակրությունը ֆաշիստներն անվանում են «զասակարգային կովի վոչնչացում»: Բանվորների ժողովներն արգելված են և պատժվում են վորպես պետական հանցագործություն: Սոցիալ-դեմոկրատական ու կոմունիստական կուսակցությունները քշված են խորն ընդհատակ: Բանվորական մամուլը ջախջախված է: Ամբողջ մամուլը գտնվում ե խստագույն գրաքննության տակ: Բանվորն իրավունք չունի աշխատանքի տեղը փոխելու առանց իշխանությունների թույլտվության:

Յերկիրը հեղեղված ե լրտեսներով, գաղտնի վոստիկանության գործակալներով: Քննադատության մի խոսքի համար բան-

վորներին նետում են բանտերը, ուզարկում համակենտրոնացման համբարները: Վայրագ արյունալից տեսոր ե թագավորում: Միայն գաղանային տեսորով ե բուրժուազիային գեռ հաջողվում իր տիրապետությունը պահպանել:

ՏԻՐԱՊԵՏՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԵՐԻ ՊԵՐՃԱՆՔԸ

Մինչդեռ բանվոր դասակարգը տառապում ե սովից ու կարիքից, տիրապետող դասակարգերը լողում են չլված պերճանքի մեջ:

Անգլիական լորդերից շատերը մի քանի հարյուր հոգի տեղին ապասվոր են պահում: Անգլիական հարուստը սովորաբար ունի մի առանձնաշեն տուն լուսունում՝ 30—40 սենյակից բաղկացած, մեկ կամ մի քանի հսկայական պալատներ իր կալվածքներում, վորտեղ նա զվարձանում ե վորսորդությամբ և սպորտով, ունի վիլա Շվեյցարիայում, Հարավային Ֆրանսիայում կամ Իտալիայում, վորտեղ նա «հանգստանում ե» պարապությունից:

Ընտանիքը յուրաքանչյուր անդամ ունի իր ավտոմոբիլը, իր շոֆերը, լակեյների, սամիշտների, քարտուղարների, կոմպանյոնունիների, տնտեսունիների, շեֆ-խոհարարների, խոհարարուհիների մի ամբողջ բազմություն: Յերեխաններն ունեն իրենց դայակները, տնային ուսուցիչները, սպորտի հրահանգիչները և այլն: Բուրժուան ձանապարհորդում ե սպասավոր-սպասունիների ամբողջ շքախմբերով: Կալվածքներում մշտապես պահվում ե վորսկան շնապանների, ձիապանների, կառապանների, այգեպանների և այլոց շտատ: Կապիտալիստներից շատերն ունեն զվարձանքի ծառայող զբոսանավեր՝ մշտապես վարձատրվող անձնակազմով. շատերը պահում են արշավի ձիեր, վորոնք նրանց վրա տարեկան մի քանի միլիոն առւրիլի յեն նստում:

Ամերիկական միլիոնատերների և միլիարդատերների պերճանքը կատարյալ անհեթեթությունների յե հասնում: Նրանք ուղակի չգիտեն, թե ինչի վրա ծախսեն փողը: Ամերիկական միլիոնատերներից շատերը շրջում են վուկեղոն ավտոմոբիլներով, կանայք գնում են Փարիզ՝ իրենց համար վերջին մոդայի հագուստ պատվիրելու, մաղերը ներկելու, միլիոններ արժեցող զարդարանքներով իրենց զարդարելու: Բուրժուազիայի և նրա պնակալեզների խենթություններն ու քմահաճույքներն ուղղակի անսահման են: Հարուստների շատերն ավելի լավ են ապրում, իտն բանվորների

Անձ մասը: Նրանց խնամքով կերակրում են, լողացնում, սանրում, դրունելու տանում: Փարիզում, Լոնգոնում և ուրիշ քաղաքներում կան առանձին ռեստորաններ ջների համար, հատուկ հիվանդանոցներ, վարսավիրանոցներ, մողայի խանութներ, ջների շքեղ գերեզմանոցներ, վորոնք դարձարված են լավագույն նկարիչների գործերով:

III

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԸ ԿԱՊԻՏԱԼԻՄ- ՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

ՀՈԴԻ ՍՈՎԸ

Գյուղացիները կազմում են կապիտալիստական աշխարհի բնակչության մեծամասնությունը: Յեկամենուրեք, ուր կապիտալն և թագավորում, պատկերը նույնն ե՝ գյուղացիությունը խիստ տառապում և սակավաճաղությունից: Հողի մեծագույն մասը պատկանում է խոշոր հողատերերին—կալվածատերերին, յեկեղեցուն, գործարանատերերին, կուլակներին: Հարյուրավոր միլիոն գյուղացիներ այնքան հող չունեն, վոր բավական լինի իրենց ընտանիքը կերակրելու համար:

Վեցնենք որինակի համար Գերմանիան:

2700	հազար	գերմանական	տնտեսություն.	ունեն	$1/2$	հեկտարից պակաս հող
849	»	»	»	»	$1/2$ -ից մինչև 2	հեկտար հող
797	»	»	»	»	2 -ից մինչև 5	»

Այս չորս միլիոնից ավելի տնտեսությունները միասին ունեն ընդամենը հողի 10^9 -ը:

Միևնույն ժամանակ Գերմանիայում հաշվում ե 34 հազար խոշոր տնտեսություն, ամեն մեկը 100 հեկտար հողից ավելի ծավալով: Այս տնտեսությունները տիրում են ամբողջ հողի 37 , $8^0/_{\circ}$ -ին:

412 խոշորագույն կալվածատերերը Գերմանիայում տիրում են հողի նույն քանակին, վորքան $2^{1/2}$ միլիոն մանր և մանրագույն հողային սեփականատերերը:

Այս խոշոր կալվածատերերի մեծամասնությունը—կոմսերը, իշխանները, դուքսերն են: 1918 թ. հեղափոխությունը տապալեց գերմանական կայզերին ու իշխաններին, բայց թողեց նրանց իրենց «անձնական գույքը»: Նրանք այս ըստեյին ել դեռ Գերմանիայում տեր են մնում հողի մեծ մասին:

ՀՈՂԱՏԵՐԵՐԻ ԱՆՈՒՆԵՐԸ

Նրանց հողերի
առաջնություն
մեծությունը
(հեկտարներով)

Վիլհելմ II Հոհենցոլերն, նախկ. գերմանական կայսր	97043
Ֆրիդրիխ I Լեոպոլդ, պրուսական արքայազն	25042
Ֆրիդրիխ Ազգուստ, նախկ. ապօպնական թագավոր	21945
Ֆրիդրիխ Վիլհելմ, իշխան Հոհենցոլերն-Զիգմարինդեն	46036
Ֆրիդրիխ Կառլ, իշխան Հոհենոյե-Երինդեն	48221
Ենքելբերա Մարիա, դուքս Փոն-Ալեքսերա. Նորդկիրխեն	27842
Ֆրիդրիխ, դուքս ֆոն Անհամ-Դիսասու	29300
Ֆրիդրիխ Երնստ ֆոն Ստոլբերգ-Վերնիդերողե	36739

Անգլիայում մինչև ներկա ժամանակը հողը համարյա ամբողջությամբ գտնվում է պալատական տոհմերի ձեռքում: Ահա զին հողամասեր չեն մշակվում. դրանք դատարկավայր են՝ վորովորդության համար, լորդերի փոռն զվարճությունների համար:

Հունգարիայում գյուղացիներին պատկանում է հողի միայն 11%՝ իտորագույն կալվածատերերի մի չնչին խումբ (ընդամենը բոլոր հողային սեփականատերերի միայն 6,2%) իր ձեռքում պահում հողի 66%՝ Կան կալվածատերեր, վորոնք տիրում են ափելի քան 100 հազար հեկտար հրաշալի հողի:

Ավստրիայում խոշոր հողատերերը, վորոնց թիվը կազմում է բոլոր հողային սեփականատերերի միայն 1,4%՝ տիրում են ամբողջ հողի 46%՝ ինչ Հողատերերի կեսը մանր գյուղացիներ են, բայց նրանց պատկանում է ընդամենը հողի միայն 6%:

Նույնն է գրությունը Լեհաստանում: Իշխաններ Ռաձիվիլները, Սալեզաները, «պայծառափայլ» պաները տիրում են ամենալավագույն հոկայական հողամասերին: Իսկ գյուղացիներն ուժաւ են լինում հողի խզուկ կոտրների վրա:

Ճապոնիայում խոշոր կալվածատերերը կազմում են բոլոր հողային սեփականատերերի 1%՝ Բայց նրանց պատկանում է հողի 26%՝ Ճապոնական կայսրն իր ընտանիքի հետ միասին ունի մեկ ու կես միլիոն հեկտար լավագույն հող: Իսկ յերկու և կես միլիոն գյուղացիական տնտեսություններից ամեն մեկն ունի կես հեկտարից պակաս: Նրանք բոլորը միասին ավելի քիչ հող ունեն, քան միայն կայսրը: Գյուղացիների ձեռքին, վորոնք բոլոր հողային սեփականատերերի 93% են կազմում, հողի միայն կեսն ե գտնվում: Գյուղացիների մի յերրորդն առհասա-

ցակ իր հողը չունի. գյուղացիների մնացած մասսան ունի կեսից մինչեւ մեկ հեկտար սեփական հող:

Բոլոր բուրժուական յերկրներում մենք նույն պատկերն ենք տեսնում: Մի բուռ կալվածատերեր տիրանում են լավագույն հողին, իսկ աշխատավոր գյուղացիներն իրենց ամբողջ կյանքում ուժաւագան լինում, աշխատելով մուրացկանային հողակտորների վրա:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԽԱԲԵԼ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Գյուղացիությունը վաղ ժամանակներից դժգոհ է հողի անարդար բաշխումից: Համաշխարհային պատերազմի ժամանակ գյուղացիներին, վորոնք զինվորի համարդեստ եյին հագել, հանգիստավորապես խոստացան, վոր հաղթությունից հետո նրանց հող կտան ի հաշվիվ կալվածատիրական սեփականությունների:

Պատերազմից հետո կապիտալիստական շատ յերկրներում մարդկանց խարելու համար հանձնաժողովներ կազմվեցին պետական չինովիլիներից: Սկսվեց մի քաշկոտուք՝ ցուցակներ, հարցաթերթեր, պլաններ կազմելու շուրջը: Թղթի սարեր գրութեցին: Ապա նոր հանձնաժողովները զբաղվեցին նույն ձևով թուղթ մրոտելով, իբր թե պարզելու, թե վար հողամասերը պիտանի յեն գյուղացիների միջև բաժանելու համար, ինչքան կարգենան այդ հողերը և այլն: Այսպես աղմուկի տակ քիչ տարիներ չանցան, իսկ գործը համարյա չշարժվեց տեղից:

Վերջինիքը բաժանման ցուցակի մեջ ընկալ կալվածատիրական հողի չնչին մասը: Բայց սրա համար ել կալվածատերերը պետությունից առաջ վարձ ստացան: Իսկ կալվածատերերից գնված հողերը բնավ աշխատավոր գյուղացիներին բաժին չընկան, այլ ոլխավորապես նախկին սպաններին, չինովիլիներին, ժանդարմաներին, կուլակներին: Բայց այն աշխատավոր գյուղացիներն ել, վորոնց հաջողվեց հող ստանալ չկարողացան հողն իրենց ձեռքին պահել: Նրանք չունեյին յերկրագործական գործիքներ, չունեյին անասուն: Հող ստանալով, նրանց վիճակվեց հենց միանգամից պարտքերի մեջ խրվել: Մի կերպ մշակված հողի բերքը տարեցտարի ընկնում եր: Բանը վերջանում եր նրանով, վոր հողը կամ պետությունները՝ պարտքերի դիմաց: Գյուղացիները կապի-

տալիստական յերկրներում առաջվա պես տառապում են ստկավահողությունից: Հողի սովը նույնիսկ ել ավելի յե սրբել վորովնետև վերջին յերկու տասնյակ տարիներում միլիոնավոր գյուղացիներ քայլայլեցին ու իրենց հողը կորցրին:

ԳՅՈՒՂԱՑՈՒՆ ՊԼՈԿՈՒՄ ԵՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆ ՈՒ
ՏԱԲՐԻԿԱՆՏԸ

Համաշխարհային պատերազմից հետո գյուղացիների դրությունը բոլոր կապիտալիստական յերկրներում վատթարացավ: Սուանձնապես խիստ վատթարացում եր նկատվում անդրովիխանյան յերկրներում — Ամերիկայում, Ավստրալիայում: Այստեղ համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցավ հատիկային կուլտուրաների տարածությունների խիստ ընդարձակում: Բանակները հացի և մսի կարիք ունեցին: Պատերազմով յերկրները բարձր դներ եյին վճարում սննդամթերքների համար: Մրա կապակցությամբ սկսեցին հողս ավելի թանդ ծախել: Այսպիսով գյուղացիները շատ պարագեր արին: Բայց յերբ պատերազմը վերջացավ, գյուղատնտեսության մթերքների պահանջարկը խիստ ընկափ: Կուտակվեցին այլ մթերքների ահազին պաշարներ: Գյուղատնտեսական մթերքների մհծածախ դները խիստ ցածրացան: Որինակ, Ամերիկայում — համարյա յերեք անգամ պատերազմից հետո: Դների նույնպիսի իջեցում տեղի ունեցավ լեհաստանում, Հունգարիայում, Բալկաններում — ամենուրեք, վորտեղ գյուղատնտեսական ապրանքներն արտադրվում եյին արտահանելու համար:

Գյուղացիներն ընկան առանձնապես ծանր դրության մեջ: Իրենց մթերքների համար նրանք յերեք անգամ ավելի քիչ փող եյին ստանում, քան առաջ: Բայց պարտքերի վճարումները և հարկերը չնվազեցին, այլ ընդհակառակը, մեծացան:

Գյուղացիները ստիպված են իրենց ապրանքները չնչին գնով ծախել: Բայց այս չի նշանակում, թե քաղաքային սպառողը վայելում և եժան հաց, միս, կաթ: Կապիտալիստական յերկրներում գյուղացու և քաղաքային սպառողի միջև կանգնած և միջնորդների — առեւրականների, խոշոց էսպիտալիստների — մի ամբողջ վոհմակ: Հենց նրանք են գոփում բոլոր ոգուտները, քայլացիով գյուղացիներին և պլոկերով քաղաքային սպառողներին: Տարբերությունն այն գների միջև, վորոնցով գյուղացին:

Ճախում ե, իսկ քաղաքային բանվորը գնում և գյուղատնտեսական ապրանքները, ահագին չափեր և ընդունել: Ամերիկական ֆերմերը (գյուղացին) պտուղների և բանջարեղենի համար ստանում և ընդամենը 30%՝ այն դնի, վոր քաղաքային սպառողի կողմից և վճարվում, կաթի համար — 40%՝ ընտանի թուզունի համար — 45%՝ անասունի համար — 55%՝ Բեռլինում սպառողը կարտոֆիլ գնելիս յերկու անգամ ավելի յե վճարում, քան գյուղացին ստանում և այդ նույն կարտոֆիլի համար:

Գյուղացու և քաղաքային սպառողի միջև յեղած շղթայի առաջին ողակը մեծագնորդն ե, վերջին ողակը — մանրավաճառ առևտրականը: Նրանց միջև գտնվում են մեծավաճառորդներ, գործականներ, կոմիսիոններ, մակերներ, աճուրդներ, տրանսպորտային ընկերություններ, գործարաններ, պահեստներ, եկամուտներ, բանկեր և այլն:

«Գյուղացին, վորին մի տարի յե հարկավոր ցորեն արտադրելու համար և մի քանի տարի՝ անասուն մեծացնելու համար, վերջին հաշվով իր ծանր աշխատանքի և իր ենրդրած կապիտալի համար ավելի քիչ և ստանում, բայց միջնորդը», — գրում ե մի Քրանսացի գիտնական:

Այսպիսով, պետությունը, կալվածատերերը, վաշխառուները, միջնորդները գյուղատնտեսական ճնաժամն ոգտագործում են, վորպեսզի գյուղացիներին ել ավելի չարաչար շահագործեն, քան առաջ:

Առանձնապես ծանր դրության մեջ ընկան գյուղացի-վարձականները: Պատերազմի ժամանակ և հետպատերազմյան առաջին տարիներին նրանք հողամասեր վարձակալեցին բարձր գնով: Ճնաժամի պայմաններում նրանք արդեն չեյին կարող վարձագինը վճարել Երանց սկսեցին մասսաներով հեռացնել հողից, նրանց գույքն աճուրդով ծախել բոլորովին քայլայիլ:

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆՈՒՄ Ե ԻՐ ՀՈՂԸ ՔՅԵՔԱՅՎՈՒՄ Ե

Գյուղացիները համառորեն պայմանական առաջարևում եյին ճնաժամի դեմ: Նրանք աշխատում եյին մինչև ուժասպառություն և ստիպում եյին աշխատել իրենց յերեխաններին: Նրանք խնայողություն եյին անում ամեն բանից, ինչից միայն կարող եյին: Նրանք բոլոր ուժերը լարում եյին, վորպեսզի իրենց աղարակը, իրենց հողը փրկեն: Սակայն նրանց ջանքերն աղարդյուն եյին: Մի-

Մոնավոր գյուղացիների քշեցին հողից: Միլիոնավոր նախկին հողային սեփականատերեր վարձակալների վերածվեցին:

Գյուղացիների մասսայական քայլայման առանձնապես ցայտուն պատկերը մենք տեսնում ենք հարուստ Ամերիկայում:

Ամերիկական 100 ֆերմերներից վարձակալներ ենին.

1880 թ.
26

1900 թ.
35

1920 թ.
38

1935 թ.
42

Վերջին տաս տարում Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամեն տարի միջին հաշվով 40 հազար ֆերմերներ զբկվում եյին իրենց հողից, վերածվելով վարձակալների ու գյուղատնտեսական բանվորների:

Յեզ այսպես, ամերիկական ամեն հինգ ֆերմերից այս ըուպեյին արդեն յերկուսը հողագուրկ են, վորոնք հարկադրված են հողը վարձակալել: Ֆերմերներից շատերը մինչև այն աստիճան խրվել են պարտքերի մեջ, վոր նրանց հասույթները հազիվ են բավականացնում միայն ուտելիքի: Ամբողջ յեկամուտը պարտքատերերի ձեռքն ե ընկնում:

Ֆերմերներն իրենց հողը կորցնում են գլխավորապես այն պատճառով, վոր նրանք իւլինակի չեն իրենց պարտքերը վճարելու: 1933—1935 թ.թ. 800 հազար ամերիկական ֆերմերների հողը ծախվեց աճուրդով:

Իսկ հետման ձեռքն ե ընկնում ֆերմերների կորցրած հողը:

Այն գրավում են բանկերը, ապահովագրական ընկերությունները, պետությունը, կալվածատերերը:

Պարտքերը չվճարելու համար վորպես սեփականություն անցավ բանկերին՝ 1929 թ. 7 հազար ֆերմերական ազարակ, 1932 թ.—18 հազար, իսկ 1936 թ.—30 հազար:

Բանկերից հետո քայլայմած ֆերմերների հողը գրավում են ապահովագրական ընկերությունները: Այս կողոպուտի մեջ հետ չի մնում նաև պետությունը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Միսսիսիպի նահանգի իշխանությունները 1932 թ. առաջին յերեք յեռամսյակում հարկերը չվճարելու համար գրավեցին 60 հազար ֆերմա:

Միշիգանում իշխանություններին 1,5 միլիոն հեկտար հող ե պատկանում: Դա ֆերմերների հողն ե, վորը հարկերը չվճարելու համար աճուրդով ծախվել ե:

Գյուղացիները կորցնում են հողը: Դրա փոխարեն կալվա-

ծատիրական հողատիրությունն արագորեն աճում ե: 400 հեկտարից ավելի մեծությամբ կալվածատիրական ազարակները Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամբողջ հողի հետևյալ մասն եյին կազմում:

1910 թ.
19%

1920 թ.
23%

1930 թ.
28%

1935 թ.
29%

Բուրժուազիայի պաշտպանները—մենչեկներն ու եսերները ստապատիր առասպելներ եյին տարածում, վոր իբր թե կապիտալիզմի որով գյուղացիական տնտեսությունը կարող ե հաջողությամբ զարգանալ: Նրանք ապացուցում եյին, վոր գյուղացիական մանր տնտեսությունը հաղթում ե խոշոր տնտեսությանը: Բայց փաստերն ամեն որ ցույց էն տալիս, վոր կապիտալիզմի որով գյուղացիական մանր տնտեսությունը դատապարտված ե պղքատության և քայլայման:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ՃԳՆԱԺԱՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Յեթե ճգնաժամի ժամանակ ֆաբրիկան կամ գործարանը զամանակում ե աշխատում, ապա կապիտալիստը ձեռնարկությունը փակում ե և բանվորներին փողոց ե շարունակ: Նա կարող ե ավելի լավ ժամանակների սպասել վորովհետև կուտակած կապիտալ ունի: Գյուղացին ստիպված ե իր հողերը մշակել նույնիսկ այն ժամանակ, յերբ այդ նրան վնաս ե բերում: Չե վոր նա, միենալուն ե, պետք ե տոկոսներ վճարի վաշխառություն, հարկեր վճարի պետությանը և տեղական ինքնավարությանը, նա պետք ե իր լծկան անասունը կերակրի: Նրա տունը, նրա արտազրության գործիքները մաշվում են: Իսկ վոր գլխավորն ե—ինչով ապրի գյուղացին, յեթե իր հողը մշակելուց ձեռք քաշի: Վարձու աշխատանք նա չի կարող ստանալ—չե վոր բանվորական ուժի շուկան առանց այդ ել գործազուրկներով լեփ-լեցուն ե: Գյուղացին կամա թե ակամա ստիպված ե աշխատել, նույնիսկ յեթե այդ նրա համար վնասաբեր ե:

Ամեն տեղ գյուղացին իր ծանր աշխատանքով ավելի քիչ ե վաստակում, քան վարձու բանվորը: Նրա տնտեսությունը կործանվում ե: Յեթե վորեւ գործիք կոտրվում ե, նորոգելու համար փողը չի բավականացնում: Յեթե գյուղացու լծկան ձին սատկի,

նա արդեն ուժ չունի նորը գնելու։ Գյուղացու ինվենտարը մաշ-վում է, հողն ուժից ընկնում, բերքը նվազում։ Վերջիվերջո բաղ-մամյա հուսահատական պայքարից հետո գյուղացին քայլաց-վում է։

Թե վեր աստիճանի խղճուկ և կապիտալիստական յերկրնե-րի գյուղացիական անտեսությունը, յերևում և հետեւալ փառ-տերից։

Տրակտորներ, կոմբայններ, շոգեկալսիչներ միայն կալվա-ծատերերն ու կուլակներն ունեն։ Աշխատավոր գյուղացիության մեծագույն մասը նույնիսկ լծկան ձի չունի։ Գերմանիայում 1933 թվին $\frac{1}{2}$ -ից մինչև 2 հեկտար մեծությամբ 849 հազար գյուղա-ցիական անտեսություններից միայն $5^0/0$ -ը լծկան ձի ուներ. կով ուներ այս անտեսությունների կեսից պակասը։ 2-ից մինչև 5 հեկտար ծագալով 797 հազար անտեսություններից միայն 158 հազարը ձի ուներ։

Մանր գյուղացիների անասունը վորակով անհամեմատ ցա-ծըր է, քան կալվածատիրոջը։ Մինչև 2 հեկտար մեծությամբ մանր գյուղացիական անտեսություն ունեցողների կովերը տա-րեկան միջին հաշվով 1600 լիտր կաթ են տալիս։ 100 հեկտարից ավելի ունեցող կալվածատերերի կովերը տարեկան միջին հաշ-վով 3370 լիտր կաթ են տալիս։

Մանր գյուղացիական անտեսությունների հողը տալիս և ամենավատ բերքը։

Ավատրիայում 1930 թ. մինչև 2 հեկտար մեծությամբ ամեն 100 անտեսությունից միայն յերկու անտեսություն ուներ լծկան ձի։ 2-ից մինչև 5 հեկտար մեծությամբ 100 անտեսությունից լծկան ձի ուներ 15 անտեսություն։ Նույնիսկ 5-ից մինչև 10 հեկ-տար մեծություն ունեցող անտեսություններում կեսից ավելին ձի չուներ։ Մինչև 2 հեկտար մեծություն ունեցող անտեսու-թյունների կեսը վոչ ձի ուներ, վոչ ել կով։

Ռումինիայում 1936 թ. գյուղացիական անտեսությունների $36,9^0/0$ -ը չունեյին լծկան անասուն, $32,5^0/0$ -ը չունեյին կով, $48^0/0$ -ը չունեյին խոզ և $46,2^0/0$ -ը չունեյին վոչխալը։

Ճգնաժամի ժամանակ գյուղացիները համարյա դադարեցին գյուղատնտեսական մեքենաներ գնելը։ Գերմանիայում 1928 թ. գյուղատնտեսական մեքենաներ ծախսել են 245 միլիոն մարկի, իսկ 1932 թ.՝ միայն 80 միլիոն մարկի։ Լեհաստանում 1932 թ. գյուղատնտեսական մեքենաներ ծախսել են տաս անգամ ավելի

ավակաս, քան 1928 թ., իսկ 1935 թ.՝ յոթ անգամ ավելի պա-կաս, քան 1928 թ.։ Նույնպիսի կրծատում նկատվում է նաև ար-հետական պարարտանյութերի գործածության մեջ։ Կապիտա-լիստական յերկրներում գյուղատնտեսական ճգնաժամը հոկա-յական մարզեր քայլացից։

Գյուղացիության հին թշնամիները—յերածն ու հեղեղում-ներն ամայացնում են հսկայական կայտուրական մարզեր։ Վերջին տարիներու յերաշան ավելումներներ գործում գլխավորապես Ամե-րիկայի Միացյալ Նահանգներում և Կանադականե-րը հողը վարձակալում են սովորաբար մեկ-յերկու տարով։ Նրանք քիչ են հոգ տանում հողի մասին։ Նրանց համար ձեռնտու չե-ճիշտ ցանքափոխություն մացնելը։ Տարեցարի հողումցորեն են կիրառվում։ Հողը հողմա-ցարվում է։ Յերաշան յեղանակին քամին հողմահարում, տանում և հողի ամբողջ վերին պաղաքեր շերտը՝ ցանքսի հետ միասին։ Հսկայական ավագաբեր փոթորիկներն ահագին տարածություն-ների վրա վոչնչացնում են ամեն մի բուսականություն։ Մար-դիկ մնում են առանց հացի, անասունն—առանց կերի։ Ավազը ծածկում է ֆերմերների տները։ Ամեն ինչ վոչնչանում է։ Այս-պիսի պատկեր եր նկատվում Միացյալ Նահանգներում 1934, 1936 և 1937 թ. թ. թ. այնպիսի աերիտորիայում, վորն իր մեծու-թյամբ գերազանցում է ամբողջ Գերմանիային։

Յերաշտը Միացյալ Նահանգներին անհաշիվ վեաս պատճա-ռեց։ Յերաշտից առաջացած վեասները 1934 թ. կազմեցին 5 մի-միարդ գոլլար. պակաս վեասներ չեղան նաև 1936 թ.։ Հարյուր-հազարավոր ֆերմերներ, առանձնապես վարձականեր, մնացին առանց ապրուստի վորեւ միջոցի և ստիպված յեղան թողնել իրենց տները, փախչել քաղաքները։ Հենց միայն յերկու նահան-իրենց տները, փախչել քաղաքները։ Հենց միայն յերկու նահան-իրենց տները, փախչել քաղաքները։ Հենց միայն յերկու նահան-իրենց տները, փախչել քաղաքները։ Կառավարությունը ստիպված մարդ թողեցին իրենց ֆերմերները։ Կառավարությունը ստիպված մարդ թողեցին կեթ վորեւ ոգնություն ցույց տալ քայլացիա գերմերնե-րին՝ սովամահությունից փրկելու համար։

Ոլլահումա նահանգում 1936 թ. գյուղատնտեսական հողի մոտ մեկ յոթերորդ մասն անապատ դարձավ։ Ավելի քան 1 մի-միոն հեկտար արգավանդ հող այժմ լքված է։ 3 միլիոն հեկտա-րից ավելի հող սակավ յեկամտաքեր դարձավ, գլխավորապես հողի հողմահարվելու պատճառով։ Նահանգի ֆերմերները տարեկան մոտ 25 միլիոն գոլլար վեաս են կրում։ 500 հազար մարդ, Գեր-մերական բնակչության կեսը, դաժան կարիքի մեջ ընկան։

Միացյալ Նահանգների գյուղատնտեսության մինիստր Ուոլես այսպես են նկարագրում յերաշտի կործանիչ հետևանքները:

«Հողի հողմահարումը սարսափելի ավերածություններ են պործում Միացյալ Նահանգներում: Առաջներում արգավանդ յեղած մոտ 16 միլիոն հեկտար հող Միացյալ Նահանգներում բուրովին կորած են հողագործության համար: Մինչեւ 40 միլիոն հեկտար հող կորցրել են վերին արգավանդ շերտը, իսկ 50 միլիոն հեկտար արագ կորցնում է այն: Այն ֆերմերները, վորոնք աշխատում են 40 միլիոն հեկտար անբերրիացած հողի վրա, ակնհայտ կերպով քայլայան են դատապարտված»:

Վերջին տաս տարում յերաշտից և հողի հողմահարությունից Միացյալ Նահանգներից վոչ պակաս տուժում են Կանագան: 1937 թ. ամենից ավելի սաստիկ տուժեց Սասկաչեվանը (ցորենի արտադրությամբ առաջին գավառը): Այս գավառի հարավային շրջանը, վորը կից են Միացյալ Նահանգների սահմանին, անապատի վերածվեց: Այս տարի Կանադայի ֆերմերները նորից ստիպված են նպաստ ինդրել կառավարությունից:

Հողի հողմահարումը հասցնում է վոչ միայն յերաշտի, այլև և հեղեղումների: Փխրունացած հողը չի պահում անձրելի և հալվող ձյունի խոնավությունը: Զուրը չափազանց արագ հոսումթափօւմ ե վտակների և գետերի մեջ: Միսսիսիպիի, այս հսկայական գետի, վարարումը 1936/37 թ. մի վերջին տարածություն ընդունելուց հետո կազմակերպությունը միջոցների: Հաղարավոր մարդիկ խեղովեցին: Բազմաթիվ անասուններ փչացան:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՎՈՉՆՉԱՅՈՒՄԸ

Գյուղատնտեսական ճգնաժամը շատ յերկրներում գյուղացիական խոռվությունների հասցրեց: Գյուղացիները հրաժարվում եյին իրենց մթերքները չնշին դնով վաճառելուց: Նրանք գործադրուներ եյին սարքում հարկերի դեմ: Նրանք իրար մեջ խոսք մեկ եյին անում վոչինչ չգնել հրապարակային աճուրդներում, յերբ աճուրդի յեր հանվում քայլայացած գյուղացիների գույշը: Բանը հասնում եր արյունալի ընդհարումների ժանդարմաների մասունքների ու զորքերի հետ: Սպառնալիք ծագեց, թե գյուղացիները

կսկսեն մասսայականորեն անցնել հեղափոխական բանվորների կողմբ:

Բուրժուատական կառավարությունները փորձ արին խառնվելու: Գյուղատնտեսական մթերքներ ներմուծող յերկրներում—Անգլիայում, Գերմանիայում, Խտալիայում և այլն—մաքսային տուրքերը բարձրացվեցին, ներմուծումը սահմանափակվեց: Սրա շնորհիվ գների անկումը կանգ առավ:

Ավելի բարդ եր գրությունը գյուղատնտեսական մթերքների ավելցուկներն արտահանող յերկրներում—Միացյալ Նահանգներում, Կանադայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Լեհաստանում և այլն: Կանադայի կառավարությունը ֆերմերներից ցորեն եր գնում, Միացյալ Նահանգների կառավարությունը—ցորեն, բամբակ, անասուն: Բրազիլիայում կառավարությունը սուրճ եր գնում: Այս գնումները հարյուրավոր միլիոններ նստեցին, բայց քիչ ողուտ տվին: Զե՞ վոր վաղ թե ուշ հարկավոր եր այս պաշարների համար գնող գտնել նատ յերկրներում կառավարությունները փորձում եյին դրդել գյուղացիներին արտադրությունը կամավոր կերպով սահմանափակելու: Բայց այս փորձերը հաջողություն չդատարան: Իսկապես, ել ինչո՞վ ապրի գյուղացին, յեթե նա դադարի հողը մշակել: Միացյալ Նահանգներում պետությունը սկսեց պարզեցներ տալ հողը չմօտենելու համար: Այս շատ ձեռնոտու յեր խոշոր կալվածատերների համար: Նրանք պարզեցներն իրենց գրպանն եյին դնում և արձակում եյին բանվորներին:

Բայց այս միջոցառումն ել չփրկեց գյուղատնտեսությունը: Վերջիվերջո այլ յելք չեր մնում, յեթե վոչ կանչացնել մթերքները, վորոնք գետ չեն գտնում: Մինչդեռ միլիոնավոր գործազուրկներ սովահար եյին ու ցնցոտիներ հագած շրջում եյին, պետությունը միլիոնավոր տոններով ցորեն և յեգիպատացորեն եր գնում, սուրճ, բամբակ, խոզեր ու կովեր եր գնում վոչնչացնելու համար:

Բերենք մի քանի որինակներ: 1933թ. ձմեռը շատ դպրոցներ Միացյալ Նահանգների գյուղատնտեսական շրջաններում տափացվամ եյին ցորենով և յեգիպատացնենով: Այս ավելի եժան եր նստում, քան յեթե դրանք ածուխով տաքացնեյին: 1933 թ. 4 միլիոն հեկտարից հավաքած բամբակի բերքը Միացյալ Նահանգներում կառավարության կարգադրությամբ վոչնչացվեց: Նույն 1933 թ. ծխախոտի ցանքի տարածության կեսի բերքը կառավարության կարգադրությամբ մնաց չհավաքված:

Բրազիլիայում մինչև 1933 թիվը 22 միլիոն պարկ սուրճ վոչնչացվեց: 1933 թվին վոչնչացվեց գարճալ 20 միլիոն պարկ սուրճ: Սուրճը թափում եյին ծովը, այրում եյին, ոգտագործում եյին ձանապարհներ կառուցելու համար:

Անգլիայում 1933 թ. ոգոստոսին 1,5 միլիոն նարինջ թափեցին ծովը: Զեխոսլովակիայի մեկ ոկտոբեր 1933 թ. 70 հազար ցենտներ գալուկ (խմել) վոչնչացվեց:

1933 թ. Դանիայում ամեն շաբաթ հազար կով եր վոչնչացվում, զորոնց միսը վերամշակվում եր արհեստական պարարտանյութերի համար և վորպես կեր՝ խողիքի համար:

Արգենտինայում և Չիլիում (Հարավային Ամերիկա) հարյուր հազարավոր գլուխ վոչնչացվեց, զորոնց յեթե վաճառեցին արտահանելու համար, փոխադրության ծախսերը չեր ծածկի: Միսը գործադրվեց քսելու յուղ պատրաստելու վրա:

1933 թ. աշնանը Միացյալ Նահանգների կառավարությունը գնեց և վոչնչացրեց միլիոնավոր խոճկոր: Այդ նույն ժամանակում յերկրում հաշվվում եյին միլիոնավոր սովահար գործադրություներ իրենց ընտանիքներով:

Այս թվարկումն ամենեին լրիվ չե: Ֆրանսիայում ամրող նավեր եյին բեռնվում ձկնով, զորը ծովս եյին թափում: Հոլանդիայում ծովս ածվեց հարյուրավոր վագոն ծաղկակաղամբ, և այն և այն:

Սակայն, գյուղատնտեսական մթերքների այս սիստեմատիկ վոչնչացումը մեծ ոգուտ չեր բերի, յեթե չոգներ ծանր անթերիալ յարյունը 1934 և 1935 թ. թ.՝ Միացյալ Նահանգներում, 1937 թ.՝ Կանադայում և Գերմանիայում:

Անգլերիությանն Ամերիկայում սպասում եյին անհամբերությամբ, զորպես մի մեծ բախտավորության: Ամերիկական «Տրի-բրունա» լրագիրը գրում եր 1933 թ. «Մենք, զոր սովոր եյինք աղօթել մեր ամենորյա հացի համար, այժմ աղերսում ենք աստծուն, զոր մենք հաց չունենանք»:

Ներկայումս բոլոր պետություններ են դիզում պատերազմի դեպքի համար: Հացի գները կապիտալիստական յերկը ներում անում են: Բայց սրանով գարճալ միայն սպեկուլանտները, կուլակները, կալվածատերերն են հարստանում:

Յեթե յուրաքանչյուր սովահար կարողանար կուշտ ուտել, յեթե ցնցութիւնը հագած յուրաքանչյուր մարդ կարողանար վայելուչ շոր հագնել, հասկանալի յե, զոր խոսք անդամ չեր մ'նե

գյուղատնտեսական մթերքների ավելցուկի մասին: Միայն այն պատճառով, զոր աշխատավոր մասսանեցն աղքատության մեջ են ապրում, գյուղատնտեսության մթերքները գնողներ չեն գտնում:

ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԱՇԻՍՏԱԿԱՆ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ

Առանձնապես ծանր է գյուղացիների դրությունը ֆաշիստական Գերմանիայում: Գերմանական ֆաշիստները տեսդորեն պատերազմի յեն պատրաստվում: Նրանք արտասահմանից ահազին քանակությամբ ներմուծում են պատերազմի համար անհրաժեշտ ամեն տեսակ ապրանքներ: Նրանք ամեն կերպ կրծատում են պարենամթերքների ներմուծումը: «Թնդանոթներ յուղի փոխարեն»— այս և ֆաշիստների լողունքը: Խոկ Գերմանիայի ներքին արտադրությունը չի բավականացնում պահանջները բավարարելու համար: Այդ պատճառով ֆաշիստները զրկել են գյուղացիներին իրենց մթերքները վաճառելու իրավունքը: Ամբողջ հացը, անսառւնը, միսը, կաթը, բանջարեղենը, ձուն ֆաշիստական չինովիկները գրավում են գյուղացիներից: Գյուղացուն թողնվում է միայն աղքատիկ բաժին, զորը հազիվ բավական և ընտանիքը կերակրելու համար:

Ահագին բյուրոկրատական ապարատը հետեւում է գյուղացու ամեն մի քայլին: Ֆաշիստական չինովիկների այս բանակը պահելու համար ահազին միջոցներ են ծախսվում: Ֆաշիստական մկիչները վերահսկում են գյուղացիական տնտեսության վրա՝ ընդուած մինչև մանրունքները: Բերքի չափը հաշվում են, յերբ բերքը գեռ հավաքած չե: Առանց ֆաշիստական չինովիկի թույլտվության գյուղացին չի կարող նույնիսկ ձու ծախել: Բոլորը ֆաշիստական պետությունն ե գրավում: Ֆաշիստական պետությունն ապրանքների այնպիսի գներ և սահմանում, զորոնք չափաղանց վնասաբեր են գյուղացիների համար:

Աշխատավոր գյուղացին Գերմանիայում քիչ հող ունի: Նա ապրում է գլխավորապես անասնաբուծությունից ստացած յեկամուտով: Սեփական անասնակերը նրան չի բավականացնում, և նա ստիպված է կեր գնել կալվածատերերից: Իր անասունի համար գյուղացին այժմ 13°/0-ով պակաս և ստանում, քան պատերազմից առաջ: Բայց կերի համար նա 8°/0-ով ավելի յեղաբարձր:

Գերմանիայի աշխատավոր գյուղացիները կատաղի, համառպայքար են մղում ֆաշիստական ուժիմի դեմ, վորը նրանց աղքատության ու սովի յե դատապարտում:

Հաղարավոր գյուղացիներ պատժվում են նրա համար, վոր նրանք խողերը ծախում են անմիջականորեն սպանդանոցներին: Հաղարավոր մատուցներ կալանքի յեն յենթարկվում նրա համար, վոր նրանք գյուղացիներից խող են գնում: Ֆաշիստներն առաջարակություններ են կազմակերպում դեպի գյուղերը, խլելով գյուղացիներից մթերքները:

Այս գյուղացիները, վորոնք բողոքում են այս միջոցառումների դեմ, կալանավորվում, ուղարկվում են Նյուրենբերգ, իսկ ապա բանտարկվում համակենարունացման ճամբարներում:

Արդեն մի՛ շարք տարիներ ե, վոր մզվում ե այս կատաղի պայքարը գերմանական գյուղացիության և ֆաշիստների միջև:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՍՈՎԱՀԱՐ ԵՆ

Վերջին տարիները կապիտալիստական յերկրներում միավորնավոր առններով պարեն փչացրին, այդ ապրանքների գները բարձրացնելու համար: Միննույն ժամանակ հարյուրավոր միլիոն միջակ և չքակոր գյուղացիներ սովահար յեղան:

Վերցնենք, որինակ, ֆաշիստական Խտալիան: 1930 թ. սեպտեմբերի 17-ին սենատում արտասահմած իր ճառում Մուսովլինին հայտարարեց.

«Քարեբախտաբար, Խտալիայի ժողովուրդը դեռ սովոր չե որը միքանի անգամ ուտել, և վորովհեան նրա կենսամակարդակը համեստ ե, ուտի նա ավելի նվազ հիվանդացինորեն և ընդունում կարիքն ու զրկանքները»:

Ինչո՞ւ և սնվում Խտալիայի գյուղացին: Գլխավորապես «պոլենտայով», այսինքն յեղիպտացորենի ալյուրից պատրաստված ջրալի շիլայով: Ֆաշիստական «գիտնականները» ժողովրդին քարոզում են ուտելու մեջ ժուժկալ լինել: Խտալացի մի պրոֆեսոր սրանից միքանի տարի առաջ զրում եր.

«Պոլենտան պետք ե նորից իր առաջվա պատվավոր տեղը գրավի: Գյուղացու կերակրի մեջ պետք ե մտնի միքիչ հաց, և համարյա բոլորովին հարկ չկա միս գործածելու»:

Գերմանական ֆաշիստները նույնպես համոզում են բնակչության ավելի քիչ միս, քիչ յուղ, քիչ կաթ և քիչ հաց գործածել:

Յաշիստական Պորտուգալիայում բնակչության կեսը յեզիստացորենի հացով ու շիլայով ե սնվում: Ամենից ավելի մատչելի անունը՝ գալիցիական կաղամբ կոչված մոլախոտից պատրաստված սուպն ե: Կաթի գործածությունը չափաղանց սահմանափած ե. միջին հաշվով մեկ բնակչին որական ընկնում է կես բաժակից պակաս: Պորտուգալացի գյուղացիները միս համարյա յերեք չեն ուտում:

Լեհաստանում չքավոր գյուղացիական ընտանիքները սնվում են կարտոֆիլով, կաղամբով, յերեսը քաշած կաթով: Շաքարը միջին հաշվով որական գործ ե ածվում մեկ շնչին մեկ գրամից պակաս:

Խումինիական գյուղացու հիմնական կերակուրը յեզիստացորենի շիլան ե (մամալիգան): Խումինիայում ամեն տարի 5-ից մինչև 10 հազար մարդ մեռնում են պելագրայից— «սովորաների հիվանդությունից»:

Խտալիան, լեհաստանը, Խումինիան աղքատ յերկրներ են: Բայց հարուստ յերկրներուն ել ֆերմերների մեջ դաժան կարիքն ե մոլեգնում: Այսպես, որինակ, կանադայում ֆերմերների չքավոր խավի սնունդը սահմանափակվում ե տանը թթված և սիրոպ քսած մի բաժին վատ հացով կամ մի փոքրիկ քամին կարտոֆիլով: Դեպքեր են պատմում, յերբ առաջակած դաշտային մկները կամ ուրիշ դաշտային գագանիկները և ուղտավույնից պատրաստված սուպը միակ միջոցն են յեղել սովամհությունից խուսափելու համար:

Առանձնապես ծանր ե գյուղացիության գրությունն Արևելքի հետաձնաց կախյալ յերկրներում: Անբերի տարիներին սովոր սովամհությունը սովորական յերեւյթներ են Զինաստանի չքավոր գյուղացիների շրջանում: Ներկա տարում անբերի ությունից տուժած Սիչուան նահանգում, չինական լրագրերի ասելով, որական մոտ 200 գյուղացի յե մեռնում սովից:

Հացի կամ բընձի փոխարեն չինացի չքավոր գյուղացիները վայրի խոտեր են ուտում: Ահա թե ինչ ե հաղորդվում չինական «Դունչիանց պաշտամական ժողով» ժողովրդին:

«Սիչուան նահանգի Պենսի գավառի գյուղացիները վայրի խոտեր ու սպիտակ կավ են ուտում: Զինաստանի ամենահարուստ նահանգներում— Ցյանսույում և Չժեցզյանում չքավորների մեծամասնությունը ջրալի շիլայով ե սնվում, իսկ շատերը միայն քընձի տականքներ ու վայրի, յերեմ թունավոր, խոտեր են

ուտում: Շատերը սրանից տառապում են մարմնի ուսուցքներով, գորի հետևանքը հաճախ լինում է մահ»:

Աղքատություն և սով առատության մեջ—այս և կապիւտալիստական աշխարհի իրականությունը:

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐՆ ԽՎԻՃԱԿԻ ԶԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՊՐԵՆՔՆԵՐ ԳՆԵԼՈՒ

Գյուղացիական մթերքների գների անկման հետևանքով գյուղը չի կարողանում արդյունաբերական ապրանքներ գնել:

Բանը մինչև այնուղ և հասնում, վոր լեհաստանի չքավուրագույն գյուղացիների մոտ սովորությունն է դարձել լուցկին ձեղքերով յերկու մաս անել: Մի տուփ լուցկու վրա յերկու կոպեկ ծախսելը լինացի չքավորի գրպանը այլևս չի թույլ տալիս:

Գյուղացի-չքավորների աղքատությունը լեհաստանում, Ռումինիայում, Հունգարիայում զարհութելի յի: Շատ տներում նույնիսկ ազ չկա: Լեհական գրող Կուրեկն իր «Գրիպը մոլեգնուժ և Նապրավայում» գրքի մեջ այսպես և նկարագրում գյուղի կյանքը:

«Գլիպջի (Նապրավայի բնակիչներից մեկի) տանն արգեն յերկրորդ շաբաթն ե, ինչ աղաջրով մի կճում ե դրված, ուր կարտոֆիլ են ածում: Կարտոֆիլը քամելուց հետո ջուրը չի կարելի թափել. չե վոր աղաջուրը մեծ արժեք է, վորի մեջ զեռ 10—15 անգամ կարտոֆիլ կիսաշեն»:

Ճապոնական գյուղացիական ընտանիքի յեկամուտը 1936 թվին միջին հաշվով կազմում եր տարեկան 425 սուբլի, ներառյալ նաև տնտեսության մեջ արտադրվող բոլոր գյուղատնտեսական մթերքները: Միջին գյուղացիական ընտանիքում հաշվությունը և հինգ շունչ: Սյապիսով մի նորուն տարեկան յեկամուտ և հասնում 85 ուրբար չափ: Սա չի կարող բավականացնել նույնիսկ ուտեկիքի համար. արդյունաբերական ապրանքներ գնելու մասին՝ խոսք անգամ չի կարող լինել:

Գյուղացի-չքավորն իվիճակի չե որսուելու իր գողորմելի խրճիթը, պատուհանի ապակիները գցելու, ծակելու ու ձեղքերը կարկատելու: Պորաւութիւնը գյուղացիական վողորմելի խըրճիթները չունեն ծիսնելույղներ. ծուխը գուրս և զալիս զուանկամ պատուհանի միջով: Ռումինական գյուղացիները, խլուրդների նման, հյուղերում են պատապարվում:

Կուլտուրական կարիքների համար ծախսեր անելու մասին

խոսք անգամ չի կարող լինել: Գյուղացիների զգալի մասն անգրագետ ե: Գիրքն ու թերթը զյուղին անմատչելի յեն:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԶԲԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈԶ ՄԻ ՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔ ՉԻ ԳՏՆՈՒՄ

Մինչև պատերազմը գյուղական չքավորությունը կարող երաշխատանք ստանալ բարանիրում—շինարարության մեջ, ֆարբրիկաներում և գործարաններում: Ներկայումս քաղաքները լիփիլցուն են գործադրուրկներով: Վերջին տնտեսական ճզնաժամի ժամանակի ընդհակառակը, տեղատեղ գործադրուրկները քաղաքներից գյուղ եյին փախչում:

Մինչև համաշխարհային պատերազմը գյուղական չքավորությունն աշխատանք եր գտնում յերկաթուղիների կառուցման վրա: Ներկայումս նոր ճանապարհներ շատ քիչ են կառուցում: Ամերիկայի Միացյալ Նահանգներում միքանի յերկաթուղիների վրա յերթենեկությունը նույնիսկ դադարեցված է:

Մինչև համաշխարհային պատերազմը գյուղացիական չքավորությունն աշխատանք եր գտնում գոնե ամառը, կալվածատիրական տնտեսություններում, մտնավանդ հացահատիկների բերքահավաքի շրջանում: Հնձող մեքենաներ և կրտքայններ մտցնելը բանվորական ձեռքերի պահանջը խիստ կրծատեց: Գյուղական չքավորությունը մի կտոր չոր հացով թեկուղ ամառը ձմեռված համար իրեն ապահովելու հնարավորությունը կորցրեց: Հունգարիայում նույնիսկ արգելված և հնձող մեքենաներ կիրառել, վորպեսզի գյուղական չքավորությունը սովից չմեռնի:

Մինչև պատերազմը միլիոնավոր գյուղացիներ Յեվրոպայից գաղթում եյին ովկիանոսի մյուս կողմը—Ամերիկա: Պատերազմից հետո գտղթողների համար Ամերիկայի մուտքը փակվեց:

Բանվորական ձեռքերի առաջարկն ավելի շատ է, քան նրանց պահանջը:

Հունգարական գրող Գ. Ֆեյան այսպես և նկարագրում աշխատանքի շուկան Հունգարիայի խոշոր քաղաքում:

«Բատրակը—զա ներկայումս նույնալիք ապրանք է, ինչպես ցորենը, ձուն, խոշոր կամ մանր յեղջյուրավոր անասունը: Քաղաքում կա վոչ միայն անասունի, բանջարեղենի, թոշունի և պտուղների շուկա, այլև բանվորական ուժի. շուկա: Սյաեկա գործեր են զրսում վոչ միայն ձիավաճառներն ու անասնավաճառները, այլև մարդավաճառները: Պահանջի և առաջարկի որենքները վորոշում

են նաև բատրակների վիճակն այն տարրերությամբ միայն, վորայս բնագավառում առաջարկը միշտ գերազանցում է պահանջին:

Այդ պատճառով մարդը, վորպես ապրանք, յերբեք չի վայելում «աղատ մրցության» առավելություններ: Բատրակներն իրենց ժամանակի մեծ մասն անց են կացնում «մարդկանց շուկայում»: 5—10-ական հոգուց բաղկացած խմբերով կանդնած են պատառությած շորերով, հոգնած, քարացած մարդկային կերպարանքները: Նրանք կամացուկ խոսում են իրար հետ, բայց ավելի շատ լուս են: Նրանց գեմքերին գրված են հոգս, ցասում և կատաղություն: Գյուղական տնտեսատերը, վոր բանվորներ ե վարձում, այս մարդկանց զննում ե, վորպես վորևե կենդանու: Նա հետաքրքրվում է նրանց ֆիզիկական ուժով՝ նրանց տարիքով, հարցուփորձ ե անում նրանց ընտանեկան դրության մասին, և ապա սկսվում է առևտուրը: Կովը կամ ձին ավելի նպաստավոր դրության մեջ ե գտնվում, վորովհետեւ յեթե սակարկությունը համաձայնության չի հանդում, ապա նրա տերը կերի տաշտի մեջ նորից խոտ կամ շաղգամ ե լցնում: Իսկ մարդը վորպես աղատ եյակ, վորը մարդկային իրավունքներ ե վայելում, ինքն ե բանակցություններ վարում, և յեթե գործարքը չկայանա, ապա նրան մնում ե միայն վորովմություն խնդրել կամ սովահար լինել»:

Գյուղական չքավորության այն մասը, վորը հողամաս ունի, բայց արտադրության միջոցներ չունի, ավելի լավ դրության մեջ չի գտնվում. Նա ստիպված է արտադրության միջոցներ փոխ առնել կուլակներից աշխատահատուցումներով: Աշխատահատուցումները հիշեցնում են կոռը: Աշխատահատուցումների չափը, այսինքն աշխատանքային որերի քանակը, կալվածատերը կամ կուլակը վորոշում ե ըստ իր հայեցողության: Նա կարող է աշխատահատուցումները կատարելու ժամկետ նշանակել իրեն համար ամենից հարմար ժամանակը: Աշխատանքի վոչ մի պաշտպանություն, ինարկե, չկա: Յեթե գյուղացին տվյալ մոմենտին նույնիսկ վորևե աշխատանք ունի, նա պետք է ամեն ինչ թողնի և գնա աշխատահատուցումների:

Ճապոնիայում, Զինաստանում, Հնդկաստանում գյուղական չքավորության դրությունն ել ավելի վատ ե: Չքավոր գյուղացիները յերբեք կուշտ չեն լինում: Նրանք միշտ շրջում են պատառությած հագուստով: Կարիքն այնքան մեծ ե, վոր նրանք ստիպված են լինում իրենց աղջիկներին ստրկության վաճառել: Կիսարագի

անունով ճապոնական մի չքավորություղացի նորերս հետեւյալ համակն եր գրել Սիմոնոսեկիի աշխատանքային բորսային:

«Յանկանում եմ աղջկաս ծախել: Աջակցեցք: Կյանքն այնքան ծանր ե, վոր այլևս այսպիս ապրել անհնարին ե: Իմ առաջ սովամահությունն ե: Ինչքան ել ինձ համար թանգ ե աղջիկս, բայց փորը մեջքի չես փոխարկի: Իմ 16-ամյա աղջիկ Խանակն մի ժամանակ շատ եր լաց լինում, բայց հետո համաձայնվեց: Ըստ հնարավորության, յեթե հաջողվի, նրան տեղավորեցեք Սիմոնոսեկիի մոտակայքում վորեն տեղ: Նա պերճանքի կարիք չունի: Ծայրահեղդեպքում նրան կարելի յեր ուղարկել Ֆորմոզա կամ Մանջուրիա: Փրկեցեք մեր տունը»:

Այս ե աշխատավոր գյուղացիության կյանքը կապիտալիստական աշխարհում՝ աղբատացում, տնիույս կարիք, ծանր, բրացնող աշխատանիք, տնկուլտրականության և սով:

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՈՐՈՎ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՓԱԿ ԵՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՅԱՆՔԻ
ԲՈԼՈՐ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

ԲԱՆՎՈՐԸ ՄԻՒԶԵՎ. ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԸ ՄՆՈՒՄ Ե
ՊՐՈԼԵՏԱՐ

Կապիտալիստներն ու նրանց վարձկան գրչակները պնդում են. «Յենթաղբենք, թե բանվորը վատ և ապրում: Բայց յուրաքանչյուր աշխատասեր և խնայող բանվոր ինքը կարող է կապիտալիստ դառնալ: Ընդունակ մարդկանց համար բաց են դեպի հարստություն տանող բոլոր ուղիները: Զե վոր ամերիկական միլիարդերները—ծերունի Մորգանն ու Ռոկֆելլերն իրենց կարյերան սկսել են վորպես չքավորներ»:

Այս ամենը խաբեյություն ե: Միայն հազվագյուտ անհատներին ե հաջողվում, ինչպես ասում են, «մարդ դառնալ», աղատվել աղքատությունից: Վորպես կանոն բանվարը մինչև իր որերի վերջը մնում ե շունչոր պրոլետար:

Հարստություն կարելի յե գիղել միայն ուրիշ մարդկանց շահագործելով, խաբեյությամբ և կողոպտելով, ինչպես այն դիմել են Ռոկֆելլերն ու Մորգանը:

Ռինակի համար վերցնենք գերմանական բանվորին: Գերմանական բանվորի միջին շաբաթական աշխատավարձը կազմում է 25 մարկ: 5 մարկը կլանում են հարկերի համար, ապահովագրության համար, ֆաշիստական կոսմակերպությունների ոգտին զանազան ապորինի տուրքերի համար վերցվող հատկացումները:

Յուրաքանչյուր գրոշը խնայելով, ամեն բանից իրեն զրկելով, ամուրի բանվորը լավագույն դեպքում տարվա մեջ կկուտակի 100—200 մարկ: Բայց բավական ե, վոր նա մի անգամ հիվանդանա — և կյանքի միքանի տարվա խնայողությունները հող ու

մոխիր կղառնան: Բախտավորի մեկն իր ամբողջ կյանքում հետ կցցի, թերեւս, մեկ-յերկու հազար մարկ: Յենթաղբենք, թե նրան հաջողվում ե «ինքնուրույն» արհեստավոր դառնալ: Այս ինչ ե նշանակում: Աշխատանքն ավելանում ե, հոգսերը նույնպես, իսկ պրոլետարի առաջվա մուրացկանային յեկամուտը մնում ե:

Այժմ կապիտալիստ դառնալու համար հարյուր-հազարավոր, յեթե վոչ միլիոնավոր, մարկեր են հարկավոր: Հենց առաջին ճգնաժամին արհեստավորի համար քայլքայումն անխուսափելի յե: Խոշոր կապիտալիստները շարունակ նորանոր թանգարժեք մեքենաներ են գնում, նրանք ապրանքներն ավելի եժան են արտադրում: Մասն կապիտալիստի ուժից վեր ե թանգարժեք մեքենաներ ձեռք բերել ավելիչ մրցության մեջ մտնել խոշոր կապիտալի հետ: Նրան սպասում ե խղճուկ գորշ կենցաղ, անխուսափելի քայլքայում: Կապիտալիզմի որով աշխատավորը դատապարտված ե վարձու տաժանակրության և հավիտենական կարիքի ու զրկանքների:

ԾԱՌԱՅՈՂ ՆՈՒՅՆՊԵՍ ՄԻՒԶԵՎ. ԻՐ ՈՐԵՐԻ ՎԵՐՋԸ
ՄՆՈՒՄ Ե ՊՐՈԼԵՏԱՐ

Վոչնչով ավելի լավ չե ամեն տեսակի ծառայողների վիճակը: Նրանց թիվը համարում ե բանվորների թվի մի յերրորդին: Ծառայողների ճնշող մեծամասնությունն իր գրությամբ վոչնչով չի զանազանվում պրոլետարներից: Դրանք ֆարբիկաների և գործարանների գրասենյակային ծառայողներ են, հաշվապահներ, սղագրուհիներ, խանութներում աշխատող գործակատարներ: Կապիտալիստներն ամեն կերպ աշխատում են ծառայողներին բաժանել ֆիզիկական աշխատանքի բանվորներից: Ծառայողներին կեղծավորաբար անվանում են «մտավոր աշխատանքի աշխատողներ», թեպետ մեծ մասմբ ծառայողի աշխատանքն ավելի խելք չի պահանջում, քան, ասենք, մոնտյորի կամ կոմբայնավարի աշխատանքը: Ծառայողները սպիտակ վզնոցներ են կրում: Նրանց մեծարում են «պարոն» անունով: Բայց ծառայողի վաստակը բարձր, չե պրոլետարի աշխատավարձից:

Գերմանիայում ծառայողի միջին աշխատավարձը 1936 թվին կազմում եր ամսական 199 մարկ: Սա ավելի չե վորակյալ արդյունաբերական բանվորի աշխատավարձից: Ծառայողների մի յերրորդը նույնիսկ ավելի քիչ եր վաստակում, քան բանվորները:

Բարձր վարձատրվող պաշտոնները (գիրեկառների, խոշոր ձեռնարկությունների բաժինների վարիչների և այլն) բաժին են ընկում բացառապես հարուստ ծնողների տղաներին:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ
ԱՆՄԱՏՋԱԼԻ ՅԵ

Կապիտալիզմի որով բարձրագույն կրթությունը մատչելի յե միայն տիրող դասակարգերի զավակներին:

1933 թ. Գերմանիայում յուրաքանչյուր 100 ուսանողին ընկում ելին:

	ԲՈՒՀԵՐՈՒՄ ՏԵԽԲՈՒՀԵՐՈՒՄ	
Բանվորների զավակներ	2,9	2,7
Զքափորագույն գյուղացիների	>	2,2
Միջակ գյուղացիների և կուլակների	>	1,1
Ստորին ծառարդների	>	3,2
Սրճեստավորների	>	2,9
	6,2	8,5
ՀՆԴԱՄԵՆԸ	17,4	16,9

Բանվորները Գերմանիայում կազմում են ամբողջ բնակչության կեսը, բայց յուրաքանչյուր հարյուր ուսանողից միայն յերեքն են բանվորներից: Բանվորները, ծառայողները, գյուղացիները, արհեստավորները միասին կազմում են ամբողջ բնակչության $90^{\circ}/_{\circ}$ ը: Սակայն նրանք բարձրագույն դպրոցի ուսանողների միայն մի վեցերորդ մասն են տալիս:

Բանվորների զավակներին կրթությունն անմատչելի յե: Գերմանիայում մասնավոր և կրօնական ընկերությունների թաշակներն ուսանողների միայն $1/10$ մասն է ստանում: Սովորաբար թոշակը շատ անշան ե (միջին հաշվով կիսամյակում 70 մարկ): Յուրաքանչյուր դասախոսություն, յուրաքանչյուր քննություն վարձատրվում և առանձին: Բժշկական ուսանողին միմիայն ուսաման ծախսերը (չհաշված սնունդը, բնակարանը և զգեստը) $5^{1/2}$ տարում 4 հազար մարկ են կազմում: Վերտեղից վերցնի բանվորն այսքան փողը: Ֆաշիստների քաղաքականությունը հասցրեց այն բանին, վոր ներկայումս բանվորների զավակները բոլորովին չեն կարող բարձրագույն ուսումնական հիմնարկներն ընկնել:

Չունկոր դասակարգերին պատկանող ուսանողների կրած կարիքը չափազանց մեծ է. Ամերիկայի Միացյալ Նահանգների հոչշակավոր Հարվարդի համալսարանի ուսանողներն աշխատում են վորպես մատուցողներ, լվանում են լուսամուտները, հագա-

քում փողոցների ձյունը, սպասավոր են վարձվում բուրժուական ընտանիքներում: Դասակարգային տարբերությունները գոյություն ունեն նաև ուսանողների մեջ: Կան «աղնիմների» և «հասարակ» համալսարաններ: Անգլիայում տիրապեսող դասակարգերի վորդիների համար գոյություն ունեն առանձին համալսարաններ, ուր մուտք չունեն չքավորների վորդիները: Բուրժուական ուսանողն ունի համալսարանին կից իր բնակարանը, իր ձին, իր ավառմոբիլը: Նա անհամեմատ ավելի շատ զբաղվում է սպորտով, քան թե գիտություններով: Մի այսպիսի «աղնիմ» ուսանող պահելու վրա ավելի շատ փող ե գնում, քան տասաբանվորի աշխատավարձի վրա:

Բայց դիպլոմն ել ամենակին գեռ չի ապահովում կոյությունը: Յերիտասարդ բժիշկները, փաստաբանները, ճարտարապետները չնչին վաստակ են ուսանում: Հաճախ վաշխառուն տաղանդավոր յերիտասարդ բժշկի համար գնում ե բժշկական գործիքներ, վարձում ու կահավորում ե բնակարանը, բայց դրա փոխարեն պայմանավորվում ե, վոր բժշկի ամբողջ վաստակի կեսը իրեն պետք ե հասնի:

ԱՏԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԳԵՐԱՐՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ճգնաժամի տարիներին Ամերիկայում հաշվվում եր 200 հազար գործազուրկ ուսուցիչ: Ինժեներների $65^{\circ}/_{\circ}$ ը, դեղագործների $50^{\circ}/_{\circ}$ ը, յերաժիշտների $2/3$ -ն աշխատանք չունեցին:

Մտավոր աշխատանքի աշխատաղների վաստակը կրկնակի չափով կրճատվեց:

1934 թ. Ամերիկայի Միացյալ Նահանգներում ուսուցիչներն Արկանդաս նահանգում տարեկան 465 դոլար ելին ստանում, Միսսիսիպիի նահանգում—474 դոլար, Գեորգիա նահանգում—561 դոլար տարեկան: Այս կազմում ե շաբաթական 10 դոլարից պակաս, այնինչ վորակյալ գործարանային բանվորը շաբաթական 30 դոլար ե վաստակում:

1932 թ. Խոտալիայում վոստիկանների հավաքագրություն հայտարարվեց: 150 ազատ տեղի համար հաղար առաջարկ ստացվեց, վորի նշանակալի քանակը բղխում եր բարձրագույն կրթություն ունեցող անձերից: Բուդապեշտի քաղաքային վարչությունը հայտարարություն տվեց փողոց մաքրողներ վարձելու մասին:

Ստացված 100 առաջարկից 12-ը բարձրագույն կրթություն ունեցող մարդկանցից եր:

Սարսափելի յե ծեր նկարիչների, գրողների, յերաժիշտների և այլոց դրությունը: Նրանք հաճախ ստիպված են վողորմություն խնդրել: Անցյալ տարի Ամերիկայում մի նշանավոր քիմիկոս, համարաբանի նախկին պրոֆեսոր, բաղմաթիվ գիտական ընկերությունների անդամ դոկտոր Բրենդիջը 74 տարեկան հասակում բնակարանից գուրս գցվեց պարտքերը չփական համար: Բուզապեց քաղաքի (Հունգարիա) վոստիկանությունը 1932 թ. յոթը ծեր դերասանի պաշտոնական թույլտվություն տվեց քաղաքի վողորմություն խնդրելու: Նյութական կարիքի պատճառով ամեն որ տեղի յեն ունենում նկարիչների, գրողների և գիտնականների անձնասպանություններ:

Կարիքը խախտում ե ինտելիգենցիայի շրջաններում հավատը գեղի կապիտալիզմը, ինտելիգենցիային մերձեցնում և հեղափոխական պրոլետարիատին: Տիրապետող դասակարգերը ձգտում են սովորող յերիտասարդության թիվը կրծատել, ինտելիգենցիայի աճումը կասեցնել: Այս քաղաքականությունն առանձնապես յեռանգույն կերպով ե անցկացվում ֆաշիստական յերկրությունը: Պաշտոնական վիճակագրության տվյալներով 1932 թ. Գերմանիայում կար 145 հազար ուսանող: 1935/36 ուսումնական տարում նրանց թիվը դարձավ ընդամենը 76 հազար: Կին ուսանողուհիների թիվը 1932 թվի 25 հազարից կրծատվեց մինչև 13 հազարը 1936 թ.: Բնակչության սակավ ապահով խավերի համար բուհեր մտնելը ամեն կերպ դժվարացվում ե: Բարձրագույն ուսումնական հիմնարկներում ուսման վճարը վերջին տարիներում բարձրացել է յերկու անգամ:

ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՔԱՅԱՑՈՒՄԸ

Կապիտալիստական յերկրներում բնակչության նշանակալի մասը կազմում են մանր-բուրժուական խավերը—արհեստավորները, մանր արհեստանոցների տերերը, մանր առևտունները, գարեջրատներ, ճաշարաններ պահողները և այլն:

Բուրժուազիան հմտորեն ոգտագործում ե այս խավերի մանր-սեփականատիրական նախապաշարմունքները՝ իր իշխանությունն ամրացնելու համար: Այս գործում առանձնապես հնարագետ են դարձել ֆաշիստները: Նրանք ժամանակակից գիտական խոստումներ տալու, թե պաշտպանելու յեն մանր սե-

փականատերերին խոշոր կապիտալից, պաշտպանելու յեն նրանց «ինքնուրությունությունը»: Մինչև իշխանության գրավումը գերամանական ֆաշիստներն արհեստավորներին, մանր առևտունական ներին վոստի լեռներ ելին խոստանում: Նրանք խոստանում եյին փակել խոշոր վաճառատները, մանր ձեռնարկատերերին և արհեստավորներին ազատել պարտային ստրկությունից, նրանց համար աշխատանք ապահովել:

Այս բոլորն, իհարկե, լկտի խարեցություն ե, անպատկառ գեմագոգիս:

Կապիտալիստական յերկրներում «ինքնուրություն» արհեստավորները, մանր առևտունականները, մանր պանդոկապաններն ամբողջապես կախված են խոշոր կապիտալիստներից: Առաջվաժամանակներում ինքնուրություն արհեստավորներն ապահովված ապրուստ ունեյին: Նրանք աշխատում եյին արտադրության սեփական գործիքների ոգնությամբ: Արհեստավորը սովորաբար վարձում եր մեկ-յերկու յենթավարպետ ու միքանի աշկերտ, հումքը գնում եր գյուղացիներից, իր ապրանքները ծախում եր անմիջականորեն սպառողներին: Այս բոլորը վաղուց արդեն փոխվել ե: Խոշոր կապիտալիստներն իրենց ձեռքն են գցել արհեստավորական արտադրության բոլոր ճյուղերը: Արհեստավորը, փոքրիկ արհեստանոցի տերը, իվեճակի չե մրցելու գործարանի հետ: «Ինքնուրություն» արհեստավորներին համարյա վոչինչ բաժին չմնաց, բացի վատ վարձատրվող կարկատելու աշխատանքներից:

Արհեստավորների ներող մեծամասնությունը միայն անունով ե ինքնուրույն: Նրանք աշխատում են գործարանների կամ խոշոր վաճառատների համար: Կապիտալիստը վերահսկում ե այսպիսի բանների իր տանն արած ծախսերին և վորոշում ե նրա վատակը: Նա այսպիսի ցածր գնահատականներ ե սահմանում, վոր «ինքնուրություն» արհեստավորի յեկամուտը բարձր չլինի վորակյալ բանվորի վաստակից:

Գերմանիայում 1935 թ. հաշվում եր 1540 հազար «ինքնուրություն» արհեստավորական ձեռնարկություն: Նրանց յեկամուտը կազմեց 1800 միլիոն մարկ: Այս տակիս ե միջին հաշվով տարեկան 1160 մարկի յեկամուտ յուրաքանչյուր արհեստավորական ձեռնարկության համար, այսինքն շաբաթական 22,5 մարկ: Սա վորակյալ բանվորի վաստակից գիտ ե: Արհեստավորն ամենին աղատ չե գործադրկությունից: Յեթե այն կապիտալիստի

գործերը, վորի համար նա աշխատում է, վատ են գնում, արհեստավորն առանց աշխատանքի յե մնում: Բայց չնա նույնիսկ գործադրկության նպաստ չի ստանում: Զե՞ վոր արհեստավորն «ինքնուրույն ձեռնարկատեր» և համարվում:

Վոչնչավ ավելի լույլ չե նաև մաեր տուերականների դրությունը: Խոշոր գործարաններն ամենուրեք իրենց ապրանքները վաճառահանելու համար սեփական խանութներ են ստեղծում: Մանր, իբր թե «ինքնուրույն» առևտրականներն իրականում խոշոր կապիտալի գործարկաններն են միայն: Գործարանատերը սահմանում է, թե առևտրականն ինչ գնով պետք ե ծախի ապրանքը: Մանր առևտրականի յեկամուտը հաճախ քիչ բանով ե տարբերվում բանվորի աշխատավարձից: Գերմանիայի մթերեղենի և գաստրոնոմիական խանութներից, վորոնց թիվը 1935 թ. 350 հազար եր, միայն 75% -ն ուներ ամսական 80 մարկից ավելի, այսինքն շաբաթական 18,6 մարկ զուտ հասույթ: Այս ավելի չե բանվորի աշխատավարձից:

Թանգությունը, հումքի պակասությունը, պարենային ճգնաժամն էլ ավելի ուժեղացրին մանր բուրժուագիտայի քայլացումը ֆաշիստական Գերմանիայում: Ֆաշիստական գեմազոդիային իսաբված մանր մնանատերերի մասսաների մեջ ավելի ու ավելի յե ուժեղանում հիմանական գործությունն ու գժգոհությունը ֆաշիստական ռեժիմից, վորը տեսորի, սովի և պատերազմի ռեժիմ է:

ԻՆՉՊԵՍ Ե ՄԱՍՍԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՂԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍ ՅԵՐԿՐՈՒՄ

Ամերիկայի Միացյալ Նահանգները — կապիտալիստական աշխարհի ամենահարուստ յերկիրն է: Արտադրությունն այժմ շակվում է, գնում ե զեպի վեր: Յեզ այնուամենային նախագահ Ռուզվելտը սենատին ուղղած իր գրության մեջ հետեւյալ կերպ ե պատկերում ժողովրդի գրությունը.

«Մեր յերկրում միլիոնավոր քաղաքացիներ, վորոնք բնակչության զգալի մասն են կազմում, հենց այս մոմենտին դեռ գուրկ են այն բարիքների մեծ մասից, առանց վորոնց աներեակայելի յե ամենահամեստ գոյությունը: Միլիոնավոր ընտանիքներ փորձում են գոյություն պահպանել այնքան խղճուկ յեկամուտով, վոր կործանման սպառնալիքը շարունակ կախված ե նրանց զվարին: Միլիոնավոր մարդիկ քաղաքում և գյուղում ապ-

րում են այնպիսի պայմաններում, վորոնք կես դար սրանից առաջ մարդկային գոյության համար անարժան կամաց վեցին: Միլիոնավոր մարդիկ զուրկ են կրթությունից, զվարճություններից և իրենց վիճակն ու իրենց յերեխաների վիճակը բարելավելու վորեւ հնարավորությունից: Միլիոնավոր մարդիկ միջոցներ չունեն, վոր գյուղատնտեսական կամ արդյունաբերական մթերքներ գնեն: Այս մարդկանց աղքատությունն իր հերթին միլիոնավոր ուրիշ մարդկանց անգործության և գործազրկության ե գատապարտում: Ամբողջ ամերիկական ազգի մի յերրորդի ապրում և բնակարանային վատ պայմաններում, վատ ե հազնիում, վատ սննդում»:

Բոլոր կապիտալիստական յերկրներում աշխատավոր ժողովրդի մեջ խորը դժգոհություն ե թագավորում:

Կապիտալիզմից գոհ մարդկանց շրջան ավելի ու ավելի յե սեղմվում: Լայն մասսաներն ավելի ու ավելի սկսում են հասկանալ վոր միայն հեղափոխական ուղղու վրա կարելի յե կարիքից ու զրկանքներից յեւք գտնել: Միայն բուրժուազիայի իշխանության տապալումն ե ուղի բաց անում գեպի փրկություն: «Գրոհի գաղափարը հասունանում և մասսաների գիտակցության մեջ» (Ստալին):

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՑ ԴԵՊԻ ՖԱՇԻԶՄ

Վորովինետև ժողովրդի զգալի մեծամասնությունը գժգոհ ե կապիտալիստական սիստեմից, շահագործողների համար ավելի ու ավելի յե դժվարանում գեմոկրատական սեթողների ողնությամբ կառավարելը: Ժողովուրդը պահանջում է ամբողջ սիստեմի արմատապես փոխել:

Ամբողջ աշխարհի բանվորները գիտեն՝ մուսաստանում կապիտալիստներին գուրս քշեցին ու գործարաններն ազգայնացրին, այնտեղ չկան ճգնաժամեր, չկա գործազրկություն: Յեզ նրանք հարցնում են իրենց, ինչու մենք չհետեւնք մուսաստանի որի նակին:

Ամբողջ աշխարհի գյուղացիները գիտեն՝ մուսաստանում հողը կարգածատերերից խրված ե ու գյուղացիներին հանձնված: Նրանք հարցնում են իրենց, ինչու մենք ել նույնը չանենք:

Աշխատավոր ժողովուրդն ապստամբում է կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետության գեմ: Կապիտալիստները սրան քաշիստական տեսորով են պատասխանում: Նրանք ժո-

դովրդից իլում են նույնիով այն խղճուկ իրավունքները, վոր նա ունի բուրժուական գեմոկրատիայի յերկրներում: Թաշխտական յերկրներում աշխատավոր ժողովուրդը զրկված է բոլոր իրավունքներից: Յթել են բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, բացի ֆաշիստականներից: Ֆաշխտական գիշտատորները—Հիտլերը, Մուսովիչներն և ուրիշներն իրենց յերկրները կառավարում են առանց վորեւ վերահսկողության: Սահման չունի այն ծաղրուծանակը, վորին ֆաշխտական բանդիտները յենթարկում են ժողովրդական մասսաներին: Ֆաշիզմը վերածնում է միջնադարի ամենամռայլ սովորությունները: Ֆաշիզմի լծիտակ հեծող յերկրները համատարած բանտի յեն վերածված: Ֆաշխտները գրքեր են այրում խարույկների վրա, գաղանային շովինիզմ ու ռասայական ատելություն են արմատացնում, ահագին կուլտուրական արժեքներ են վոչչացնում: Բավական են մարդ մի անզգուշ խոսք արտասանի, վորպեսզի բանտ կամ համակենտրոնացման ճամբար ընկնի, ֆաշխտական դահճճների ճիշրանքներն ընկնի:

Բուրժուական յերկրներում բանվոր դասակարգը, և ամենից առաջ նրա կոմունիստական ավանդարդը, հանդես ե գալիս վորպես ֆաշիզմի դեմ ուղղված համաժողովրդական հականարկածի նախամարտիկ: Խսպանական ժողովուրդը կուրծքը դեմ տալով յեւլավ ֆաշխտական խոռվարանների դեմ, պաշտպանելով գեմոկրատական հսպանիան: Բուրժուական դեմոկրատիան, ինչքան ելայն կիսատապուտ ե ու խղճուկ սոցիալիստական դեմոկրատիայի համեմատությամբ, բանվոր դասակարգը կրծքով ե պաշտպանում ֆաշխտական տեսորից ու խավարամոլությունից:

Պրոլետարիատը կանգնած է համաժողովրդական ֆրոնտի գլուխ՝ ֆաշիզմին ու պատերազմին հականարված տալու համար: Նա բուրժուական գեմոկրատիան պաշտպանում է ֆաշիզմի պլղտոր ալիքների դեմ, ուժեր հավաքելով պայքարելու համար հանուն կապիտալիստական կարգերի տապարման, հանուն պլղուտարական դիկտուրայի հաստատման:

Վորքան ավելի ուժեղ ե տեսորը ֆաշխտական յերկրներում, այնքան ավելի խորն է ժողովրդի ցասումը և այնքան ավելի մոտ ե ազատագրման ժամը:

Այս իրադրության մեջ Խորհրդային Միությունը—իսկական, սոցիալիստական գեմոկրատիայի յերկրը—դեպի իրեն և գրավում ամբողջ առաջավոր մարդկության համակրանքն ու հույսերը:

Սոցիալիստական գեմոկրատիայի ծաղկումը ԽՍՀՄ-ում, աշխարհում սոցիալիզմի առաջին յերկրի հզորության ամրապնդումը նոր ուժեր և հաղորդում գեմոկրատիայի մարտիկներին ամբողջ աշխարհում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ՅԵՐԿԻՐՆ Ե

ԻՆՉՊԻՍԻՆ ԵՐ ՄԵՐ ՅԵՐԿԻՐԸ ՅՈՐԻԶՄԻ ՈՐՈՎ.

ՀԵՆԻՆԻ - Ստալինի մեծ կուսակցության ղեկավարության ներքո բանվոր դասակարգը մեր հայրենիքի աշխատավոր գյուղացիության աջակցությամբ 1917 թվի հոկտեմբերին տապալեց բուրժուազիայի իշխանությունը։ Յերեք տարի՝ 1918—1921 թ. թ. — Խորհրդային յերկրի բանվորներն ու գյուղացիները հետ եյին մղում սպառակ-գվարդիականների և ոտարերկրյա իմպերիալիստների զինված հարձակումները։ Հույս չունենալով իրենց ուժերի վրա, տապալված կալվածատերերն ու կապիտալիստները ոտարերկրյա զորքեր կանչեցին։ Խնտերվենտներն ուղղում եյին ստրկացնել մեր հայրենիքը, բաժանել մասերի, վերածել գաղութի։ Բայց այս նրանց չհաջողվեց։ Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակը Խորհրդային յերկրի յերեսից սրբեց բոլոր ինտերվենտներին, վոչնչացրեց ոռուական բուրժուա-կալվածատիրական հականեղափոխության բանակները։

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո բանվորները և գյուղացիները ձեռք զարկին տնտեսության զործին։ Խնդիրը դժվարին եր։ Յերկարամյա իմպերիալիստական պատերազմը և ապա ինտերվենցիան ավերեցին տնտեսությունը։ Հարկավոր եր լիկվիդացիայի յենթարկել ավերվածությունը։ Հարկավոր եր վոչնչացնել դարավոր հետամնացությունը, աղքատությունը, խալվարը։

Հասկանալու համար, թե ինչպիսի հսկայական, դժվարին ձանապարհ եր անցնելու Խորհրդային Միության աշխատավորությունը, հարկավոր ե վերհիշել, թե ինչ եր հին Ռուսաստանը։

Ռուսաստանը գլխավորապես հողագործական յերկիր եր, Յերկրում գերակշռությունը եր գյուղատնտեսությունը։

Յերկրի ներսում արտադրվող արդյունաբերական ապրանքաբանությունը չեյին բավականացնում։ Ռուսական արդյունաբերության համար հարկավոր մեքենաները և գազգյահները նմանապես հարկեր լինում ներմուծել արտասահմանից։ Յերկրում սեփական մեքենաշինական գործարաններ շատ քիչ կային։ Թուջ, պողպատ, պղինձ և այլ մետաղներ—այն ամենը, ինչից պատրաստում են մեքենաներ, շոգեքարշեր, գութաններ և այլն, նույնպես քիչ եր։

Յարական Ռուսաստանի ժողովրդական տնտեսության տեխնիկական զինվածությունը ծայր աստիճան ցածր եր։ Մինչհեղափոխական զինվածությունը ծայր աստիճան մասին լենինը խոսում եր, ինչպես մի յերկրի մասին, վորն աշրտադրության ժամանակակից գործիքներով սարքավորված և չորս անգամ վատ՝ Անգլիայից, հինգ անգամ վատ՝ Գերմանիայից, տասն անգամ վատ՝ Ամերիկայից։ 1911 թվին թուջի տարեկան զործածությունը բնակչության մեկ հոգուն կազմում եր՝ Ամերիկայում 233 կիլոդրամ, Գերմանիայում՝ 136, Անգլիայում՝ 105, իսկ Ռուսաստանում՝ միայն 25 կիլոդրամ։ Մինչդեռ գործածվող թուջի քանակը ցույց ե տակիս յերկրի ինդուստրիալ մակարդակը։

Ռուսաստանի հողի ընդերքում կային զանազան հանքերի հսկայական պաշարներ, վորոնցից զանազան մետաղներ են ձուլում։ Բայց այդ հանքանյութերը յերկրի յերեսը գուրս բերելու համար հարկավոր եր կառուցել հանքահորեր, հանքահորերում գնել հզոր մեքենաներ։ Այդ հանքանյութերը մետաղների վերածելու համար հարկավոր եր կառուցել հնոցներ, մետալուրգիական զործարաններ։ Յեթե Ռուսաստանում հանքերի հանույթ կատարվում եր, ապա այդ անում եյին գլխավորապես ոտարերկրյա կապիտալիստները։ Նրանք ցարական իշխանությունից կոնցեսիան (կապալով) վերցնում եյին զանազան հանքերով և քարածություն հարուստ հողամասեր, զանոնում եյին հանքահորերի, հանքանում հարուստ հողամասեր, զանոնում եյին հանքահորերի տերեր, քավայրերի և հանքային բոլոր հարստությունների տերեր, գրանք վերամշակում եյին յերկաթի և ուրիշ մետաղների և հըսուդրանք վերամշակում եյին արտասահմանում կամ կայական ոգուաներով վաճառում եյին արտասահմանում կամ հենց Ռուսաստանում։

Դոնբասում տեր ու տնողեն եյին ֆրանսական և բելգիական կապիտալիստները։ Բազմի նավթը պատկանում եր անգլիացիներին։ Շատ գործարաններ ու ֆարբիկաներ պատկանում եյին ֆրանսական, անգլիական և գերմանական կապիտալիստներին։ Մասն արդյունաբերությունը ցարական Ռուսաստանում թույլ եր

գարդացած, և այդ պատճառով յերկիրը կախում ուներ ոտարերկորյա կապիտալից:

Քանի վոր յերկիրը չուներ իր հզոր ծանր ինդուստրիան (արդյունաբերությունը), նրա ամբողջ ժողովրդական տնտեսությունը հետամնաց եր: Գյուղատնտեսությունը նույնպես ծայր աստիճան հետամնաց եր: Հսկայական գյուղացիական յերկիրը, վոր ուներ լայնածավալ դաշտեր, մարդաբետիններ և անտառներ, կանգնած եր տեխնիկական և տնտեսական ծայրաստիճան ցածր մակարդակի վրա, մի կերպ յուղ գնալով իր խղճուկ, աղքատիկ բերքով:

Հողի մեծ մասը գտնվում եր աղնվական-կալվածատերերի, յեղեցու, թագավորի, բուրժուազիայի ձեռքում: 500 դեսյատինից ավելի հող ունեցող խոշորագույն կալվածատերերի թիվը մոտ 30 հազար եր, նրանք ունեյին մոտավորապես 70 միլիոն դեսյատին հող: Միևնույն ժամանակ մոտ 10 միլիոն գյուղացիական չքավորագույն տնտեսություններ ունեյին նույնպես 70 միլիոն դեսյատին հող: Ամեն մի գյուղացիական ընտանիք ուներ մոտ 7 դեսյատին հող, իսկ ամեն մի խոշորագույն կալվածատեր՝ մոտ 2300 դեսյատին: Խոշորագույն աղնվական-կալվածատերերը տիրում եյին հողի հսկայական տարածությունների: Կոմս Բոբրինսկին 60 հազար դեսյատինի տեր եր, Խուկավիշնիկովը՝ ավելի քան 800 հազար դեսյատինի, Գոլիցինը՝ ավելի քան մեկ միլիոն դեսյատինի:

Գյուղատնտեսական մեքենաներ ունեյին միայն կալվածատերեն ու կուլակները: Արտադրության գլխավոր գործիքը արորն եր: Ամեն յերեք գյուղացուց մեկը ձի չուներ: Հացը գյուղացիներին բավականացնում եր սովորաբար միայն մինչեւ գարուն: Գյուղում թագավորում եր աղքատությունը, կալվածատիրական և կուլակյին ճորտությունը:

Բերքատվությունը ցածր եր: Ժողովուրդն աղքատ եր ու անդրագետ: Չորս մարդուց միայն մեկը զիտեր կարդալ ու գրել Սիբիրում—միայն վեցից մեկը: Միջին Ասիայում—միայն տասնյոթից մեկը: Յերեխաների չորս հինգերորդ մասը գուրկ եր կրթությունից, դատապարտված եր անդրագիտության: Դպրոցի վուխարեն յերեխաները հաճախում եյին յեկեղեցի: Տերերները բժացնում եյին ժողովրդին: Ողին թմրեցնում եր գլուխները: 1905 թվին պետությունը վաճառեց 75 միլիոն դույլ ողի, իսկ 1909 թվին՝ 105 միլիոն դույլ:

Ծանր եր արդյունաբերական բանվորների վիճակը: Գյուղը մշտապես հարյուր-հազարավոր գործազուրկներ եր գուրս շպըրտում: Աշխատավարձը ցածր եր: Բանվորական որը յերկար եր: 1912 թվին արդյունաբերական բանվորի տարեկան միջին վաստակը կազմում եր 252 ռուբլի, տեքստիլ արդյունաբերության մեջ՝ 220 ռուբլի, իսկ շաքարի գործարաններում՝ 106 ռուբլի: Ֆաբրիկաներում բանվորական որը հավասար եր 10—12, և նույնիսկ ավելի ժամի: Բատրակները կուլակների և կալվածատերերի մոտ աշխատում եյին արևածագից մինչեւ արեւամուտ: Կոլեկտիվ պայմանագրեր չկային: Արհեստակցական միությունները չեյին ճանաչվում: Վոստիկանությունը հալածում եր բանվորական կազմակերպությունները: Պետական սոցիալական ապահովագրություն չկար:

Ժողովուրդը միանգամայն իրավագուրկ եր: Ցարական կառավարությունը կալվածատերերի գիկտատուրան եր: Այդ կառավարությունը պաշտպանում եր նաև կապիտալիստների շահերը: Ցարը, կալվածատերերը և բուրժուազիան կառավարում եյին տերեներների, վոստիկանության, ժանդարմների ոգնությամբ, գաղանաբարո դատ տեսնելով աշխատավորության նկատմամբ: Առավելապես խիստ եյին ճնշում վոչուու ազգություններին:

Ցարական Ռուսաստանն ամբողջ աշխարհում հայտնի յեր վորպես ժողովուրդների բանտ:

Ժողովուրդների այդ բանտում բնակչության կեսից ավելին վոչուումներ եյին: Հարյուրից ավելի ազգություններ յենթարկվում եյին դաժան շահագործման և ազգային ճնշման: Ազգային ճնշումն առանձնապես ուժեղ եր յերկրի ծայրամասերում:

Ցարական կառավարությունը և տիրող դասակարգերը սիստեմատիկաբար թալանում եյին այդ ծայրամասերում բնակվող ժողովուրդներին: Ղազախական, բաշկիրական, թաթարական և այլ գյուղացիներից կառավարությունը խից լավագույն հողերը և հանձնեց ոստ կալվածատերերին ու կուլակներին: Ցարական կառավարությունը թույլ չեր տալիս տեղական արդյունաբերության զարգացումը, գիտակցաբար կասեցնում եր հին Ռուսաստանի ժողովուրդների և ծայրամասերի տնտեսական զարգացումը: Ցարական կառավարությունը նվաճված մարդերում ու շրջաններում հաստատել եր առանձնապես դաժան վոստիկանականության, քաղաքական իրավագրկման և ճնշման վրա: Ցարական չինովիկ-

Ները ուղղափառ տերտերների հետ միասին իրականացնում եյին Ռուսաստանում ապրող ժողովուրդների «ոռուսացման» քաղաքականությունը, ճնշելով նրանց կուլտուրան, բռնի արմատացնելով ոռուսաց լեզուն և ուղղափառ դավանանքը: Ցարիկմը մեկ աղդ լարում եր մյուսի գեմ, տարբեր աղդությունների աշխատավորության մեջ թշնամություն ու յերկառակություն եր սերմանում, արյունալի կոտորածներ եր կազմակերպում հայերի և թուրքերի, ուղբեկների և թուրքմենների, լեների և ուկրաինացիների միջև: Ցարական կառավարությունը կազմակերպում ու խրախուսում եր հրեական ջարդեր՝ աշխատավոր հրեաներին թալանում, ծեծում, սպանում եյին:

Ցարիկմը անգթաբար ճնշում եր աղդային կուլտուրայի ամեն մի նշույլ: Մի քանի ժողովուրդներ զբկված եյին նույնիսկ անունից: Նրանց ծաղրական մականուններ եյին տալիս՝ նենեցներին անվանում եյին «սամոյեդներ», ուղբեկներին՝ «սարթեր», ուկրաինացիներին՝ «խոխոլներ»:

Ազնվականությունն ու բուրժուազիան հարյուրավոր տարիներ իշխացին Ռուսաստանում: Սակայն նրանք չկարողացան ու չեյին ել ցանկանում յերկրում խավարն ու հետամնացությունը վոչնչացնել: Այդ կարողացավ անել միայն բանվոր դասակարգը՝ զյուղացիության հետ դաշնակցած:

ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

Քաղաքացիական պատերազմը վերջանալուց հետո խորհրդային իշխանությունը չտեսնված արագությամբ վերականգնեց իմալերիալիստական և քաղաքացիական պատերազմների ժամանակ ավերված տնտեսությունը: Յերկրում դարձյալ վերակենդանացան մեքենաները, գործարանային ծխնելույղները ծխացին, աշխատեցին հանքահորերը և յերկաթուղիները:

Սակայն հնի վերականգնումը քիչ եր: Հարկավոր եր ընդուայնել հին գործարանները և կառուցել նորերը: Սոցիալիզմը կառուցելու համար հարկավոր եր ստեղծել նոր բարձր տեխնիկա:

Խնդիրն այն եր, վոր կիսաֆեոդալական տեխնիկա ունեցող հետամնաց գյուղատնտեսական մեր յերկիրը վերածվի առաջավոր, արդյունաբերական յերկիր: Խնդիրն այն եր, վոր տեխնիկա-տնտեսական տեսակետից պետք եր համանել և անցնել կտպիտալիստական առաջավոր յերկրներից: Խնդիրն այն եր, վոր պետք եր ստեղծել սեփական խոշոր սոցիալիստական արդյունա-

քերություն: Այդ արդյունաբերությունը պետք ե ընդունակ լիներ գանազան մեքենաներ մատակարարելու մեր ամբողջ ժողովրդական տնտեսության մնացիրն այն եր, վոր պետք եր, հենվելով հղոր արդյունաբերության վրա, սոցիալիստական ձևով կերափոխել նաև գյուղատնտեսությունը, այն տանել սոցիալիստական ուղիղից: Խնդիրն այն եր, վոր պետք եր արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ արտադրության սոցիալիստական ձևերի զարգացման հիման վրա հասնել շահագործողական դասակարգերի լիակատար վոչնչացման, սոցիալիզմի հաղթության:

Ենինը և Ստալինը մատնանշում եյին, վոր մեր յերկրում կաայն բոլորը, ինչ անհրաժեշտ և բավական ե լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար:

Մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան-ստալինյան պլանի գեմ դուրս յեկան բանվոր դասակարգի նողկալի թշնամիները՝ Տրոցկին, Զինովյեվը, Կամենեվը և նրանց արբանյակները: Նրանք պնդում եյին, թե մեր յերկրում հնարավոր չե սոցիալիզմ կառուցել: Նրանք ամեն կերպ աշխատում եյին վիժեցնել սոցիալիզմի կառուցումը: Նրանք ջանում եյին անվտանություն սերմանել զեպի բանվոր դասակարգի ուժերը, խզել բանվոր դասակարգի և գյուղացիության միջև յեղած դաշնքը: Նրանք ջանում եյին վերականգնել կապիտալիզմը: Նրանք ուղում եյին մեր հայրենիքը վաճառել իմալերիալիստական գիշատիչներին:

Յերկրի ինգուստարացման և գյուղատնտեսության կողեկտիվացման գեմ նմանապես դուրս յեկան կապիտալիզմի աջ պաշտպաններ՝ Բուխարինը, Ռիկովը, Տոմսկին իրենց արբանյակներով: Նրանք պայքարում եյին սոցիալիստական արդյունաբերության ստեղծման գեմ, ֆաբրիկաների ու գործարանների արագ շինարարության գեմ: Նրանք պահանջում եյին, վոր մեր յերկիրը մնա հետամնաց գյուղատնտեսական յերկիր: Նրանք խորհութեանուների և կոլտնտեսությունների շինարարության գեմ եյին դուրս գալիս: Աջերը նմանապես ջանում եյին վերականգնել կապիտալիզմը: Նրանք ևս, ինչպես և տրոցկիստները, ուղում եյին մեր հայրենիքը վաճառել իմալերիալիստական գիշատիչներին:

Տրոցկիստների և կապիտալիզմի աջ ռեստավրատորների շուրջ համախմբվեցին սոցիալիզմի բոլոր թշնամիները, բանվոր դասակարգի և գյուղացիության բոլոր թշնամիները: Խաբելով մի քանի կարճատես և քաղաքականապես անփույթ տնտեսավարների, նրանք շարքից դուրս եյին գցում Դոնբասի ածխահորերը, կազ-

մակերպում գնացքների խորտակում, կոնսերվում մեջ մանրած ապակի եյին գցում:

Կուսակցությունը, ընկեր Ստալինի դեկավարությամբ, ջախացին թշնամական բոլոր բանդաները՝ տրոցկիստներին և զինվյեվականներին, կուտակության աջ ագենտներին, բուխարինականներին և ռիկովականներին՝ ամեն գույնի վասարարներին՝ Պարտություն կը եղով՝ տրոցկիստներն ու բուխարինականները ծախվեցին ֆաշիստական հետախուզություններին, դարձան նրանց վարձկան լրտեսներն ու դիվերսանաները:

Ընկեր Ստալինի դեկավարությամբ բոլցնիների կուսակցությունը ջախջախեց սոցիալիզմի բոլոր թշնամիներին:

Ամբողջ յերկրում ծավալից չտեսնված շինարարությունը Յերկու հնդամյակների ընթացքում (1928—1932 և 1933—1937 թվերին) մեր յերկրում կատարվեցին մեծագույն փոփոխություններ: Յերկիրը կերպարանափոխվեց:

Արդեն առաջին հնդամյակի ընթացքում յերկրի ինդուստրացումը իրավորձվեց և ԽՍՀՄ-ն գյուղատնտեսական հետամնաց յերկրից դարձավ առաջավոր ինդուստրիալ պետություն: Գյուղում բարձրացավ կուեկտիվացման ալիքը, միջակ գյուղացին վուաք դրեց սոցիալիզմի ուղին, մասսայականորեն կուտնաեսություն մտավ: Կապիտալիստական տարրերը համարյա ամբողջապես դուրս մղվեցին արդյունաբերության և առևտրի ասպարեզից: Համատարած կուեկտիվացման հիման վրա գյուղատնտեսության մեջ անցկացվեց կուլակության, վորապես դասակարգի, վերացումը: Այսպիսով, առաջին հնդամյակի ընթացքում ԽՍՀՄ-ում կառուցվեց սոցիալիստական եկանումիկայի հիմքը:

Յերկրորդ հնդամյակում ԽՍՀՄ-ում շարունակվում եր սոցիալիզմի կառուցումը, տեղի յեր ունենում շահագործող դասակարգերի վերջնական վոչչացումը, տարրվում եր սոցիալիստական հասարակության կառուցման ավարտումը: Յերկրորդ հնդամյակի արդյունքը յեղավ այն, վոր ԽՍՀՄ-ում անդառնալիորեն հաղթանակեց սոցիալիզմը, կառուցվեց հիմնականում կոմունիզմի առաջին ֆազը: ԽՍՀՄ-ում հաղթանակեց արտադրության միջոցների և գործիքների հանրային, սոցիալիստական սեփականությունը: ԽՍՀՄ-ում վերջնականապես վոչչացված են շահագործող դասակարգերը: ԽՍՀՄ-ում իրագործված ե սոցիալիստական, պլանային տնտեսությունը, վորն առահօղում ե աշխատավորների նյութական և կուտարական մակարդակի անշեղ բարձրացումը, վերացնում ե:

Ճնաժամամերի, գործազրկության և մասսաների աղքատության հնարավորությունը: ԽՍՀՄ-ում իրականացվում ե բաշխումն ըստ աշխատանքի կատարելու սոցիալիստական սկզբունքը և աշխատանքի, հանգստի, կրթության ու ծերության ապահովման իրավունքը, ԽՍՀՄ-ում իրականացված և աշխարհում ամենահետեւղական, ամենալայն սոցիալիստական դեմոկրատիան:

Այս բոլոր մեծ նվաճումները գրված են ԽՍՀՄ-ի Ստալինյան Սահմանադրության մեջ, բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության Սահմանադրության մեջ:

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԶՈՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ Ե

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը մեր հայրենիքը հետամնաց գյուղատնտեսական յերկրից վերածեց հզոր ինդուստրիալ տերության, առաջավոր տեխնիկայի յերկրի:

Փոխվեց խոշոր արդյունաբերության և գյուղատնտեսության հարաբերակցությունը: Յեթե մինչև հեղափոխությունը (1913 թ.) արդյունաբերությունն արտադրում եր ամբողջ պրոդուկցիայի $42,1^0/\text{o}$ ը, իսկ գյուղատնտեսությունը՝ $57,9^0/\text{o}$ ը, ապա այժմ արդյունաբերությունը արտադրում ե ամբողջ պրոդուկցիայի $77,4^0/\text{o}$ ը, իսկ գյուղատնտեսությունը՝ $22,6^0/\text{o}$ ը: Այս, իհարկե, չի նշանակում, թե գյուղատնտեսությունը սկսել ե ավելի քիչ մը՝ թերքներ արտադրել: Վհչ, մեր գյուղատնտեսությունն անընդհատ աճում ե, բայց համեմատած արդյունաբերության հետ՝ նվազել ե նրա տեսակարար կշիռը: Մեր յերկիրը դարձել ե ինդուստրիալ յերկիր:

Փոխվել ե և ծանր ու թեթև արդյունաբերության հարաբերակցությունը մեր յերկրի պրոդուկցիայի մեջ: Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը ծանր արդյունաբերությունը արտադրում եր 4,7 միլիարդ ոսւբլու պրոդուկցիա, իսկ սպառման առարկաներ արտադրող արդյունաբերությունը՝ 6,3 միլիարդ ոսւբլու: Այժմ հարաբերակցությունը փոխվել ե: Առանձի չափով աճել ե ամբողջ արդյունաբերությունը, բայց հարաբերակցությունը փոխվել ե հոգուտ ծանր արդյունաբերության: Արտադրության միջոցներ արտադրող արդյունաբերությունը 1936 թվին արտադրել ե 49,1 միլիարդ ոսւբլու պրոդուկցիա, իսկ սպառման առարկաներ արտադրող արդյունաբերությունը՝ 31,8 միլիարդ ոսւբլու:

Ինդուստրացման հաղթանակը ԽՍՀՄ-ում առաջ բերեց ԽՍՀՄ-ի

ծանր արդյունաբերության հսկայական աճում: Մինչեղափոխական Ռուսաստանում արտադրվում էր (1913 թ.) 4216 հազար տոնն թուջ, 4231 հազար տոնն պողպատ, 3660 հազար տոնն գլածո (պրօքատ): Ստալինյան հնգամյակների տարիներում ԽՍՀՄ-ում կառուցվել են սև մետալուրգիայի բազմաթիվ այնպիսի գիգանտներ, վորպիսիք վոչ միայն ցարական Ռուսաստանում չկային, այլ չկան նաև ժամանակակից առաջավոր կապիտալիստական յերկրներում: Եթե սև մետալուրգիայի նորակառույց տասը խորագույն գիգանտներից վերցնենք միայն յերեքը՝ Մագնիտոգորսկի Ստալինի անվան մետալուրգիական գործարանը, Կուլնեցկի Ստալինի անվան մետալուրգիական գործարանը և Մակեյևկայի Կիրովի անվան մետալուրգիական գործարանը, ապա միայն այս յերեք գործարաններն ավելի շատ թուջ են արտադրում, քան արտադրում եին հին հին ցարական Ռուսաստանի բոլոր գործարանները: 1936 թվին այս յերեք գործարաններն արտադրեցին 4236 հազար տոնն թուջ, 1913 թվին արտադրված 4216 հազար տոնն թուջի դիմաց: ԽՍՀՄ-ի բոլոր գործարանները 1936 թվին արտադրեցին 14400 հազար տոնն թուջ, այսինքն նախահեղափոխական պրոդուկցիայից 3,4 անգամ ավելի: 1936 թվին արտադրված է 16.400 հազար տոնն պողպատ, այսինքն՝ համարյա 4 անգամ ավելի, և զանգո (պրօքատ) 12454 հազար տոնն, այսինքն՝ 3,4 անգամ ավելի, քան մինչև հեղափոխությունը:

Սև մետալուրգիան, դա մնացած վողջ արդյունաբերության զարգացման հիմքն է, մեր ծանր արդյունաբերության ծուծը հանդիսացող խորհրդային մեքենաշինության զարգացման բաղան: Թուջի և պողպատի արտադրության աճումը ԽՍՀՄ-ում հիմք ստեղծեց խորհրդային մեքենաշինության զարգացման համար: ԽՍՀՄ-ը ստեղծել է յուր մեքենաշինական արդյունաբերությունը: Որինակ, վերցնենք մեքենաների արտադրությունը ծանր ինդուստրիայի համար:

Մինչև պրոլետարական սոցիալիստական Մեծ հեղափոխությունը Ռուսաստանում տարեկան արտադրվում էր 1490 մետաղ կտրող դաշտյան, իսկ 1936 թվին ԽՍՀՄ-ում այդ դաշտյանից արտադրվեց 46049 հատ, այսինքն՝ 31 անգամ ավելի: Մինչև հեղափոխությունը (1913 թ.), Ռուսաստանում արտադրվել են շողեկաթուաներ 28000 քառակուսի մետր տաքացման մակերեսով, իսկ 1936 թվին ԽՍՀՄ-ում՝ 265,4 հազար քառակուսի մետր, այսինքն՝ 9 անգամ ավելի: Մինչև հեղափոխությունը (1913 թ.)

արտադրվել են 5,9 հազար կիլովատ կարողությամբ շողետուրիններ, իսկ 1936 թվին ԽՍՀՄ-ում՝ 622,9 հազար կիլովատ, այսինքն՝ 106 անգամ ավելի: Մինչև հեղափոխությունը Ռուսաստանում բոլորին չեյին արտադրում ներհատիչ մեքենաներ, հանքահատ մուրճեր, եքսկավատորներ, հիդրոտուրբիններ: Իսկ ԽՍՀՄ-ում 1936 թ. արտադրվել է 421 ներհատիչ մեքենա, 8648 հանքահատ մուրճ, 573 եքսկավատոր, 72,7 հազար կիլովատ կարողությամբ հիդրոտուրբին: Ստալինյան հնգամյակների տարիներում ԽՍՀՄ-ում կառուցվել են մեքենաշինության խոշորագույն գիգանտներ՝ Ստալինի անվան կրամատորսկի գործարանը, Կագանովիչի անվան «Շարիկոպողիպնիկ» գործարանը, Խարկովի տուրբոգեներատորային գործարանը, Ուրալի ելեկտրոմեքենաշինական գործարանը և ուրիշ շատ գործարաններ:

ԽՍՀՄ-ում աճեցին արդյունաբերության մի շարք այնպիսի ճյուղեր, վորպիսիք գոյություն չունեյին ցարական Ռուսաստանում: Որինակ, մինչև հեղափոխությունը Ռուսաստանում տրակտորային արդյունաբերությունը չկար: Ստալինյան հնգամյակների տարիներում կառուցված են տրակտորների խոշորագույն գործարաններ Ստալինդրագում, Խարկովում, Գելյարբինսկում: Այս գործարանները 1936 թվին միայն արտադրեցին 116054 տրակտոր: Մինչև հեղափոխությունը Ռուսաստանում կոմբայններ չեյին պատրաստվում, իսկ 1936 թվին ԽՍՀՄ-ում արտադրված է այդ հիմնավեմքենաներից 42,6 հազար հատ: Ամեն մի մեքենա, նրան սպասարկող յերեք մարդով 13,5 հեկտար հողի բերքը հավաքելիս կատարում է 330 մարդու և 20 ձիու աշխատանք, վորոնք հարկավոր են 13,5 հեկտարի բերքահավաքը ձեռքով կատարելու գեղագում:

Ցարական հին Ռուսաստանը չուներ ավտոմոբիլային արդյունաբերություն, իսկ այժմ մենք ունենք ավտոմոբիլի կառուցման այնպիսի գիգանտներ, վորպիսիք են Ստալինի անվան ավտոավտովի անվան գործարանը՝ Գորգործարանը Մուկվայում և Մոլոտովի անվան գործարանը 136,7 հազար ավտոմոբիլ:

Մինչև հեղափոխական Ռուսաստանը քիմիական արդյունաբերություն համարյա չուներ: Քիմիական արդյունաբերության արտադրանքը 1936 թվին 13,6 անգամ գերազանցեց մինչեղափոխականին: 1913 թվին ծծմբաթթու արտադրվել է 121 գործականին: 1936 թվին՝ 1208 հազար տոնն: Ընդումին, հազար տոնն, իսկ 1936 թվին՝ 1208 հազար տոնն: Ընդումին, միայն յերեք ծծմբաթթվային գործարանները՝ Ստալինի անվան՝

Կոնստանտինովսկի, Կույրիշելի անվան՝ Նեվսկի և Վոսկրեսենսկի գործարանները 1936 թվին տվին 353 հազար տոնն, այսինքն՝ յերեք անգամ ավելի, քան մինչհեղափոխական Ռուսաստանի ամբողջ ծծմբաթթվային արդյունաբերությունը։ Ռետինի արդյունաբերության արտադրանքը ԽՍՀՄ-ում տասն անգամ ավելի յե, քան ցարական Ռուսաստանում եր։ Միայն մի նոր, Յարութավի ռետինի-աղբեստի կոմբինատը 1936 թվին յերեք անգամ ավելի արտադրանք տվեց, քան ցարական Ռուսաստանի ամբողջ ռետինի արդյունաբերությունը։

Խորհրդային իշխանության տարիներում հսկայական աշխատանք ե կատարված Խորհրդային Միության ելեկտրիֆիկացիայի ասպարեզում։ Յեթե 1913 թվին ցարական Ռուսաստանի բոլոր ելեկտրակայանների կարողությունը հավասար եր 1,1 միլիոն կիլովատի, ապա 1936 թվին Խորհրդային Միության ելեկտրակայանների կարողությունը հասավ 7,5 միլիոն կիլովատի։ Միայն Դնեպրովյան հիդրոէլեկտրակայանը, վորը գործարկվեց 1932 թվին, 1936 թվին ավելի ելեկտրոններգիա տվեց, քան ցարական Ռուսաստանի բոլոր ելեկտրակայանները 1913 թվին։

ԽՍՀՄ-ում ստեղծված են արդյունաբերության այնպիսի նոր ձյուղեր, ինչպիսիք են ողանավաշինությունը, մոտորաշինությունը, սինթետիկ կառուչուկի, արհեստական մետաքսի արտադրությունը և այլն։

ԽՍՀՄ-ում նմանապես հսկայական չափով աճել են առևել արդյունաբերությունը։ Գործածքների, հազուստեղենի, կոշկեղենի արտադրությունը ԽՍՀՄ-ում 1936 թվին վեց անգամ ավելի յեր մինչպատերազմյան արտադրությունից, իսկ սննդամթերքների արտադրությունը՝ 4,5 անգամ ավելի։ Կարի արդյունաբերության արտադրանքը 186 անգամ գերազանցում ե մինչպատերազմյանին, տրիկոտաժինը՝ 72 անգամ, կոշկեղենինը՝ 20 անգամ։ Կոնսերվի արդյունաբերության արտադրանքը գերազանցում ե մինչպատերազմյանին 13,6 անգամ, հրուշակեղենի արտադրանքը՝ 11 անգամ, ծխախոտինը՝ 3,8 անգամ և այլն։ Միմիայն սննդարդյունաբերության 1936 թվի արտադրանքն ավելի յե, քան մինչհեղափոխական Ռուսաստանի ամբողջ խոշոր արդյունաբերության արտադրանքը։

Սրան մնում ե ավելացնել նաև այն, վոր ԽՍՀՄ-ում կառուցված են 286 հացի նոր գործարաններ և 24 մսի կոմբինատներ, վորոնք չեն յեղել մինչհեղափոխական Ռուսաստանում։

Միայն Մոսկվայի մսի կոմբինատը 1936 թվին պատրաստել ե 54,2 հաղար տոնն յերշիկ (կօլբասա), մինչդեռ յերշիկեղենի ամբողջ արտադրանքը 1913 թվին կազմում եր 60 հաղար տոնն։

Նորագույն տեխնիկական բաղայի վրա ստեղծված մեր արդյունաբերության հսկայական աճումը բազմապատճեն անգամ հեշտացնում ե բանվորի աշխատանքը, ավելացնում նրա արտադրողականությունը, քանի վոր արդյունաբերության աճմանը գուղընթաց մեզ մոտ տեղի յե ունենում աշխատանքի մեքենայացման պրոցես։ 1913 թվին ցարական Ռուսաստանում քառածինի հանույթը մեքենայացված եր 1,7%/₀-ով, իսկ 1936 թվին Խորհրդային Միության մեջ քարածինի հանույթի մեքենայացումը հասավ 88%/₀-ի։ Քարածինի հանույթի մեքենայացման գործում ԽՍՀՄ-ն ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՆ ե զրագել։ Յեթե 1913 թվին ցարական Ռուսաստանում նավթի հանույթը մեքենայացված եր միայն 5,9%/₀-ով, ապա այժմս նավթի հանույթի մեքենայացումը Խորհրդային Միության մեջ հասել ե 98%/₀-ի։ Այս ամենը մեր սոցիալիստական արդյունաբերության մեջ հասցըել ե աշխատանքի արտադրողականության հսկայական աճմանը։ Միմիայն 1936 թվին, ստախանովյան շարժման առաջին տարում, արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 21%/₀-ով, իսկ ծանր արդյունաբերության մեջ, վորտեղ ծնունդ առավ ստախանովյան շարժումը, — 26%/₀-ով։ 1913 թվին ամեն մի բանվորի թուջի արտադրանքը հավասար եր 220 տոննի, իսկ 1936 թվին մեկ բանվորն արտադրում եր 676 տոնն թուջ, այսինքն՝ 3 անգամից ել ավելի։ 1913 թվին ցարական Ռուսաստանում մեկ բանվորն արտադրում եր 276 տոնն նավթ, իսկ 1936 թվին Խորհրդային Միության նավթագործությունը արտադրության ամառավել է 1319 տոնն, այսինքն՝ համարյա 5 անգամ ավելի։

Խորհրդային Միությունը արդյունաբերական ապրանքներ ներմուծող յերկրից դարձավ այդպիսի ապրանքներ արտահնող յերկիր։ Այսպես, յեթե 1913 թվին ցարական Ռուսաստան ներմուծվել եյին 38729 հազար վոսկի ոռություն գյուղատնտեսական մեքենաներ, իսկ արտահանվել եր՝ զերո, ապա 1936 թվին Խորհրդային Միություն ներմուծված ե 114 հազար վոսկի ոռություն, իսկ արտահանված ե 664 հազար վոսկի ոռություն, այսինքն՝ արտահանումը 5 անգամ գերազանցում է ներմուծումից։ Յեթե 1913 թվին ցարական Ռուսաստան ներմուծվել եյին 17381 հազար վոսկի ոռություն

ավտոմեքենաներ, իսկ արտահանված՝ զերո, ապա 1936 թվին Խորհրդային Միություն ներմուծված է նույն մեքենաներից 459 հազար վուկի ոռուբլու, իսկ արտահանված է 2719 հազար վուկի ոռուբլու, ուրեմն արտահանումը բազմապատիկ անգամ գերազանցում է ներմուծումից: 1913 թվին ցարական Ռուսաստան է ներմուծված 3084 հազար վուկի ոռուբլու թուջ, 1936 թվին Խորհրդային Միությունն արտասահմանից վնչ մի փութ թուջ չներմուծեց, իսկ արտահանեց 5571 հազար վուկի ոռուբլու թուջ:

Հետամնաց ագրարային յերկրից Խորհրդային Միությունը վերածվեց առաջավոր ինդուստրիալ յերկրի, տնտեսապես դարձավ անկախ: Մեր յերկրում այժմ ստեղծված ե տեխնիկական հզոր բաղադրամական ամբողջ տնտեսության վերակառուցման համար: Այս ամենը նշանակում է, վոր մենք հաջողությամբ կատարում ենք տեխնիկա-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին «հասնելու և նրանցից անցնելու» խնդիրը: Այդ մասին ամեն խոսքից ավելի լավ վկայում են հետևյալ ցայտուն թվերը, վորոնք ցույց են տալիս, թե ինչպիսի տեղ եր գրավում Յեղուպայում և ամբողջ աշխարհում ցարական Ռուսաստանի արդյունաբերությունը և ինչպիսի տեղ ե գրավում այժմ Խորհրդային Միության արդյունաբերությունը:

ըագնդի վրա գրավում ե ԶՈՐՅՈՒՐԴ տեղը և Յեկրտայում յերբորդ տեղը: Յերկաթահանքի հանույթի բնագավառում Խորհրդային Միությունը Յեկրտայում բարձրացել է ԱՌԱՋԻՆ տեղը և յերկրագնդի վրա ՅԵՐԿՐՈՒՐԴ տեղը: Այժմ Խորհրդային Միությունը վոսկու հանույթի և սուլպերֆոսֆատի արտադրության բնագավառում Յեկրտայում գրավում է ԱՌԱՋԻՆ տեղը և յերկրագնդի վրա ԱՌԱՋԻՆ տեղը՝ ճակնդեղից շաքար պատրաստելու բնագավառում:

Մեր յերկրի բուռն կերպով առաջ շարժվող ինկուստրացման հետ միասին հսկայական չափով աճել ե և Խորհրդային Միության բանվոր դասակարգը։ Ցարական Ռուսաստանում յերկրի ամբողջ տնտեսության մեջ աշխատող բանվորների և ծառայողների քանակը 1913 թվին հավասար եր 11,400 հազար հոգու, իսկ 1936 թվին՝ Խորհրդային Միությունում ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ բանվորների և ծառայողների քանակը հավասար ե արդեն 25,800 հազար հոգու, հետեապես, աճել ե 14,400 հազար մարդով, այսինքն 2,3 անգամ։

Մեր յերկրի սոցիալիստական ինդուստրացման հաղթանակի այս բոլոր փաստերը խոսում են տնտեսության խորհրդային սոցիալիստական սիստեմի մեծագույն կենսունակության և կապիտալիստականի հանդեպ մեծագույն գերազանցության մասին։ Տնտեսության մեր սիստեմը, մեր սոցիալիստական արդյունաբերությունը չգիտեալ այն ծանր տնտեսական ճգնաժամերը, վորոնք կանոնավոր կերպով և ավելի ու ավելի հաճախ ժամկետներում ցնցում են կապիտալիստական աշխարհի արդյունաբերությունը և առաջացնում են նրա ստեղծած մթերքների հսկայաքանակ անմիտ վզչնչացում։ Մեր յերկրի բանվոր դասակարգը չգիտե գործազրկության սարսափները, կապիտալիստական արդյունաբերության այդ անխուսափելի ուղեկցին։ Մեր յերկրի բանվոր դասակարգը չգիտե կապիտալիստական շահագործման ճնշումը, նրա աշխատանքը ազատ ե և ուրախ, նա աշխատում ե իր համար, մեր ծաղկող սոցիալիստական հայրենիքի համար։ Մեր յերկրի աշխատավոր մարդը վստահ է իր վաղվա որվա համար, նա գիտե, վոր այդ որը նոր հաղթանակներ ե բերում մեր հայրենիքին և աշխատավորների նյութական բարեկեցության նոր աճում։ Անա թե ինչու այսպես բուռն կերպով և աճում և ծաղկում մեր փառապանձ, սիրելի հայրենիքը։

ԱՄԵՆԱԱՌԱՋԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՑԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՅԵՐԿԻՐԸ

Մեր յերկիրը մինչև հեղափոխությունը կալվածատերերի և ցարական կառավարության կողմից քայլքայլած ազգատ գյուղացիության յերկիր եր: Նա մանր, չափազանց հետամնաց գյուղատնտեսության յերկիր եր: Աշխատանքի բարբարոսական յեղանակներ, պապենական գործիքներ, չափազանց ցածր բերքատվություն՝ անա ինչպիսին եր ցարական մուսաստանի գյուղատնտեսությունը:

Ներկայումս Խորհրդային Միությունը աշխարհիս ամենախառ հողագործության յերկիրն ե, մի հողագործություն, վոր սոցիալիստական ձևով ե կազմակերպված: Կոլտնտեսություններն ու խորհրդական արմատապես փոխեցին գյուղատնտեսության կերպարանքը: Վերջնականապես արմատիվի արվեցին կապիտալիզմի արմատները գյուղում, վորակել նրանք առավելապես կենսառության մեջ: Անեցին հանրային խոշոր տնտեսություններ, վորոնք հասել են կապիտալիզմի և վոչ մի յերկրում չտեսնված չափերի: Այս խոշոր սոցիալիստական տնտեսությունները հնարավորություն ունեն անհամեմատ ավելի լավ ոգտագործելու գյուղատնտեսական նորագույն տեխնիկան, քան այդ հնարավոր ե կապիտալիզմի որով:

Աշխատավոր գյուղացու—չքավորի և միջակի—համար բուրժուական կարգերը գիտեն միայն մեկ ուղի: այդ—ազգատության և քայլքայման ուղին ե: Վորքան ել չարչարվում ե գյուղացին իր փոքրիկ հողապատակի վրա, նա ավելի ու ավելի յե ընկնում շահագործողների՝ կալվածատերերի, կուլակների, առևտրականների, վաշխառուների ձանկերը:

Խորհրդային իշխանությունը բոլորովին այլ ուղի յե բացել չքավոր և միջակ գյուղացիների առաջ: Դա կոլտնտեսությունների ուղին ե, սոցիալիզմի ուղին:

Խորհրդային իշխանությունն իր հենց առաջին քայլերից սկսեց շատ ողնել գյուղացիությանը վոչնչացվեց հողի մասնավոր սեփականությունը: Հողը դարձավ համառողովլրդական սեփականություն: Այս չի կարելի գնել և վաճառել: Հողը հանձնված ե աշխատավորների ողտագործման: Գյուղացիությունը սոցիալիստական հեղափոխությունից ստացավ 150 միլիոն հեկտարից ավելի հողեր, վորոնք առաջ գտնվում եյին կալվածատեր-ազնվականների, բուրժուազիայի, ցարական ընտանիքի, վանքերի, յեկեղեցիների և կուլակների ձեռքերում:

Ինքնակալության որով գյուղացիական տնտեսությունը ծանրաբեռնված եր պարտքերով: Գյուղացիները պարտք եյին այսպես կոչված Գյուղացիական բանկին (այս բանկը փաստորեն գտնվում եր կալվածատերերի և ցարական կառավարության ձեռքում) մոտ 1300 միլիոն ռուբլի: Ամեն տարի գյուղացիները վճարում եյին այդ բանկին մոտ 100 միլիոն ռուբլի և 500 միլիոն ռուբլի կալվածատերերին: Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը լիովին ազատեց գյուղացիներին այդ բեռից:

Խորհրդային իշխանությունն ամեն կերպ ոգնում եր չքավոր և միջակ գյուղացիներին բարձրացնելու իրենց տնտեսությունը: Նրանց վարկ եր տրվում, ոգնություն եր ցույց տրվում մեքենաներով, սերմացուվիլ: Խորհրդային իշխանությունը գյուղուարկեց շատ գյուղատնտեսներ: Զքավորները հարկման գործում արտօնություններ ստացան:

Խորհրդային իշխանությունը կուլակներին սահմանափակում ե արտամզում եր: Նրանք վճարում եյին բարձր տուրքեր: Նրանք այլևս չեյին կարող առաջվա նման տնորեն հանդիսանալ գյուղուարկում: Խորհրդային իշխանությունը չքավորներին պաշտպանում եր կուլակների շահագործումից:

Լենինը հաճախ ասում եր, վոր մանր տնտեսությամբ աղքատությունից գուրս գալ չի լինի: Գյուղում ուներ, կուլտուրական կյանքի հասնելու համար հարկավոր եր անցնել խոշոր արտագրության: Խոշոր արտագրությունը մանր արտագրությունից ձեռնառու յե: Բուրժուական յերկրներում խոշոր տնտեսությունը գտնվում է կալվածատերերի և կուլակների ձեռքում: Նրանց համար աշխատում են տնտեսապես քայլքայլած գյուղացիները—բատրակներն ու չքավորները: Լենինի Ստալինի կուսակցության ղեկավարած խորհրդային իշխանությունը գյուղացիության առջև բաց արավ նոր ուղի, վորպիսին առաջներում յեղած չեր:

1929 թիվը մեծ բեկման տարի յեր: Արդյունաբերությունն արդեն լիովին վերականգնված եր և սկսել եր արագ առաջ շարժվել: Նա արդեն կարողանում եր ողնել գյուղատնտեսությանը տրակտորներով, մեքենաներով և այլն: Այդ ոգնությունը քանի գնում, այս քան ավելի աճում եր: Դա հնարավորություն տվեց անհատական տնտեսությունից անցնելու կոլտնտեսություններին: Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը խոսքով և գործով ցույց եյին տալիս գյուղացիներին խոշոր արտագրու-

թյան, ընկերային աշխատանքի առավելությունները։ Գյուղում սկսեցին աճել խորհտնտեսությունները — Խորհրդային պետությանը պատկանող գյուղատնտեսական այդ խոշոր ձեռնարկությունները։ Շրջակայքի գյուղացիներն ակնառու կերպով կարող եին համոզվել, վոր խոշոր արտադրությունն ուժեղ ե։ Խորհտնտեսական դաշտերում նրանք տեսնում եին արակարուների և գյուղատնտեսական այլ բարդ մեքենաների աշխատանքը։

1929 թվին չքավոր գյուղացիության հետեւից լայն ալիքով՝ դեպի կոլտնտեսություն դիմեց միջակ գյուղացիների մասսան։ Կուլակը տեսավ, վոր իր վերջը քալիս ե։ Նա սկսեց կատաղությամբ դիմադրել։ Կուլակներն սկսեցին այրել կոլտնտեսական գույքը, անսպուններին սորթել, մեքենաները փչացնել, բերքը վոչնչացնել։ Ժողովրդի դավաճանների անարդ մի խումբ՝ բուխարինականները, արոցկիստները ոգնում եին կուլակներին սոցիալիզմի գեմ նրանց մղած պայքարում։ Կուսակցությունը ջախջախեց այդ դավաճաններին, ոգնեց գյուղացիությանը կոտրելու կուլակների դիմադրությունը և վոչնչացնելու կուլակությունը վորպես դասակարգ։

Կոլտնտեսություններն աճում եին չտեսնված արագությամբ։ Կուլակությունը, բացահայտ կովում ջախջախվելով, փորձ արեց խարեյությամբ կոլտնտեսություն սողոսկել։ Կուլակն սկսեց ծածկաբար վնասել և խանգարել։ Կուսակցությունը մերկացրեց այդ խորամանկությունը։ Նա ոգնեց գյուղացիներին ամրապնդելու կոլտնտեսությունները։

Կոլտնտեսությունները գյուղացիությանը հանեցին ունեոք և կուտուրական կյանքի լայն ուղին։

Գյուղատնտեսության մեջ կատարվեց արմատական վորփոխություն։ Դեռ 1927 թվին գյուղում 23,7 միլիոն մանր և մանրագույն տնտեսություններ կային, իսկ 1936 թվին մենատնտեսներ մնացին մոտ մեկ միլիոն։ Զքավոր և միջակ տնտեսությունների համարյա ամբողջ մասսան մրավորվեց կոլտնտեսություններում։ Յերկրագնդի վրա վոչ մի տեղ չկա այսպիսի խոշոր, սոցիալիստական ձեռվ կազմակերպված գյուղատնտեսություն։ Տարեցտարի նա ավելի ու ավելի առատ պտուղ և տալիս։

Մինչև պատերազմը գյուղերում 8 միլիոնից ավելի արոր կար. 1928 թվին, առաջին հնդամյակի շեմքում, մնացել եր մոտ 4,5 միլիոն արոր։ Կոլտնտեսական կարգերի հաղթանակը վերջ-

նականապես գուրս քշեց զաշտերից այդ հետամնաց գործիքները։

Տրակտորները փայլուն կերպով խաղացին հին, բուրժուական աշխարհը պայթեցնող և դեպի գյուղի նոր, սոցիալիստական կացույթը ճանապարհ բաց անող արկերի դեր։

1924 թվին ԽՍՀՄ-ում հաշվվում եին 2,6 հազար տրակտորներ 25 հազար ձիու ուժի ընդհանուր կարողությամբ։ 1936 թվի վերջերին սոցիալիստական դաշտերում աշխատում եին 400 հազար տրակտորներ 7,85 միլիոն ձիու ուժի կարողությամբ, իսկ առ 1-ն ոգոստոսի 1937 թվի աշխատում եին 450 հազար տրակտորներ 8 միլիոն 302 հազար ձիու ուժի կարողությամբ։

Յերկրորդ հնգամյակի տարիներում մեր գյուղատնտեսության մեջ լայն կիրառում ստացան բերքահավաքը մեքենայացնող մեքենաները, կոմբայնները։ 1931 թվին կոմբայնների թիվը 6,4 հազար եր, 1936 թվին նրանց թիվը կազմում եր 93,2 հազար, իսկ առ 1-ն ոգոստոսի 1937 թվի՝ 121 հազար։

Կատարելագործված մեքենաների, առաջին հերթին տրակտորների և կոմբայնների արմատացումը հնարավորություն տվեց լայնորեն մեքենայացնելու գյուղատնտեսական աշխատանքները։

1928 թվին ամբողջ գարնանացանի հացահատիկի վարելահողի մոտ $\frac{1}{10}$ -ը մշակվում եր արորվ, մոտ $\frac{9}{10}$ -ը՝ ձիաքարշ գութանով, իսկ տրակտորով՝ վարելահողի միայն $\frac{1}{100}$ -րդ մասը։ 1936 թվին տրակտորով մշակվեց գարնանացան վարելահողի կեսից թիվին, ձիաքարշ գութանով՝ կեսից միքիչ պակաս, իսկ արորն ավելին, ձիաքարշ գութանով՝ հավաքվեց հացահատիկային գաշտերի ամբողջ տարածության բերքի $\frac{4}{10}$ -ը, իսկ 1936 թվին՝ արգեն $26\frac{1}{2}$ -ը։ Յանքերի տարածությունը 1913 թվի 105 միլիոն հեկտարից աճեց և 1937 թվին հասավ մինչև 135,2 միլիոն հեկտարի։

Կոլտնտեսությունների զբաղեցրած հողն ամրացված ե նրանց անվճար և առհավետ ոգտագործելու համար։ Որենքը չի թույլատրում քչացնել կոլտնտեսությունների հողի տարածությունը։ Այդ հողերը կարելի յե միայն ավելացնել։

Ցարական մուսաստանի գյուղացիությունը խեղպվում եր սակավահողությունից։ Գյուղացիական հողերի խղճուկ չերտերը կտրտված եին շատ տարորինակ կերպով։ Հողի շերտամիջությունը խանգարում եր վորեմ կերպ միշտ կարգի գցելու հող-

ողտագործումը և հրաժարվելու պապենական «յեռադաշտությունից»:

Կոլեկտիվացումը հերկեց արտերի միջնակները, հնարավորություն տվեց հողոգտագործումը կազմակերպելու առաջավորագրունմիական գիտության պահանջների համաձայն:

Կոլտնտեսություններին հողերն առհավետ ամրացնելու ժամանակ կատարվում են հողաշխարարական մեծ աշխատանք՝ Ռւղիվում են կոլտնտեսությունների սահմանները, նրանց հողերը հավաքվում են հարմար և տնտեսորեն ավելի նպատակահարմար մասսիվների ձևով։ Կառավարության վորոշումներով 1936 թվին խորհանտեսություններից կորպել և հանձնվել են կոլտնտեսություններին, նրանց հողոգտագործումն ընդլայնելու համար, 17 միլիոն հեկտարից ավելի հող։

Հողն առհավետ խոշոր կոլեկտիվ տնտեսություններին ամրացնելը, մեքենատրակտորային կայանների միջոցով կոլտնտեսություններին նորագույն տեխնիկայով սպասարկելը ստեղծեցին հողի լավագույն ոգտագործման և գյուղատնտեսության բարձր արտադրողականության զարգացման համար, ամենանպաստվոր պայմանները։

Մեր դաշտերի ստախանովականները ցույց տվին, թե ինչ կարող ե տալ սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Կոլտնտեսականներն սկսեցին առաջներում չտեսնված բերք հավաքել։ Հարվածային կոլտնտեսականների համագումարում Մարիա Դեմչինկոն ընկեր Ստալինին խոստացավ համեմ մեկ հեկտարից 500 ցենտներ ճակնդեղի բերք հավաքելուն։ 1935 թվին Մ. Դեմչինկոն և իր ընկերները կատարեցին այդ խոստումը։ Այժմ շաքարի ճակնդեղի շատ բրիզագներ մի հեկտարից տվին 1000 ցենտներ և ավելի ճակնդեղ։ Պաշա Անդրեյնայի բրիզագի տրակտորիստուճիները յուրաքանչյուր անիվավոր տրակտորով ամառվա ընթացքում հերկում են մեկ հեկտարից ավելի հող։ Մեր յերկում տրակտորներն ավելի լավ են ոգտագործվում, քան Ամերիկայի Միացյալ Նահանգներում։ Ամեն մի տրակտոր 5—6 անգամ ավելի աշխատանք է կատարում, քան կապիտալիզմի որով։

1935 թվի դեկտեմբերին ընկեր Ստալինի առաջադրած խնդիրը՝ առաջիկա յերեք-չորս տարում հասնել տարեկան 7—8 միլիարդ գոտի հացահատիկի բերքի՝ դարձավ սոցիալիստական հողագործության առաջավորների մարտական լողունկը։

Կապիտալիստական խոշոր հողագործության յերկրին, Ամերիկայի Միացյալ Նահանգներին 20 տարի հարկավոր յեղակացահատիկի բերքը 2 միլիարդ գիրով ավելացնելու համար (1880 թվի 4 միլիարդ գիրից հասցնելու 1900 թվին 6 միլիարդ գիրի)։ Սոցիալիստական հողագործությունը նման խնդիրները լուծում ե 3—4 տարում։ Արդեն այս տարի հացահատիկների բերքը հասավ 6,8 միլիարդ գիրի։

Կոլեկտիվացումն արմտապես փոխեց գյուղի կերպարանք։ Անցյալի գիրկն անցավ հին գյուղը, վորտեղ գյուղացիների մեծամասնությունը պատապարվում եր խղճուկ խրճիթներում, վորտեղ կողք-կողքի եյին գնում աղքատությունն ու խավարը, վորտեղ անվանի դեմքեր եյին կուլակը, վաճառական-սպեկուլանտը, տերտեղը։ Նոր գյուղը, վորտեղ ունկոր, կուլտուրական կյանքի ուղին լայնորեն բացված է ամեն մի ազնիվ աշխատավորի առաջ, աչքի յե ընկնում հսկայական ձգտումով դեպի կուլտուրան և գիտությունը։ Արդի գյուղի անվանի մարդիկն են՝ լավագույն տրակտորիստները և կոմբայնավարները, բրիզագավարները և կոլտնտեսությունների գեկավարները, կոլտնտեսական գայտերի հարվածայինները և հարվածայնուհիները։

Անչափելիորեն աճել ե գյուղի կուլտուրական մակարդակը։ «Ահա մենք Մոսկվա յենք գալիս և տեսնում ենք, վոր Մոսկվայում մարդիկ լավ են ապրում, կուլտուրական կյանքով, իսկ մենք ել ուզում ենք, վոր մեր գյուղն ապրի այնպես, ինչպես Մոսկվան։ Մենք ուզում ենք գյուղը հավասարեցնել Մոսկվային։ Այժմ մենք գալիս ենք Մոսկվա և մեզ գուր ե գալիս ժողովուրդն այնպես կուլտուրական ե, մաքուր։ Յեկ մենք այնպես կանենք, վոր Մոսկվան զա մեզ մոտ հետաքրքրվելու, թե գյուղը վորքան կուլտուրական, մաքուր ե դարձել», —այսպես եր ասում շքնչանակիր կոմբայնավար Պոլագուտինն առաջավոր կոմբայնավարների խորհրդակցությանը։

Կոլտնտեսականների բարեկեցության աճումը տանում է գետի քաղաքի կյանքի մակարդակների մոտիկացումը։ Գյուղացին առաջ մենակ եր աշխատում իր փոքրիկ հողաշերտի վրա։ Կոլտնտեսություններում աշխատանքը միավորված է։ Բուրը միասնաբար աշխատում, փորձի փոխանակություն են կատարում, ոզնում են միմյանց։ Առաջավոր կոլտնտեսականների փորձը որինակ ե ծառայում բոլորի համար։

Կոլտնտեսությունների և խորհանտեսությունների սոցիա-

Ամստական խոշոր արտադրությունը ստեղծում է գյուղատնտեսության չտեսնված բուռն ծաղկման համար բոլոր պայմանները: Վորպեսզի հողագործության հարստությունների բոլոր աղբյուրները հզոր աղբյուրի պես հորդեն, պահանջվում է միայն մի պայման՝ կոլտնտեսական ամբողջ մասսայի բարեխիղճ, կազմակերպված աշխատանքը:

ՄԵՐ ՅԵՐԿՐԻ ԲՈԼՈՐ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Կապիտալիզմի յերկրներում բոլոր ֆաքրիկաները, գործարանները, հանքավայրերը, յերկաթուղիները, շոգենավերը, լավագույն հողերը, տներն ու շինությունները պատկանում են ֆաքրիկանաներին, գործարանատերերին, կարգածատերերին, բանկիրներին և այլն: Նրանց թիվը մեծ չե: Խոշոր կապիտալիստները բնակչության մեկ տասհազարերորդ մասն ել չեն կաղմում, մինչեւ ամեն մի բուրժուական յերկրում նրանց եպատկանում ամբողջ ստացվածքի առյօւծի բաժինը: Նրանք ոգտվում են այդ բանից, վորպեսզի բանվորների և գյուղացիների հսկայական մասսաներին ստիպեն իրենց համար աշխատելու:

Մեր յերկրում չոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը խլեց կապիտալիստներից ֆաքրիկաներն ու գործարանները, կալվածատերերից՝ հողերը, Յերբ գյուղացիներն ամբողջ մասսայով մտան կոլտնտեսությունների մեջ, վոչնչացվեց շահագործող վերջին դասակարգը՝ կուլակությունը: Մասներով կոլտնտեսությունների մեջ, գյուղացիները միավորեցին ինվենտարը և լծկան անասունները: Այժմ մեր յերկրում անբաժանելիորեն տիրապետում ե տնտեսության սոցիալիստական սիստեմը: Վոչնչացված ե մարդու ամեն մի շահագործում մարդու կողմից: Բոլոր քաղաքացիներն աշխատում են իրենց համար, իրենց հասարակության համար: Յերկրի հարստությունները պատկանում են աշխատավոր ժողովրդին:

Յերբ Խորհրդային Միության հերոս ողաչու Զկալովը թուավասար Ամերիկայի Միացյալ Նահանգները, նրան հարցրին՝ հարթուս և արդյոք նա: Նա պատասխանեց. «Այն, յես շատ հարուստ եմ: Խորհրդային յերկրում մենք բոլորս ել հարուստ մարդիկ ենք: Յես կապիտալիստ չունեմ, բայց յես ունեմ 170 միլիոն, վորոնք ինձ համար են աշխատում, այնպես, ինչպես վոր յես ել նրանց համար եմ աշխատում»:

Մեր յերկրի ժողովրդական հարստության ամենակարևոր և նշանակալից մասը համաժողովրդական սեփականությունն ե համելիսանում:

Նախ և առաջ սրա մեջ մտնում է ԽՍՀՄ-ի տերիտորիան, վորը բանում և յերկրագնդի ցամաքի մեկ վեցերորդ մասը և կազմում է 2,1 միլիարդ հեկտար: Այս տերիտորիայի մի հինգերորդ մասը՝ 421,9 միլիոն հեկտարը գրավում են գյուղատնտեսական հողերը, վորոնք ոգտագործվում են կոլտնտեսությունների, մենատնտեսությունների և խորհրդատեսությունների կողմից. անտառները կազմում են 922,5 միլիոն հեկտար:

Ընդերքի հարստությամբ ԽՍՀՄ-ին ե պատկանում յերկրագնդի վրա առաջին տեղերից մեջը, յեթե վոչնչին տեղը՝ Թութափելով մասնավոր սեփականության կապահպահները և վերացնելով կապիտալիզմը՝ հարստանալու իր ծարագով, սոցիալիստական Մեծ հեղափոխությունը լայն հնարավորություններ բացեց ընդերքի խիզախ հետախույզների առաջ: Այսպես, մինչև հեղափոխությունը յերկաթի պաշարը հաշվում եր 2 միլիարդ տոնն, այժմ հասնում ե 10 միլիարդ տոննի, իսկ յեթե հաշվի առնենք Կուրսկի մաշնիսական անոմալիայի պաշարները, ապա կհամնի մինչև 260 միլիարդ տոննի: Նավթային հարստությունները ԽՍՀՄ-ում ներկայումս կազմում են 6376 միլիոն տոնն, այսինքն՝ աշխարհի բոլոր հայտնի նավթապաշարների կեսից ավելին: Նավթի, ինչպես և յերկաթահանքի և մանգանի պաշարով ԽՍՀՄ-ն բռնում ե առաջին տեղը: Քարածխի պաշարը 1913 թվին հաշվում է յին 230 միլիարդ տոնն, իսկ այժմ՝ 1654 միլիարդ տոնն: Քարածխի պաշարով ԽՍՀՄ-ը յերկրորդ տեղն է բռնում Ամերիկայի Միացյալ Նահանգներից հետո: Ամեն տարի խորհրդային յերկրի ընդերքի հետախույզումը բաղմազատկում ե մեզ հայտնի պաշարները:

Մեր հայրենիքն առաջին տեղն ե գրավում իր գետերի եներգետիկ կարողությամբ, վորը կազմում է 280 միլիոն կիլովատ ծարական Ռուսաստանը մեկ հազար կիլովատ կարողությունից բարձր վոչնչի հիղընելիտրական սարքավորում չուներ: ԽՍՀՄ-ում արդեն կա յերեսունից ավելի հիղընելի կապիտալային մոտ մեկ միլիոն կիլովատ ընդանուր կարողությամբ:

Այնուհետև համաժողովրդական սեփականություն են հանդիսանում պետական խոշոր արդյունաբերության 40947 ֆաքրի-

կաները և գործարանները, վորոնք ունեն 42,8 միլիարդ ռուբլու դումարի հիմնական արտադրական ֆոնդեր:

Համաժողովրդական սեփականություն և հանդիսանում յերկաթուղային ամբողջ ցանցը՝ 85080 կիլոմետր ընդհանուր յերկարությամբ և 17,8 միլիարդ ռուբլու հիմնական ֆոնդերով։ Զբային տրանսպորտի հիմնական ֆոնդերը համում են 3 միլիարդ ռուբլու։

Համաժողովրդական սեփականության մեջ մտնում են պետական ձեռնարկությունները գյուղատնտեսության բնագավառում։ Սրանք են, նախ և առաջ, 4137 խոշոր խորհանտեսությունները և տասնյակ-հազարավոր ոժանդակ գյուղատնտեսական ձեռնարկությունները։ Նրանց հիմնական արտադրական ֆոնդերը առ 1-ն հունվարի 1936 թվի կազմում եյին 6,3 միլիարդ ռուբլից Այնուհետև, սրանք են՝ մեքենատարակտորային կայանները։ Նրանց հիմնական արտադրական ֆոնդերը 1936 թվի սկզբներին համում եյին 2,9 միլիարդ ռուբլու, իսկ ՄՏԿ-ների քանակն առ 1-ն ոգոսատոսի 1937 թվի կազմում եր 5617։ Վերջապես, պետության ձեռքում ե գտնվում բնակարանային ֆոնդի նշանակալից մասը քաղաքներում, մանավանդ խոշոր քաղաքներում։ սրանց թվին են պատկանում վերջին տարիներում քաղաքներում կառուցված հարյուրավոր և հազարավոր խոշորագույն շենքերը։ Համաժողովրդական սեփականություն են հանդիսանում նմանապես ամենատեսակ կոմունալ ձեռնարկությունները, սկսած բազնիքներից և վերջացրած քաղաքային ելեկտրոլայաններով, տրամվայի գծերով և այլն։

Պետական սեփականություն կազմող՝ արտադրության բոլոր գործիքներն ու միջոցները 1935 թվին գնահատվում եյին 83,2 միլիարդ ռուբլի։ Սրան պետք ե ավելացնել պետական պահեստներում, պետական խանութներում և այլ տեղերում գտնվող նյութեղների, պատրաստի արտադրանքների և ապրանքների միլիարդներ կազմող արժողությունը։ Այս ե պետական սեփականությունը, ԽՍՀՄ-ի համաժողովրդական սեփականությունը։

ԽՍՀՄ-ի ժողովրդական հարստության մեջ մեծ տեղ ե գրավում կոռպերատիվ կոլտնտեսային սեփականությունը։

Սրան ե գերարերում նախ և առաջ 244 հազար կոլտնտեսությունների սեփականությունը։ 1936 թվի սկզբներին կոլտնտեսություններն ունեյին հիմնական արտադրական ֆոնդեր 10,5 միլիարդ ռուբլի գումարով։ Այս գումարից մոտ 3 միլիարդը կազ-

մում են գյուղատնտեսական նշանակություն ունեցող շենքերն ու կառուցվածքները, 2,7 միլիարդը՝ լծկան անասունները, 1,8 միլիարդը՝ մթերատու անասունները, մեկ միլիարդից ավելի՝ գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները, մեկ միլիարդից պակաս՝ տրանսպորտի միջոցները։

Այսուհետեւ, արհեստագործական 18 հազար արտելներն ունեն 1,4 միլիարդ ռուբլուց ավելի հիմնական արտադրական ֆոնդեր։

Մեկ և կես հաղարից ավելի բնակարանային-շինարարական կոռպերատիվներն ունեն 7,2 միլիարդ քառակուսի մետր բնակելի տարածություն։ Սպառողական կոռպերացիայի հիմնական ֆոնդերը գնահատվում են 780 միլիոն ռուբլի։

Պետական սեփականությունը (համաժողովրդական սեփականությունը) սկզբում կազմվել ե շահագործող գասակարգի ձեռքում գտնվող հողերի, ֆաբրիկաների և գործարանների, բանկերի ու յերկաթուղիների ազգայնացման միջոցով։ Այս աճել ու բազմապատկել ե նոր ֆաբրիկաների, գործարանների, խորհանտեսությունների և ՄՏ կայանների կառուցմամբ։ Այսպես, որինակ, 1913 թվի վերջերին խոշոր արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերը կազմում եյին 7,2 միլիարդ ռուբլի, իսկ 1935 թվին՝ 42,8 միլիարդ ռուբլի։ Այս շինարարությունն իրականացվել ե պետության հաշվին։

Այլ ձևով ե ծնունդ առել կոլտնտեսային սեփականությունը։ Նա ծագել ե ավելի ուշ գյուղացիության հիմնական մասսաների սոցիալիզմի ուլուսերի վրա անցնելու հետևանքով։ Այս անցումը կատարվեց գյուղացիների ընկերական միավորման ձեռվով, վորոնք կամավոր կերպով միացրին արտադրության իրենց անհատական միջոցները։

Մեր Սահմանադրությունը թույլատրում է կոլտնտեսականներին անձնական ոգտագործման համար ունենալ վորոնիկ տնամերձ հողամաս և, վորպես անձնական սեփականություն, ոժանդակ տնտեսություն, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ և գյուղատնտեսական մանր ինվենտար։

Աշխատանքային վողջ յեկամուտը՝ բանվորների և ծառայողների աշխատավարձը, կոլտնտեսականների յեկամուտները կազմում են նրանց անձնական սեփականությունը։ Սոցիալիստական հասարակության Սահմանադրությունը պաշտպանում է ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավունքն իրենց աշխատավորական

յեկամուտների և խնայողությունների նկատմամբ, բնակելի տան և ոժանդակ տնային տնտեսության նկատմամբ, տնային տնտեսության և առողջա գործածության առարկաների նկատմամբ, անձնական սպառման և հարմարության առարկաների նկատմամբ, ինչպես նաև այդ անձնական սեփականությունը ժառանգելու իրավունքը:

ՄԵՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՊԼԱՆՈՎ Ե ՏԱՐՎՈՒՄ

Կապիտալիստական աշխարհում անխուսափելիորեն տեղի յեն ունենում տնտեսական ճշնաժամերը: Մենք արդեն տեսանք, թե աշխատավորներին ինչպիսի անհամար թշվառությունների յեն հասցնում այդ ճշնաժամերը: Բուրժուազիայի մի քանի պաշտպանները հավատացնում են, թե կապիտալիզմի որով կարելի յեւ խուսափել այդ ճշնաժամերից: Սակայն այդ խաբեյություն եւ: Զե՞ վոր այստեղ ձեռնարկությունները պատկանում են մասնավոր սեփականատերերին: Նրանցից ամեն մեկը անսահմանափակ տեր ե իր ֆաբրիկայում: Նա իր ուղածի պես ե տնօրինում արտադրությունը: Իսկ նա ունի մի նպատակ՝ վորքան կարելի յեւ շատ ոգուտ ստանալ:

Մեր տնտեսությունը տարվում ե վոչ թե հանուն շահույթի: Նրա նպատակն ե՝ մեծացնել հասարակական հարստությունը, բավարարել աշխատավորների կարիքները և պահանջները: Մեզ մոտ բոլոր ձեռնարկություններն ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում, հանրային սոցիալիստական սեփականություն են կազմում (ոլետական կամ կոոպերատիվ-կոլտնտեսային): Մեր ամեն մի ֆաբրիկան, ամեն մի գործարանը՝ դա սոցիալիստական միասնական տնտեսության մասնիկն ե միայն: Նրանք աշխատում են ընդհանուր պլանով: Պահնը սահմանում ե, թե ինչքան և ինչպիսի պլոտուկտ պիտք ե արտադրի յուրաքանչյուր ձեռնարկություն, այդ բանի համար նրան ինչքան բանվորական ուժ ե հարկավոր, ինչքան հումք ու վառելիք, ինչքան դրամական միջոցներ:

Ենորհիվ արտադրական միջոցների հանրային սեփականության, շնորհիվ պլանի մեր տնտեսությունը ճշնաժամեր չգիտե: Մեզ մոտ չի կարող այնպիսի գրություն լինել, վոր ապրանք շատ լինի, իսկ գնորդներ չլինեն: Տարեցտարի աճում ե ԽՍՀՄ-ի արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի մասն բայց գրա հետ մեկտեղ աճում ե նաև բանվորների, գյուղական մասն բայց գրա հետ մեկտեղ աճում ե այլ կառավագան պատճենների, այլ պատճենների, ակումբների, հանգստյան տների և այլն կառավագան մասն բայց գրա հետ մեկտեղ աճում ե այլ կառավագան պատճենների:

Կառավարությունը կիրառում են գների անշեղ իջեցման քաղաքականություն: Այն ամենը, ինչ արտադրվում ե ժողովրդի աշխատանքով, գտնում ե իր ոգտակար կիրառումը: Մթերքների մասսան սպառում են աշխատավորները, նրանց կյանքն ավելի ու ավելի ունեոր և կուլտուրական ե դառնում:

Մեր տնտեսությունը ազատ ե կապիտալիզմի չարիքներից: Մեր տնտեսության մեջ չեն լինում ճգնաժամեր, գործադրկություն, արտադրած հարստության վոչնչացում: Բանվորներն ու գյուղացիները վոչ թե շահագործողների համար են աշխատում, այլ իրենց համար: Սրանք սոցիալիզմի հսկայական առավելություններն են: Սոցիալիստական տնտեսությունը զարգանում ե չտեսնված արագությամբ: Սրանից գեռ տաս տարի առաջ մեր յերկում արտադրվում եր մոտավորապես նույնքան մթերք, վորքան մինչև պատերազմը իսկ այս տաս տարվա ընթացքում ժողովրդական յեկամուտն աճեց հինգ անգամ՝ 21 միլիարդից մինչև 105 միլիարդ ոուրլի ըստ 1937 թվի պլանի: Բուրժուական յերկրներին, նույնիսկ նրանց ծաղկման ժամանակներում, այդպիսի վերելքի համար հարկավոր եյին շատ և շատ տասնամյակներ:

Ժողովրդական յեկամուտը ԽՍՀՄ-ում իրոք վոր պատկանում է ժողովրդին: Նրա վոչ մի մասնիկը չի ընկնում գատարկապրակապրատիների ձեռքքը: Ժողովրդական յեկամուտը բաշխվում ե մեր յերկրի աշխատավորների շահերի համեմատ: Յեկամուտի վորոշ մասը գործադրվում ե ԽՍՀՄ-ի տնտեսական հզորության հետագա ամրապնդան, նոր ֆաբրիկաների, գործարանների, յերկաթուղիների և այլն կառուցման վրա: Ժողովրդական յեկամուտի վորոշ մասը հատկացվում ե յերկրի պաշտպանության ամրապնդման գործին, վորոշ մասը՝ գործոցների, հիվանդանոցների, մանկամառների, ակումբների, հանգստյան տների և այլն կառավագան մասն բայց գրա հետ մեկտեղ աճում ե այլ կառավագան պատճենների:

ԱՄԵՆՔԻՆ ԲԱՏ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ

Բուրժուական յերկրներում հարուստ գատարկապրատները խաղ ու պարով են իրենց որն անցկացնում, իսկ աշխատավորների մասսան իր գոյությունը քարշ ե տալիս կարիքի մեջ, աղքատության մեջ: ԽՍՀՄ-ում գոյություն ունի անխախտելի որենք՝ «ով չի աշխատում, նա չի ուտում»:

Մարդու դրությունը կապիտալիստական հասարակության մեջ կախված է այն բանից, թե ժառանգել է արդյոք նա իր ծնողներից կապիտալ կամ հող, հաջողվել է արդյոք նրան հարըստանալ ուրիշի աշխատանքի հաշվին։ Սոցիալիզմի որով, ընդհականակը, միայն աշխատանքը և անձնական ընդունակություններն են մարդու համար դիրք ստեղծում հասարակության մեջ։ Ընկեր Ստալինը Սահմանադրության նախագծի մասին տված զեկուցման մեջ ասաց։

«Վոչ թե գույքային դրությունը, վոչ թե ազգային ծագումը, վոչ թե սեռը, վոչ թե պաշտոնեական դրությունը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնական ընդունակություններն ու անձնական աշխատանքն են վորոշում նրա դրությունը հասարակության մեջ»։

Ով ավելի շատ ու ավելի լավ ե աշխատում, նա ավելի յեստանում։ Հայտնի յեն ստախանովական բանվորների բարձր վաստակները։ Ով գերակատարում է նորման, ավելի շատ պրոդուկտ ե արտադրում, նա ել ավելի յե վաստակում։ Կոլտնտեսություններում յեկամուտները բաշխվում են ըստ աշխատերի։ Լավ աշխատողն ավելի աշխոր ե վաստակում, քան վատը։ Կոլտնտեսային կոլեկտիվի աշխատանքի վորակից ե կախված աշխատերի կշիռը, կոլտնտեսության յուրաքանչյուր անդամի յեկամուտը։

Խորհրդային Միությունում իրականացվում ե մեր Սահմանադրության մեջ գրանցված այս սոցիալիստական կանոնը՝ «յուրաքանչյուրից ըստ իր ընդունակության, յուրաքանչյուրին—ըստ իր աշխատանքի»։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋՆԱԳՈՒՅՑՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՊԱՏՎԻ ԳՈՐԾ Ե

Կապիտալիզմի որով աշխատանքն արհամարհված, ստորգրադմունք եւ Հարուստ դատարկապորտներն ամեն ինչ են։ Աշխատավոր մարդը՝ վոչինչ։ ԽՍՀՄ-ում աշխատանքը պատվավոր և հարգված բան եւ Դատարկապորտը մեղ մոտ որ չունի։ Իսկ աշխատավոր մարդը պատիվ ունի։ Ամբողջ յերկրը գիտե աշխատանքի նշանագործ հերոսների՝ Ստախանովի, Բուսիգինի, Վինոգրադովաների, Կրիվոնոսի, Դեմչենկոյի և ուրիշ շատերի անունները։

Ստախանովյան շարժման հեղինակներն արժանի պատիվ են վայելում։ Նրանց սիրում ու նրանցով հպարտանում ե ամբողջ ժո-

ղովուրդը։ Կուսակցությունը և կառավարությունը նրանց առաջ են քաշում դեկավար պաշտոնների։ Այսպես, ստախանովական խնմեներ Յուսիմովը նշանակված է Մոսկվայի խոշորագույն գործարաններից մեկի՝ «Շարիկոպողիանիկի» ղերեկուրության մեջ։ Կողակար բանվոր Սմետանինն առաջ ե քաշված կենինգրադի «Սկորոխող» գործարանի ղերեկուրության մեջ։ Կապիտալիստական հանքարանի տաղավար կոմիսար Լ. Մ. Կագանովիչը նշանակել է «Շախտանտրացիտ» տրեստի կառավարիչ։

Սոցիալիզմը աշխատանքը դարձրեց՝

«Ամոթալի և ծանր բեռից, վորպիսին նա համարվում եր առաջներում, պատվի գործ, փառի գործ, արիարյան և ներուուրյան գործ։ Վոչ մի նման բան չկա և չի ել կարող լինել կապիտալիստական յերկրներում» (Ստալին)։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒԽԻ

Սոցիալիզմն իրականացրեց պրոլետարիատի շատ սերունդների յերազը աշխատանքի իրավունքի մասին։ Մեղ մոտ ամենաքին ապահովված ե աշխատանքը, վորը վարձատրվում ե ծախսված աշխատանքի քանակին ու վորակին համապատասխան։ Մեր տընտեսությունը չգիտե, թե ինչ ե գործադրկությունը—կապիտալիստական յերկրների պրոլետարիատի այդ սարսափելի պատուհասը։ Բանվորը մեզանում վախ չի գտում վաղվա որվա հանդեպ։ Արգեն խորհրդային իշխանության որով աճած մեր յերիտասարդ սերունդը գործադրկության մասին գիտե միայն լսովի, մեծերի պատմածներից կամ գրքերից։

Արդեն առ 1931 թիվը մեր յերկիրն ընդմիշտ վերջ տվեց գործադրկությանը։ Ձեռնարկությունները վերականգնելն աշխատանք տվեց շատ հարյուր հազարավոր մարդկանց։ Ստալինյան հսկամյակների հոկայական շինարարությունն արտադրության մեջ ներգրավեց նոր բանվորների միլիոնավոր մասսաներ։

Կոլեկտիվացումն արժատախիլ արավ կուլակային շահագործումը, վոչնչացրեց գյուղում աղքատության աղբյուրները։ Գյուղացին առաջին անգամ մարդավայրել ապրելու և աշխատելու հնարավորություն ստացավ։ Այսպիսով փակվեց այն կանալը, զորանցյալում մնունդ եր տալիս գործադրկությանը։

ՀԱՆԳՍՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Բանվորական որբ բանվորների ճնշող մեծամասնության համար կը ճատելով՝ հասցված ե Շժամի: Բանվորներն ու ծառայողներն ոգտվում են տարեկան արձակուրդով՝ աշխատավարձիք պահպանմամբ, նրանց սպասարկման համար սանատորիաների, հանգստյան տների, ակումբների և այլն լայն ցանց ե ծավալված:

ԽՍՀՄ-ն յերկրագնդի ամենակարճ բանվորական որվա յերկրի կիրն եւ Սոցիալիզմը, վոչչացնելով դատարկապորտ-պարագիտաներին և աշխատանքը ամեն մեկի պատվի գործը դարձնելով՝ բանվորական որը սահմանափակեց Դ ժամով։ Յոթժամյա բանվորական որվան անցնելը հայտարարվեց Կենտգործկոմի ղեկրետով 1927 թվի նոյեմբերին, Սոցիալիստական Մեծ հեղափոխության տասերորդ տարեդարձին։ Տրոցկիստական-զինովյեվական հականեղափոխական բլոկը կատաղի վոանոցով դիմավորեց այդ ղեկրետը, արոցկիստներն ու զինովյեվականներն ապացուցում եյին նրա անիրագործելիությունը, պայքարում եյին նրա ղեմ։ Սակայն, հակառակ սոցիալիզմի թշնամիների բոլոր նախագուշակություններին, մի քանի տարվա ընթացքում Դ-ժամյա բանվորական որը տարածվեց արդյունաբերության բոլոր ճյուղերի վրա։

Հստ վիճակագրական տվյալների, մեր յերկրի ամբողջ խոռշոր արդյունաբերության մեջ բանվորական որպա տեղողությունը 1913 թվին կազմում եր 9,9 ժամ, 1928 թվին՝ 7,48 ժամ, իսկ 1935 թվին՝ միան 6.59 ժամ:

Անեց բանվորի ազատ ժամանակը: Լայն հնարավորություններ բացվեցին բանվոր ըստակագրի կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար: Տնտեսության սոցիալիստական սիստեմը վոչ մի արգելք չունի բանվորական որվա հետագա կրծառման համար, սոցիալիզմի հետագա հաղթանակների և ամրապնդման, հասարակական հարստության աճման, աշխատանքի արտադրողականության բարձրացման համեմատ:

Հանգստի իրավունքը, զուգորդված կրթության իրավունքի հետ, ստեղծում և բոլոր նախապայմանները բանվոր դասակարգի կուլտուրական մակարդակի հզոր վերելքի համար:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սովորողների թիվը ցարական Ռուսաստանում և Խորհրդա-
յին Միության մեջ (հազարներով)։

	1914/15	1928/29	1936/37
Տարբական և միջնակարգ դպրոցներ	8025	12604	28842
Մեծահասակների դպրոցներ	Հկային	2226	8942
Բուհեր	112	177	542

Յարիզմի որով սովորում եր յերեխաների միայն մեկ չորս րորդ մասը: Ներկայումս Խորհրդային Միության բոլոր յերեխաներն անողոքածած են դարձնելում:

Յարիզմի որով բարձրագույն դալրոց կարող ելին ընկնել միայն տիրող զասակարգի զավակները, վորովհետև բարձրագույն դպրոցներում սովորելը մեծ փող արժեր, իսկ բանվորներն ու առողջապես աշխատելու միջոցներ չունելին:

Այժմ զբությունն այլ է: Բարձրագույն դպրոցներում ուսանում և բանվորական և գյուղացիական յերիտասարդությունը՝ Գետությունը բոլոր միջոցներով նպաստում և աշխատավորների Պետությունը սովորում են առանց արտադրությունաման գործին: Շատերը սովորում են առանց արտադրությունից կտրվելու: Գետությունն ուսանողներին հատկացնում է թոշակ՝ 1936 թվին բարձրագույն դպրոցների սովորողների 87% ը թոշակ եր սահմանում:

Կը թության համար պետության կատարած օալիսնել կա վասար ելին (միլիոն ռուբլիներով)։

<i>1913 ₩.</i>	<i>1925/26 ₩.</i>	<i>1936 ₩.</i>	<i>1937 ₩. (պլան)</i>
<i>182</i>	<i>559</i>	<i>13461</i>	<i>18500</i>

Սովորում են վոչ միայն գպրցներում: Զանազան տեսակի հարյուր-հազարավոր խմբակներ և կուրսեր ամեն մի աշխատավորի հնարավորություն են տալիս բարձրացնելու իր կրթությունը և իր կույսութան:

Վար են:

ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ,
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ
ԴԵՊԲՈՒՄ

Խորհրդային իշխանությունը հոգում ե մարդու մասին նաև
այն ժամանակ, յերբ նա հիվանդ է, յերբ նա կորցրել ե աշխատու-
նակությունը, յերբ նա ծերացած է: Սոցիալական ապահովագրման
ժախքերը ԽՍՀՄ-ում առաջին հնգամյակի չորս տարում (1929—
1932 թ. թ.) կազմում եյին 10083 միլիոն ռուբլի, իսկ յերկորդ
հնգամյակի չորս տարում (1933—1936 թ. թ.)՝ 26462 միլիոն ռուբ-
լի: Դրանից 1933—1936 թ. թ. ծախսված է նպաստների և թո-
շակների վրա 9683,7 միլիոն ռուբլի, այս թվում 783,7 միլիոն
ռուբլի նպաստ հղության և ծննդաբերության համար: Հան-
գըտյան տների, սանատորիաների և կուրորտների վրա ծախսված
է 1317,5 միլիոն ռուբլի, ապահովագրվածներին բժշկական ող-
նություն ցույց տալու համար՝ 6101,2 միլիոն ռուբլի, ապահո-
վագրվածների յերեխաներին սպասարկելու համար՝ 1845,8 միլիոն
ռուբլի, բանվորական բնակարանային շինարարության վրա
ծախսված է 3056,8 միլիոն ռուբլի:

«Յես ծեր եմ, բայց իմ ծերությունից չեմ վախենում: Յես
կարդացի Սահմանադրության հոգվածները և ինձ այնպես լավ
զգացի: Իմ յերկուում յես տեր եմ: Ծերությունս ինձ չի սար-
սափեցնում: Մի ժամանակ ծերունիներին դարպասից դուրս եյին
շվերտում: Դուրս շվերտել՝ նշանակում եր աշխատանքից հեռացնել,
այժմ այդպիսի բառեր ել չկան: Այժմ յես ապահովված եմ:
Հանգիստ ապրիր, ծերուկ: Այս մեր թանգարին ընկեր Ստալինը
վերցրեց և ուղղակի տվեց մեր ձեռքը», — այսպիս ե ասում «Կրաս-
նի պրոլետարիյ» գործարանի վարպետ Պ. Ն. Լատիշեվը:

ՈՒՆԵՎՈՐ ՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՒՂԻՆ ԲԱՑ Ե ԲՈԼՈՐ
ԱՇԽԱՏԱԳՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Մեր հեղափոխության բնորոշ առանձնահատկությունն
այն է, վոր նա տվեց ժողովրդին վոչ միայն ազատություն,
այլև նյութական բարիքներ, այլև ունեոր ու կուլտուրական
կյանքի հնարավորություն» (Ստալին):
Բանվոր դասակարգի նյութական բարեկեցության բարձրաց-
ման մասին վկայում ե նախ և առաջ աշխատավարձի աճումը:
Այսպես, որինակ, բանվորների և ծառայողների աշխատավարձի
տարեկան փոնդը տաս տարվա ընթացքում—1924/25 թվից մինչև
90

1936 թիվը—3,8 միլիարդ ռուբլուց աճել է և հասել 71,6 միլի-
արդի, այսինքն՝ համարյա 19 անգամ: Աշխատավարձի գումարի
այս հսկայական ավելացումը կատարվեց յերկու պատճառների
հետևանքով՝ 1) բանվոր դասակարգի քանակի աճման և 2) բան-
վորների վաստակի բարձրացման հետևանքով: Նույն այս ժա-
մանակաշրջանում առանձին բանվորի տարեկան միջին վաստակը
450 ռուբլուց բարձրացավ 2776 ռուբլու, այսինքն՝ աճեց 6 ան-
գամ: Ել ավելի արագ, քան առանձին բանվորի վաստակը, աճում
երանվորական ընտանիքի վաստակը, քանի վոր աճել է ընտա-
նիքի այն անդամների թիվը, վորոնք ինքնուրույն վաստակ ու-
նեն: Հինգ տարվա ընթացքում—1930 թվից մինչև 1935 թիվը—
բանվորական ընտանիքի յեկամուտը, հաշված մեկ աշխատողի
վաստակը, աճել է 2,9 անգամ:

Բայց ել ավելի արագ, քան աշխատավարձի աճումը, ընթա-
նում ե բանվոր դասակարգի սպառունակության աճումը: Սպառ-
ուման առարկաների գները սիստեմատիկաբար իջնում են: Կոլտըն-
տեսական բերքի առատության աճմամբ եժանանում են գյուղա-
շաբան մթերքները: Այսպես, որինակ, ԽՍՀՄ-ի տասը խո-
տանտեսական մթերքները: Այսպես, որինակ, ԽՍՀՄ-ի տասը խո-
տանտեսային շուկաներում վերջին չորս տարում գյուղական չորս տա-
րում բաղադրելու մինչև 1937 թվի մարտը) բիների ընթացքում (1933 թվի մարտից մինչև 1937 թվի մարտը)
գների գներն ընկան 9 անգամ, բանջարեղենի գները՝ 2 անգամ, մսի
հացի գներն ընկան 9 անգամ, բանջարեղենի գները՝ 2,5 անգամ:
գները՝ ավելի քան 2 անգամ, կաթնամթերքներինը՝ 2,5 անգամ:
կառավարությունն այս տարի իջնում լայն սպառման ապրանք-
ների գները: Այս տարվա հսկայական բերքի կապակցությամբ
կոլտնտեսային շուկաներում գները կարուկ կերպով իջան:

Արագորեն աճում ե պետական և կոռպհատիվ խանութնե-
րում, կոլտնտեսային շուկաներում վաճառվող ապրանքների մաս-
ում: Մանրածախ առևտրի ըրջանառությունը քաղաքում 1928
ան: Մանրածախ առևտրի ըրջանառությունը աճեց և 1936 թվին հասավ 74,7 մի-
թվի 7,9 միլիարդ ռուբլուց աճեց և աճեց 9 անգամ:

Սպառում առևտրի, կամ աճեց աճեց 9 անգամ:

Սակայն յուրաքանչյուր բանվորի առձեն ստացած աշխա-
տավարձով չի սահմանափակվում բանվոր դասակարգի յեկամու-
տավարձով չի սահմանափակվում բանվոր դասակարգի աճման հետ զուգընթաց՝
այլ: Առձեն ստացած աշխատավարձի աճման հետ զուգընթաց՝
առձեն սոցիալական ապահովագրության, բանվորների համար
աճումը են սոցիալական ապահովագրության, բանվորների կեն-
կատարվող ընակարանային շինարարության, բանվորների հան-
գանքի բարեկաման, կուրորտների, սանատորիաների, հանգստյան
տաների, պոլիկլինիկաների, կուլտուրական սպասարկման զանա-
տների,

զան տեսակների, ֆաբրիկա-գործարանային աշակերտության աշակերտների համար կատարվող և այլ ծախսերը:

Պետության և արհեստակցական միությունների հաշվին կատարվող կուլտուրական սպասարկումը բանվորական ընտանիքի բյուջեյում խիստ աչքի ընկնող տեղ է գրավում։Այսպիսում, որինակ, 1930 թվին դա կազմում եր առձեռն ստացած աշխատավարձի $31^{\circ}/_0$ -ը, իսկ 1935 թվին՝ $34,5^{\circ}/_0$ -ը:

Պետության և արհեստակցական միությունների կողմից
բանվոր դասակարգի կուլտուր-կենցաղային սպասարկման վրա-
ծախսած ընդհանուր գումարը 1927/28 թվի 1,6 միլիարդ ռուբ-
լուց աճեց և 1935 թվին հասավ 12,2 միլիարդ ռուբլու։ Միմիայն
սոցիալական ապահովագրության բյուջեն (ըստ ծախսերի) նույն
այդ ժամանակամիջոցում աճեց և մեկ միլիարդ ռուբլուց բարձրա-
ցավ՝ 2 միլիարդ ռուբլու։

Կոլեկտիվացումը ճանապարհ բաց արավ գյուղացիության մասսայի առաջ գեղի ունեութ և կուլտուրական կյանքը: Հայտնի յեւ, վորցարական Ռուսաստանի մի շաբք շրջաններում աշխատավոր գյուղացիության մի յերրորդից մինչև կեսը կով չուներ: Անձնական ոգտագործման համար կով նրանք ստացան միայն կոլտնտեսության մեջ, շնորհիվ կոլտնտեսական կարգերի: Կովազրկության լիկիդացիայի խնդիրը ԽՍՀՄ-ի բոլոր կոլտնտեսություններում մոտենում է իր լիակատար լուծման: Կուսակցության գեկավարությամբ, մարմնացնելով կյանքում ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ցուցումները, կոլտնտեսային գյուղը վատահեա արագ առաջ և ընթանում գեղի ունեութ կյանք տանող ուղղով:

Աճում և կոլտնտեսային առատությունը՝ Մեզանում արդեն աճել են հարյուրավոր միլիոնատեր կոլտնտեսություններ, վորագեղ-ամեն մի կոլտնտեսականի տունը լիքն և ամեն բարիքով:

Ահա, որինակ, կույբիշելի մարզի Աւլյանովսկի շրջանի «Ռուգինա Իլյիչա» կոլտնտեսությունը։ Սա շարքային կոլտնտեսություն է, վորի նմանները շատ են։

Անցյալում հետամնաց այդ գյուղը կուլտուրական կենտրոն է դարձել: Գյուղն ելեկտրիֆիկացիայի յենթարկված: Այս տարի բոլոր տներն ելեկտրականություն և անցկացքներու: Այդ բանին հատկացված է 14 հազար ռուբլի: Կոլտնտեսականների տների մեծամասնությունը ռազմիոֆիկացված է: Կոլտնտեսությունում կան շատ տնտեսական շինություններ:

Կոլյտեսությունը կույտուրական ձևով և վարում իր մեծ

Համակցված անտեսությունը՝ կոլտնտեսությունն ունի իր գյուղատնտեսը, ագրոտեխնիկը, անասնաբույժ-տեխնիկը և անասնաբուժակը:

Աճել ե անսառուների թիվը: Այս տարի ձեռք են բերված 22
ազնվացեղ հորթեր: Ֆերմայում յեղած 67 կովից 57-ը գրանցված
են զեղական անսառուների շրջանային մատյանի մեջ:

Կոլտնտեսության յեկամուտներն ահա թե ինչպես են աճել վերջին տարիների ընթացքում. 1931 թվին յեկամուտը կազմում էր 160 հազար ռուբլի, 1932 թվին՝ 269 հազար, 1933 թվին՝ 320 հազար ռուբլի, 1934 թվին՝ 570 հազար ռուբլի, 1935 թվին՝ 980 հազար ռուբլի։ Այս տարի «Ռողինա Խլիչա» կոլտնտեսությունը գրածակ միլիոնատեր:

Աշխորի արժեքը բարձրացավ: Շարքային կողմնտեսական Սեմյոն Յակովլեվիչ Կողլովս իր հինգ հոգուց բաղկացած ընտանիքին հետ միասին առ 1-ն ոդսառուի վաստակեց 640 աշխոր: Այդ աշխորերի համար նա ստանում է՝ 4480 կիլոգրամ հացահատիկ, 3200 կիլոգրամ կարտոֆիլ, 1920 կիլոգրամ գազար, 1280 կիլոգրամ կաղամբ, նույնչափ ճակնդեղ և 768 ռ. գրամ: Մինչեւ տարիա վերջը Կողլովը կոնկենա հաղարկց ավելի աշխոր:

Մանրածախ առեսորի շրջանապությունը գյուղում 1928 թվականին բարեկարգ առել և 1936 թվականին բարեկարգել է 32,2 միլիլիտրդ սուբլուց աճել և 1936 թվականին բարեկարգել է 32,2 միլիլիտրդ սուբլուց:

ԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ ԿՈՒՍՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Այդպիսի ընդհանուր կուլտուրական վերելքի պայմաններից մեջ հանուսառագ ճաշված ազգերի աղաւագրությունը:

Մայզը համարվացած է Սահմանակարգից շատերը բոլորպին այբուբեն չունեցին, չունեցին իրենց գիրը. դա նոր ստեղծվեց խորհրդային իշխանության որով: Խորհրդային Միությունում ել յերեխաները ժամանուիլիքան և միջնակարգ դպրոցներում սովորում են իրենց մայքենի լեզվով:

ԽՍՀՄ-ում բնակվող բոլոր ժողովուրդներն ունեն իրենց դպրոցները, տեխնիկումները, իրենց բարձրագույն դպրոցական հիմնարկները: 105 լեզվով հաստարակվում են գրքեր, ժուռնալներ և թերթեր: Ամեն մի ազգության կուլտուրան հոգածարությամբ աճեցվում է, լինի դա թարոն, պար, յերաժշտություն թե պոեզիա: Ծաղկել ե ինքնագործ արվեստը: Մոսկվայում մեծ հաջողությամբ անցան ուկրաինական, վրացական, դադախական և այլ ժողովուրդների լավագույն թատրոնների գաստրոլները: Աչքը ընկնող ծառայությունների համար կառավարությունը ԽՍՀՄ-ի շքանշաններով պարզեցարում է թատրոնական կուեկտիվներին և առանձին արտիստներին: Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները մասնակցում են ընդհանուր կուլտուրական վերելքին:

Առաջնարում ճնշված ժողովուրդների մեջ, վորոնք կուլտուրական կյանքի բարձրացվեցին, այս ամենը ստեղծեց աշխատանքային խանգամական բարձրացում:

«Ի՞նչպես եյինք ապրում մինք՝ դադախներս: Շան կյանք եր մեր կյանքը, ուզան ու ձին բայի տափաստաններում ավելի լավ եյին ապրում, քան դադախ-չքավորները: Իմ պապերն ու հայրս հովիվներ են յեղել: Փոքր հասակից յես նմանապես արածացրել եմ Տոյուպով և Յաշով բայերի ու կուլակների յերամակները, հոտերը: Մենք խավար, անդրագետ, կեղաստ ու սովահարեյինք: Մեր կողքին եր հարուստ գետը՝ Յահկը (Ուրալ գետը), իսկ ձուկ վորսալ զագտիներին թույլ չեր տրվում: Յայիկի ափերին ցարական չինովմիկներն Ուրալի կազակներին գրգռում եյին «զըրզիների» դեմ (այսպես եյին կոչում առաջ դադախներին): Դադախներն ու ուուները ապրում եյին՝ միմյանց ատելով:»

Միայն խորհրդային իշխանության որով հասկացանք մենք, վոր միմյանց ատելու պատճառ չունենք: Այժմ ամենուրեք, —թե նավթահանքերում, թե մեզ մոտ՝ մեքենայական գործարանում ուղղակի ամփում ե՝ բոլոր քաղաքացիների իրավահավասարություն, անկախ նրանց ռասայից ու ազգությունից:

Յես այժմ վատ չեմ ապրում: Աշխատում եմ վորպես մընահար՝ մեքենայական գործարանի գարբնոցում, ստախանովական եմ, գրագիտություն սովորեցի, թերթ եմ ստանում: Ստախանովականների խմբակում այժմ բարձրացնում եմ իմ տեխնիկական գիտելիքների մակարդակը: Ընտանիքս կուշտ ե, հագնված:

Տարեցտարի ավելի ու ավելի յե հարստանում Դադախական հանրապետությունը, ավելի ու ավելի յերջանիկ ե գառնում

դադախ ժողովուրդը: Ինչպիսի բերկրանք և վստահություն ներշնչեց ամեն մեկիս Սահմանադրության նախագիծը: Իմ մուրճը կարծես ինքն իրեն ե բարձրանում և ավելի ուժգին ե զարկում: Կարծես ինքն իրեն ե բարձրանում և ավելի ուժգին ե զարկում: Մենք այժմ ցույց կտանք աշխատանքի արտադրողականության վեհանգամ որինակները, —այսպես ե ասում դադախ, եմբանեֆտեշտեսնված որինակները, —այսպես ե ասում դադախ, եմբանեֆտեշտեսնված որինակները, մեքենայական գործարանի մընահար Սվենգալին Բիսենալիեվը:

Յերիտասարդ մարտիկ Զուկաշ Դիմիդովը, վորը նորերամտել ե կարմիր բանակ, իր ժողովրդի մասին ասում ե:

«Ժողովուրդը ծեծկված եր, անկուլտուրական, տրախոմայով հիվանդ, արհամարհված: Այսոր Զուկաշին առողջ, գրագետ, կուլտուրական յերկիր ե: Ունի ծաղկող արդյունաբերություն, վերաբացրացող գյուղատնտեսություն: Անգրագետներ համարյա չկանչը բարձրացող գյուղատնտեսություն: Հպարտ եմ նրանով, վոր Ունենք մեր թատրոնները, գպրոցները: Հպարտ եմ իմ հայրենիքը: յես բանակի մարտիկ եմ, և պաշապանելու յեմ իմ հայրենիքը: Նույնպիսի մտքերով ե հանդես գալիս կարմիր-բանակային ուղմուրտ Բորխառվը:»

«Միթե յես, ուզմուրտս, առաջ կարող եյի յերազել կրթության մասին, կուլտուրական կյանքի մասին: Այժմ յես սիջնակարգ թյան մասին, կուլտուրական կյանքի մասին: Այժմ յես սիջնակարգ թյան ունեմ, շոփերի վորպետ պարունակություն: Իմ ժողովուրդն ունի պաշտպանելու ապրելու հնարավորություն: Իմ ժողովուրդն ունի պաշտպանելու ապստումքան, և յես, նրա զավակը, աներեր կլինեմ մարտիկի պոստումքան:»

ԿԱՌՋ ԱԶԱՏԱԴՐՈՒՄԸ

Ցարիզմի որով կինը իրավահավասար չեր: Ցարական որենքն ամենաստորացուցիչ ձեռվ սահմանափակում եյին նրաներն ամենաստորացուցիչ ձեռվ սահմանափակում եյին նրաները: Հաճախ նա իր ամուսնու կամ հոր ստրուկն եր: Երավունքները: Հաճախ նա իր միայն գրլոց հաճախում: Կանանց Աղջիկների շատ քիչ մասն եր միայն գրլոց հաճախում: Կանանց ձնշող մեծամասնությունը, նամանափանդ գյուղում և աղգային մեծամասնությունը, գրել և կարգալ չեր իմանում: Միենույն աշածայամասերում, գրել և կարգալ չեր իմանում: Միենույն աշածայամասնքի համար նրանք ավելի քիչ վարձ եյին ստանում, քան խաստանքի համար նրանք ավելի քիչ վարձ եյին ստանում, տղամարդիկ:

Այս ամենն արմատապես փոխվեց: Կինը տնտեսական, պետական, հասարակական կյանքի բոլոր ընազավառներում տղառարդուն հավասար դիրք ե գրագում: Աղջիկները գպրոցներում սովորում են այնպես, ինչպես տղաները: Աղջիկներն ուսանում են տեխնիկումներում և բարձրագույն գպրոցներում տղամարդիկները ավելի գրագումներում: Հավասար աշխատանքի համար կանց հավասար իրավունքներում:

Գինը ստանում ե հավասար աշխատավարձ: Հարյուր-հաղարավոր կանայք աշխատում են գեկավար աշխատանքում վորպես կոլտնտեսության նախագահներ, գյուղխորհրդի նախագահներ, ինժեներներ, ճարտարապետներ, գիտական աշխատողներ, դիրեկտորներ և այլն:

Դեպի ակտիվ քաղաքական կյանքն են բարձրանում դարավոր քնից արթնացած խորհրդային կանանց նորանոր շերտերը:

ՊԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ՀԱԿԱԴՐՈՒԹՅԱՆ
ՎՈՉՆՉԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ

Կապիտալիզմի որով քաղաքը գտնվում ե արտօնյալ դրության մեջ, իսկ գյուղը մնում է տղետ, անողնական, ծեծկված: Ծնորհիվ հողի մասնավոր սեփականության, գյուղից դուրս են քաշվում հակայական միջոցներ, գյուղը տնտեսապես սարկանում է: Գյուղացիակառ մասսան կապիտալիզմի որով մեկուսացած ե մնում կուլտուրական բոլոր նվաճումներից, հաճախ նույնիսկ չի իմանում յերկաթուղիների, ելեկտրականության, կինոյի, ուսուցիչի գոյության մասին, իսկ յերբեմն նույնիսկ չգիտե, թե ինչ բան ե ոճառը:

Սակայն կապիտալիզմի որով քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող խզման հետևանքների ծանրությունն ընկանում է վոչ միայն գյուղացիության վրա գյուղերում, այլև քաղաքների բանվոր և աշխատավոր մասսաների վրա: Զե՞ վոր կապիտալիզմի որով քաղաքային կուլտուրայի բարիքներից փաստորեն ոգտվում են միայն կապիտալիստները, հարուստները, իսկ բանվոր ու աշխատավոր մասսաները, վորոնք ապրում են աղքատության մեջ, պատսպարվում են նեղիկ, մոայլ լույս ու մաքուր ող չունեցող վորջերում, փաստորեն գրկված են քաղաքի կուլտուրայի բարիքներից:

Բանվոր գասակարգի դիկտատուրան արմատապես փոխում է քաղաքի և գյուղի փոխարարերությունները: Յեթե կապիտալիստական քաղաքը գյուղ է տանում շահագործում, աղքատություն, սիֆիլիս, ողի, ապա մեր սոցիալիստական քաղաքը գյուղ է տանում կուլտուրա, գյուղ է տանում իր ունեցած ինքուստրացման հարստությունները: Մեր խորհրդային գյուղում, կավածածատրական և կուլակային ճնշման վոչնչացումը բանվոր դասակարգի ողնությամբ և նրա ղեկավարության ներքո, հողի մասնավոր սեփականության վոչնչացումը մեծ քայլ հանդիսացավ

գյուղի տնտեսական և կուլտուրական վերելքի ճանապարհին, քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրությունը վերացնելու ճանապարհին: Այդ նույն բանը պետք է ասել նաև աղքային ծայրամասերի վերաբերյալ ոռուսական ցարիզմի վարած գաղության քաղաքականության վերացման մասին: Խորհրդային իշխանությունը վոչ միայն ազատեց ազգային ծայրամասերը ոռուս կալվածատերերի և կապիտալիստների գաղութային ճնշումից, այլև ամեն կերպ բարձրացնում են բանաց, կուլտուրական և տընտեսական տեսակետից նրանց մոտեցնելով խորհրդային քաղաքի մակարդակին:

Կոլտնտեսային կարգերի հաղթանակը գյուղում և խորհրդանտեսությունների շինարարության լայն զարգացումը, գյուղատնտեսության վերածումը խորհրդային արդյունաբերության նույնատիպ սոցիալիստական խոշոր տնտեսության, վճռական քայլ և հանդիսանում Խորհրդային Միության մեջ վոչնչացնելու գյուղի և քաղաքի միջև յեղած հակադրությունը: Մեր սոցիալիստական հայրենիքը այժմ աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրն է: Խորհրդային Միությունում մի կոլտնտեսությանը միջին հաշվով ցանքի տարածությունը ընկնում է 473 հեկտար, մինչդեռ Ամերիկայի Միացյալ Նահանգներում—խոշոր ֆերմերական գյուղատնտեսական արտադրության այդ յերկրում մեկ հողատիրոջն ընկնում է միայն 20 հեկտար:

Քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրության վոչնչացումը մեր յերկրում առաջին հերթին ընթանում է գյուղում առաջավոր տեխնիկա արմատացնելու գծով: ԽՍՀՄ-ի գյուղատնտեսության մեջ 1937 թվին մեխանիկական շարժիչները կենդանի ուժի հետ համեմատած կազմում եյին ըստ կարողության 62,6%, մինչդեռ ցարական Ռուսաստանում 1916 թվին նրանք կազմում եյին 0,8%: 1936 թվին կոմբայններով հավաքել են հացահատիկային ցանքսերի ամբողջ տարածության 24%՝ ի բերքը կոլտնտեսություններում և 99%՝ խորհրդանտեսություններում: Խորհրդային քաղաքի ողնությամբ ինդուստրացման և յենթարկվում խորհրդային գյուղը: Գյուղատնտեսական աշխատանքը մեր յերկրում գառնում է ինդուստրիալ աշխատեսակությունը: Առաջին ճնշմայակի ընթացքում խորհրդային գյուղում տրակտորիստների, կոմբայնավարների, մեխանիկների դասընթացներն անցան 1564 հազար կոլտնտեսականներ և խորհրդանտեսությունների բանվորներ: 1934 թվից մինչև 1937 թվի ողոստումը նույնականի կուրսերում պատրաստվել են 1419 հազար մարդ:

Մեր խորհրդային գյուղը հզոր հոսանքով թափանցում ե սուցիալիստական քաղաքի կուլտուրան։ Ելեկտրական լույս, ռադիո, կինո, գրքեր, լրագրեր, թատրոն—այս ամենն այժմ մատչելի յեմեր գյուղին։ Գյուղի յերիտասարդությունը սովորում ե դպրոցներում, տեխնիկումներում, բուհերում, դաստիարակում։

Քաղաքի և գյուղի միջև յեղած հակաղըռթյան վոչնչացածան համար մզվող պայքարում մեր յերկիրը հսկայական հաջողություններ ձեռք բերեց այն պատճառով, վոր մեր սոցիալիստական պրոլետարական քաղաքն իր հետևեց դեպի սոցիալիզմ, դեպի ինդուստրացում, դեպի կուլտուրա յեր տանում գյուղը: Պրոլետարական քաղաքի դեկավար, առաջատար դերը պահպանվում է նաև հետագայում:

ՆՈՐ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՆ

Յարական Ռուսաստանում այսպես կոչված մտավոր աշխատանքը խստորեն անջատված եր Փիղիկական աշխատանքից և մեկը հակադրված եր մյուսին: Այսպիսին ե դրությունը բոլոր կապիտալիստական յերկրներում: Մտավոր աշխատանքի մարդիկ՝ «ինտելիգենցիան» ընակչության հատուկ խափ են կազմում: Իրենց գոյության խնդրում նրանք կախում ունեն տիրող դասակարգից և պաշտպանում են նրա շահերը:

Կրթությունը, գիտությունը, գեղարվեստը ԽՍՀՄ-ում դադարեցին շահագործողների արտոնությունը լինելուց. մեր յերկրում ամեն մի աշխատավոր կարող ե սովորել և աշխատել աշխատանքի այն ճյուղում, վորն ավելի մոտ ե նրա սրտին: Խորհրդային Միության մեջ աճեց բանվորների և գյուղացիների միջեց գուրս յեկած նոր ինտելիգենցիան, վորը կրթություն և ստացել խորհրդային իշխանության որով:

Խորհրդային պետությունը խնդիր ե դնում հասնելու այն բանին, վոր բոլոր բանվորներին ժամանակի ընթացքում հասցնի ինժեներատեխնիկական աշխատողների մակարդակին: Այդ ուղղությամբ առաջին հաջողությունները մենք ունենք ստախանովյան շարժման մեջ: Ընկեր Ստալինը մատնանշեց, վոր մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակագրության վերջնական վերացումը պետք ե տեղի ունենա՞

«բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը ինժեներ-տեխնիկական աշխատողների մակարդակին հասցնելու բազայի վրա... Այս կապակցությամբ ստախանությունը պահպանության մեջ է» և այլն:

վլյան շարժումը նշանակալիք ե այն տեսակետից, վոր նա իր
մեջ պարունակում ե առաջին սկզբնավորությունը, ճիշտ ե,
դեռ թույլ բայց այնուամենայնիվ մեր յերկրի բանվոր դա-
սակարգի հենց այդպիսի կուլտուրա-տեխնիկական վերելքի
սկզբնավորությունը»:

1936 թվին ձեռնարկություններում տեխնիկական ուսուցման
մեջ 8 միլիոն մարդ են երգրավված: Նրանք բարձրացնում են իրենց
վորակավորումը և գնում են այն ուղղությամբ, վոր ցույց եւ տվել
ընկեր Ստալինը: Տեխնիկական ուսուցման մեծ դերը յերեսում ե
այն բանից, վոր շատ ստախանովականներ, սրանց թվում և ինքը
Ստախանովը, բանվորներից են առաջ յեկել, վորոնք տեխնիկա յեն
սովորել և տվել են տեխմինիմումը: 1941 թվին մեր հայրենիքը
կունենա մոտ 7 միլիոն մարդ ինժեներ-տեխնիկական կրթությամբ:
Տարրական և միջնակարգ դպրոցներում այժմ սովորում են մոտ
28 միլիոն յերեխաններ և պատանիներ, վորոնց առաջ լայն ճա-
նապարհ ե բացված դեպի ուսումնական բարձրագույն հաստատու-
թյունները և տեխնիկումները:

ԽԱՀՄ-ի ԲԱՆՎՈՐ ԴԱՍՏԿԱՐԳԼ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային հասարակությունը բաղկացած է բանվորներից, գյուղացիներից և ինտելիգենցիայից։ Բայց ինտելիգենցիան առանձին դասակարգ չեւ։ Նա կազմվում է բանվորներից և գյուղացիներից։ Այսպիսով մեր հասարակությունը բաղկացած է յերկու դասակարգից՝ բանվոր դասակարգից և գյուղացիներից։ Մակայն սրանք այն բանվորներն ու գյուղացիները չեն, ինչ վոր բուրժուական յերկրներում են։ Այնուեղ բանվորին շահագործում ե բուրժուական գյուղացիներին—նույն բուրժուազիան՝ կալվածատիրոջ հետ միասին։ Մեղանում բանվոր դասակարգն ու գյուղացիությունն ազատ են շահագործումից։ Բանվոր դասակարգը ձնշված դասակարգից գարձափ յերկրի տերը։ Նա զեկավարում է սոցիալիզմի ամբողջ կառուցումը։ Բանվոր դասակարգն ու գյուղացիությունը բարեկամ դասակարգեր են։ Արմատական տարբերությունները նրանց միջև վերացել ե այն բանից հետո, յերբ գյուղացիները մանր արտադրությունից անցան կոլտնտեսություններին։ Կոլտնտեսականը, ինչպես և բանվորը, աշխատում է արտադրության սոցիալիստական միջոցներով։ Նա արդեն աշխատում է վոչ թե մենակ, այլ մեծ կոլեկտիվում, վոչ թե նահապետական գործիքներով, այլ բարդ մեքենաներով։ Իր յեկամուտը նա ստանում

Ն գործադրած աշխատանքի համապատասխան: Նրա ամբողջ կյանքը, նրա կուլտուրան, նրա մտածելակերպն ավելի ու ավելի յեմուտենում բանվորականին: Ինչպես և բանվորը, նա կարմիր Բանակի շարքերում պաշտպանում ե իր սոցիալիստական հայրենիքը: Սահմանադրությունը նրան տալիս ե նույն իրավունքները, ինչ և բանվորին:

Բանվորների և գյուղացիների միջև տարբերություններ գեռկան: Դրանք բղխում են սոցիալիստական սեփականության յերկու ձեռքի տարբերությունից: Կոլտնտեսությունը սոցիալիստական ձեռնարկություն ե: Բայց և այնպես, նա տարբերվում է պետական ֆաբրիկայից, գործարանից կամ խորհունտեսությունից: Կոլտնտեսությունը վոչ թե ամբողջ պետության սեփականությունն ե, այլ աշխատավորների վորոշ կոլեկտիվի սեփականությունը: Կոլտնտեսականն իր յեկամուտն ստանում է աշխարերով: Նա ունի անձնական ոժանդակ տնտեսություն: Սակայն այդ տարբերությունները հիմնական չեն: Յեզ ժամանակի ընթացքում դրանք կարթվեն:

Մեր խորհրդային գյուղացիությունը հաստատուն կերպով մտել և սոցիալիզմի կարմիր դրոշի տակ: Այդ հրաշալի կերպով արտահայտել ե Մոսկվայի մարզի «Պրոբուժդենի» կոլտնտեսության կոլտնտեսական Սերգեյ Նիկոլինը:

«Քաղաքացիներ, յես, ինչպես տեսնում եք, ծեր եմ, մորուքս ել սպիտակ ե: (Ծիծառ, Տերից բացականչությունն): «Ե, գույնչ ծերուկ ես, Պետրովիչ, հարյուր տարի կապրես»): Չեմ վիճում, բայց մինչև հարյուր տարուն ավելի քիչ ե մնացել, քան ինչքան անցել ե ծննդյան որից: Այսպես ուղեմն, քաղաքացիներ, յես ուզում եմ պատմել, թե ինչպես մեր բրիգադում բարձրածայն կարդացին Սահմանադրությունը: Սկզբում յես ցրված եյի լսում, հետո տեսա-լուրջ բան ե, և շատ վոգենորվեցի, այնպես վոր նույնիսկ աշխատանքս մոռացա: (Ծիծառ):

Նախորդ զեկուցողը խոսեց մի քանի խնդիրների մասին, վորոնք այժմ իրականացվում են: Յես բաց-աշկարա կասեմ, վոր այդ յերազանք եյի համարում, վոր այդ իրականանալ չի կարող: Չեմ թագոնի, յես տատանվում եյի: Հստ յերեւթին, յես հենց այն միջակն եմ, վորի համար տեր աստվածը սահմանել ե տատանվել: (Ծիծառ): Բայց հիմա, հանաք բան չե, գաղաքեցի տատանվելուց, վորովհետև վերջիվերջո համոզվեցի, վոր գործը վրուխ ե գալիս: Յես, վորպես տնտեսարար մարդ, չեյի սիրում «յերազող» մարդ-

կանց և այդ ամենը ստախոսություն եյի համարում: Այժմ տեսնում եմ, վոր բոլցկիկների խոսքերն ու յերազանքները ուրիշ բան են: Նրանք գործից կտրված չեն:

Աշխատավոր մարդն ստացավ զիմավոր ուժը. միթե սա յերազ չե: Բոլորը համատեղ աշխատում են կոլտնտեսության մեջ, և լավ ու համերաշխ են աշխատում,—ահա ձեզ յերկրորդ յերազը: Կյանքը առանց հարուստների յե ընթանում—յերրորդ յերազը: Դեռ, արի ու հիմա տատանվիր: Վհչ, տատանվելն այլևս միտք չունի, թե չե բարի մարդիկ կծաղրեն, հիմարի տեղ կդնեն և իրավացի կլինենք:

Բոլցկիկյան կուսակցության դրոշի տակ, Մարքսի—Ենգլեսի—Լենինի—Ստալինի դրոշի տակ տարված են հսկայական հաղթանակներ:

Մեր մեծ հաղթանակները արդյունք են այն բանի, վոր Խորհրդային Միության աշխատավորության գլուխ ե կանգնած բոլցկիկյան հզոր կուսակցությունը և նրա իմաստուն առաջնորդը՝ ընկեր Ստալինը:

Ընկեր Ստալինը կարողացավ խանդավառության կրակով բոցավոել մեր կուսակցությունը, բանվոր դասակարգը, աշխատավոր գյուղացիությունը և աշխատանքի այդ ամբողջ մեծ բանակը շարժել դեպի սոցիալիստական հասարակության հաղթական կառուցումը:

Ընկեր Ստալինը, Լենինի նման, կարողացավ պաշտպանել և պահպանել Մարքսի և Ենգելսի ուսմունքի անաղարտությունը: Նա Լենինի հետ միասին զինեց մեր ժողովուրդը մեկ յերկրում սոցիալիզմի հաղթության հնարավորության մեծ ուսմունքով, պաշտպանեց և պահպանեց, զարգացրեց և կենսագործեց այդ ուսմունքը՝ անողոք պայքար մղելով սոցիալիզմի վոխերիմ թշնամիներ՝ տրոցկիստների, զինովյելվականների և կապիտալիզմի աջ ուստավրատորների դեմ:

Ընկեր Ստալինի զեկավարությամբ, շնորհիվ նրա յերկաթեամբության և անողոքության դեպի ժողովրդի բոլոր թշնամիները, մեր կուսակցությունը և նրա լենինյան-ստալինյան կենտրոնական կոմիտեն կարողացան մերկացնել և ջախջախել այդ յերիցս արգահատելի Փաշիստական վարձկաններին:

Ընկեր Ստալինի զեկավարությամբ ստեղծված մեր ամբողջ հասարակակարգը և սոցիալիզմի Ստալինյան Սահմանադրության ամեն մի հոգվածը տողորված են հոգացողությամբ դեպի սոցիա-

ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱ-
ԼԻՍԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

մեզմի յերկրի աշխատավորը, հոգացողությամբ մարդկանց մասին,
կադրերի մասին:

Յեկ իզուր չե, վոր մեր ամբողջ ժողովուրդը, բոլոր բան-
վորները, կոլտնտեսականները, կանայք, մեր յերիտասարդու-
թյունը և յերեխաները յերջանիկ ու բերկրալից կյանքի համար
սիրո և յերախտազիտության իրենց առաջին խոսքերը միշտ
ուղղում են մեր կուսակցությանը, նրա իմաստուն առաջնորդ
ընկեր Ստալինին:

* * *

Մեր յերկերը շրջապատված ե կապիտալիստական պետու-
թյուններով: Մարդկության վոխերիմ թշնամի ֆաշիստները պատ-
րաստվում են հարձակվելու սոցիալիզմի յերկրի վրա: Նրանք
մեր յերկրի սահմաններն են ուղարկում լրտեսներ, դիվերսանտ-
ներ և մասսարարներ: Նրանց համար տրոցկիստական-բուխա-
րինյան սրիկանները գյուտ են հանդիսանում: Սոցիալիզմի հան-
դեպ վայրենի վոխակալություն տածելով՝ նրանք կատարում են
ֆաշիստական հետախույզների ամենակեղոտու հանձնարարու-
թյունները:

ԽՍՀՄ-ի աշխատավոր մասսաները թշնամիների բոլոր բան-
սարկություններին պատասխանում են խորհրդային կարգերի
ամրապնդմամբ, հեղափոխական զգոնության բարձրացմամբ, սո-
ցիալիզմի բոլոր թշնամիների անողոք վոչչացմամբ: Զկա այս-
պիսի ուժ, վորը կարողանա կասեցնել ԽՍՀՄ-ի աշխատավորների
միլիոնավոր մասսաների հաղթական ընթացքը դեպի առաջ, դե-
պի կոմունիզմ:

ԽՈՐՀՈՂԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄՍՏԱԿԱՆ
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Կապիտալիստական պետությունների տնտեսական հիմք ե
ծառայում արտադրության գործիքների և միջոցների՝ ֆաքտի-
կանների, գործարանների, հանքերի, հողերի, անտառների և այլն
մասնավոր սեփականություններ: Այս ե բոլոր կապիտալիստական
պետությունների ամենազլավոր, արմատական տարբերու-
թյունը խորհրդային սոցիալիստական պետությունից, մեր
պետության տնտեսական հիմքն ե հանդիսանում արտադրու-
թյան միջոցների և գործիքների հանրային սեփականություններ:

Կապիտալիստական պետություններում արտադրության
կարևորագույն միջոցները կենտրոնացած են խուզոր սեփականա-
տերերի՝ կապիտալիստների, կալվածատերների, կուլակների ձեռ-
քին: Սրանք շահագործող դասակարգեր են: Տնտեսական ուժը՝
ֆաքտիկանները, գործարանները, մեքենաները, հողը, փողը նրանց
ձեռքում և գտնվում: Նրանք ոգություն են այդ բանից՝ պրոլե-
տարական և չքավոր մասսաներին շահագործելու և ձնշելու
համար:

Կապիտալիստական յերկրների աշխատավոր դասակարգեր՝
արտադրության բոլոր միջոցներից զուրկ վարձու բանվորները,
չքավոր մանր գյուղացիները, արհեստավորները, տնայնագործ-
ները տնտեսում են ծանր շահագործման լծի տակ, նրանք ձնշված
են, խավար, մոռացված:

Կապիտալիստական յերկրներում պետական իշխանու-
թյունը գտնվում է հարուստ, շահագործող դասակարգերի՝ կա-

պիտալիստների և կալվածատերերի ձեռքում։ Արանք կառավարող դասակարգերն են։ Սրանց ձեռքին ե գտնվում վոչ միայն տնտեսական ուժը, այլև ամբողջ պետական ապարատը իր չինովանիկներով, վոստիկանությամբ, բանակով, դատարանով, բանտերով, հոգևորականությամբ։ Նրանք ոգտագործում են այդ ապարատը, վորապես ավելի ուժեղ՝ կերպով շահագործեն և ճնշեն աշխատավոր դասակարգերին։

Կապիտալիստական յերկրներում պետությունը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքն ե, բանվորական և գյուղացիական մասսաների ճնշման և շահագործման գործիքը։ Այս ե բոլոր կապիտալիստական պետությունների մյուս արմատական տարբերությունը խորհրդային սոցիալիստական պետությունից։ Մեր պետությունը բանվոր դասակարգի ձեռքում ծառայում ե վորապես բուրժուազիային ճնշելու գործիք, աշխատավոր մասսաները ամեն տեսակի շահագործումից և ճնշումից ազատելու գործիք։

Բուրժուական պետությունը բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքն ե հանդիսանում և այն ժամանակ, յերբ նրա հիմնական որենքի մեջ հոչակվում ե բոլորի հավասարությունն որենքի առաջ գեմոկրատական իրավունքներ և ազատություններ են հոչակվում։ Կապիտալիստական պետության պետական իրավակարգը վորքան ել գեմոկրատական լինի, նա անձեռնմխելի յե պահում կապիտալիստների մասնավոր սեփականությունը ֆաբրիկաների և գործարանների նկատմամբ և դասակարգային շահագործման ամբողջ իրավակարգը, աղքատության և աշխատավոր մասսաների ճնշման իրավակարգը։ Կապիտալիստի և բանվորի, շահագործողի և շահագործվողի, կուշտի և քաղցածի, հարուստի և աղքատի միջև իսկական հավասարություն՝ չի կարող լինել։

Կապիտալիստների ձեռքում են մնում տալարանները, թերթերը, ժողովարանները, ընտրական կամպանիաներ մղելու գումարները։ Կապիտալիզմի որով այս բոլորից զուրկ են աշխատավորները։

Ահա թե ինչու լենինն ասում եր.

«Քանի գեռ իրերի գրությունը այսպես ե, «հավասարությունը», այսինքն՝ «մաքուր գեմոկրատիան» խորերայություն եւ իսկական հավասարություն նվաճելու համար, աշխատավորների համար գործնականում դեմոկրատիան

իրագործելու համար հարկավոր ե նախ իլել շահագործողներից բոլոր հասարակական և շքեղ մասնավոր շենքերը, հարկավոր ե նախ աշխատավորներին տալ ազատ ժամանակ, հարկավոր ե, վոր նրանց ժողովների ազատությունը պահպանեն զինված բանվորները և վոչ թե ազնվականները կամ կապիտալիստ-սպանները՝ խղճուկ զինվորներով։

Միայն այսպիսի փոփոխությունից հետո կարելի յե խոսել ժողովների ազատության մասին՝ առանց բանվորներին, աշխատավորներին, չքավորներին ծաղրելու։ Իսկ այսպիսի փոփոխություն վոչ վոք չի կարող կատարել, բացի աշխատավորների ավանդարդից՝ շահագործողներին և բուրժուազիային տապալող պրոլետարիատից։¹

Բուրժուական գեմոկրատիան միշտ ձևական բնույթ ունի։ Որենքում հոչակված բուրժուական գեմոկրատիան ամեններն չի հանդիսանում բանվորների, գյուղացիների և չքավորների համար փաստացի, իսկական գեմոկրատիա։ Նա գեմոկրատիա յե հանդիսանում ազգաբնակության չնչին փոքրամասնության՝ կապիտալիստների ու կալվածատերերի համար, հարուստների համար։

Միայն բանվոր դասակարգի դիկտատուրան, Խորհրդային պետությունը աշխատավորների համար իսկական, փաստական գեմոկրատիայի իրավակարգ և հանդիսանում։ Միայն սոցիալիզմի յերկրում՝ ԽՍՀՄ-ում գոյություն ունի աշխարհիս ամենահետեղության, սոցիալիստական գեմոկրատիզմը, վորը ստեղծում ե բոլոր նախապայմաններն աշխատավոր մասսաների համար՝ ակտիվ և գիտակից կերպով մասնակցելու պետության կառավարման գործին։

Կապիտալիստական յերկրներում պետական կառուցվածքը, ինչպես հիմա կտեսնենք, տարբեր ե լինում։ Բայց բոլոր տարբերություններով հանդերձ՝ նա ամենուրեք այնպես ե հարմարեցրած, վորապես կապիտալիստական իշուրու սեփականատերերի տիրապետությունը, վորապես կարողանա նրանց համար պաշտպանել աշխատավոր մասսաներին շահագործելու և ճնշելու «իրավունքը»։

1 Կեթիթ, հ. XXIV, էջ 9.

ՅԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հիշենք, ինչպիսին եր անցյալում մեր յերկրի պետական կառուցվածքը:

Ցարական Ռուսաստանի ինքնակալ միտպետություն եր: Ամբողջ եշխանությունը ձևականորեն պատկանում էր ցարին, «ինքնակալին»: Մինհստրները նշանակվում եյին ցարի կողմից: Ցարին առընթեր կար նաև Պետական խորհուրդ՝ նույնպես ցարի կողմից նշանակված բարձրաստիճան չինովսիկներից բաղկացած խորհրդակցական մարմին: Իրականում իշխանությունը գտնվում էր անվանի ասինանուժով-կալվածատիրության ձեռքում, վորի տրամադրության տակ գտնվում եյին վարչական մարմինները, վոստիկանությունը, ժանդարմերիան, զորքը, հոգեորականությունը, դատարանը, բանտերը:

Ցարը խոշորագույն կալվածատեր էր: Ցարական ինքնականությունը, դա ազնվական հոգատիրական դասակարգի-կալվածատերի դիկտատուրան էր, նրանց անսահմանափակ տիրապետությունը: Ցարական իշխանությունը նույնպես պաշտպանում էր կապիտալիստների, ընդհանրապես բոլոր խոշոր սեփականատերերի շահերը:

Առաջին ռուսական բոլիտուա-դեմոկրատական հեղափոխությունը (1905 թ.) ստիպեց ցարական ինքնակալարությանը Ռուսաստանի պետական կառուցվածքի մեջ մտցնել միքանի վոչ եյական փոփոխություններ: Հիմնվեց Պետական դումա՝ պառլամենտի խղճուկ նմանությունը: Պետական դումայի ընտրությունները կազմակերպված եյին հետեւյալ կերպ: Սկզբում ընտրվում եյին պատվիրակները: Բոլոր պատվիրակների կեսից ավելին ընտրվում էր խոշոր հոգատերերի կողմից: Քաղաքի ընտրողներն ընտրում եյին պատվիրակների մոտ մի քառորդը, ընդունում այդ ընտրողների հարուստ մասն ընտրում էր քաղաքի պատվիրակների կեսից ավելին: Ընդհանուր առմամբ խոշոր հոգատերերը 230 ընտրողներից տալիս եյին մի պատվիրակ, զյուղացիները 60 հազար ընտրողներից մի պատվիրակ, բանվորները՝ 125 հազար ընտրողներից մի պատվիրակ: Այսպիսի սիստեմի առկայությամբ նահանգների կեսի պատվիրակների մեծամասնությունը կազմում էր եյին կալվածատերերը, մյուս կեսի պատվիրակների մեծամասնությունը կազմում էր եյին կալվածատերերը:

Կապիտալիստների հետ միասին: Բանվորները և գյուղացիները Պետական դումա կարող եյին անցկացնել միայն անհան թվով ներկայացուցիչներ: Կանայք զրկված եյին ընտրական իրավունքներից: Վոչ-ուուս ճնշված ժողովուրդները՝ ուղբեկները, թուրքմենները, զազախները, տաջիկները, զըրղղները, թաթարները և ուրիշները, վորոնք կազմում եյին մոտ առաջ միլիոն հոգի, նմանապես զրկված եյին ընտրական իրավունքներից: Մյուս վոչ-ուուս ժողովուրդների ընտրական իրավունքները խիստ կրծատված եյին: Որինակ՝ ամբողջ կովկասից ընտրվում էր միայն տասը պատգամավոր: Ռուսերեն չիմացող անձերին ընտրել չեյին կարող:

Ցարական Դուման, ինչպես կենինն էր ասում, «Ժողովրդական ներկայացուցչության կոպիտ կեղծումն եր»: Բայց նույնիսկ այդ Դումայի իրավունքները ծայր աստիճան կրծատված եյին, և նա լիակատար կախումն ուներ Պետական խորհրդից:

Պետական խորհուրդը վերածված էր վերին պալատի, վորը վեր էր կանգնած ստորին պալատից — Պետական դումայից: Պետական խորհրդի անդամների կեսն առաջվա նման նշանակվում էր ցարի կողմից: Մյուս կեսն ընտրում էյին կալվածատերերը և ազնվականների ընկերությունները, խոշոր կապիտալիստների կազմակերպությունները, ուղղափառ հոգեորականությունը: Բանվորների և գյուղացիների վոչ մի ներկայացուցչություն չեր թույլատրվում Պետական խորհրդում:

ՄԵՐ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՑԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՄԻՍՏԵՄՆԵՐԸ

Արդի բոլոր կապիտալիստական յերկրներում կան պետական իշխանության այս կամ այն ընտրական մարմինները: Ծանոթանանք բուլժուական սիստեմների հետ:

Կապիտալիստական յերկրների մեծ մասում սահմանադրությունները պարունակում են հոդվածներ ընդհանուր ընտրական իրավունքի մասին: Սակայն, բոլոր սահմանադրություններում սահմանվում են ընտրական իրավունքների այս կամ այն սահմանափակումները կամ այդ իրավունքները բոլորովին վերացվում են քաղաքացիների մի ամբողջ շարք խավերի նկատմամբ:

Կանայք, վոր կազմում են ընակչության կեսը, շատ յերկը կըրներում զրկված են ընտրական իրավունքներից: Այդ յերկը

ների թվին են պատկանում՝ Իտալիան, Ճապոնիան, Հարավ-Սլավիան, Բուլգարիան (միապետություններ), Ֆրանսիան, Շվեյցարիան, Արգենտինան (հանրապետություններ): Գերմանիայում կանաց ընտրական իրավունքները թեպետև չեն վերացված, բայց ֆաշիստները փաստորեն կանաց հեռացրել են քաղաքական կյանքին մասնակցելուց:

Մյուս յերկրներում ընտրական իրավունք ունեցող կանաց շրջանը սահմանափակ է: Որինակ, Հունգարիայում այդ իրավունքներն ստանալու համար կանացը պետք է բավարարեն մի շարք խստացրած պայմանների: Նրանք պետք են 30 տարեկանից փոքր չինեն (տղամարդկանց համար պահանջվում են 24 տարեկան հասակը), պետք են ավարտած լինեն վեցամյա դպրոց (տղամարդիկ՝ չորսամյա), պետք են ծնած լինեն յերեք որինական» զավակից վոչ պահաս և կամ պետք են ունենան ապրելու սեփական յեկամուտներ: Բելգիայում ընտրական իրավունքներ տրված են միայն փոքրաթիվ կանաց, վորոնք տուժել են գերմանացիների արշավանքի ժամանակ, կամ համաշխարհային պատերազմի ժամանակ կորցրել են իրենց ամուսիններին կամ վորդիներին: Կանաց իրավունքների սահմանափակումներ գոյություն ունեն Պորտուգալիայում, Ռումինիայում, Հունաստանում և ուրիշ յերկրներում:

Մեզ մոտ խորհրդային սոցիալիստական պետուրյան մեջ կանեց բնարական իրավունքների վոչ մի սահմանափակում չկտ: Մեր Սահմանադրության 137-րդ հոդվածում ասված ե. «Կանացը ընտրելու և ընտրվելու իրավունքից ոգտվում են տղամարդկանց հետ հավասարապես»: Համաձայն մեր Սահմանադրության՝ քաղաքական, հասարակական, տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում կանացը ունեն նույն իրավունքները՝ ինչ և տղամարդիկը: Կանաց իրավունքների վորենք սահմանափակված վերաբերյալ միտքն անգամ մեզ թվում են վայրենի և վրդովեցուիչ: Մեր պետական իշխանության որգաններում կանացը պատվավոր տեղ են գրավում: Դյուզական խորհուրդների անդամների թվում կանացը կազմում են 26⁰/օ-ից ավելի, քաղաքային խորհուրդներում՝ 30⁰/օ-ից ավելի:

Քաղութներ ունեցող կապիտալիստական պետություններում ընտրական իրավունքներից զրկված են գաղութների բնիկ աշխատավորը բնակչությունը, վորը պատկանում է մետրոպոլիայի (գաղութը գրավող յերկիր) բնակչությունից տարբեր սասայիշ:

Մինչդեռ հաճախ գաղութի բնակչությունը զգալիորեն ավելի յեմետրոպոլիայի բնակչությունից: Որինակ, Անգլիայում 46,8 միլիոն բնակիչ կա, իսկ նրա գաղութներում՝ 450 միլիոն: Ֆրանսիայում կա 42 միլիոն բնակիչ, իսկ նրա գաղութներում՝ 65 միլիոն: Այդպիսի իմպերիալիստական տերություններում ընտրական իրավունքներ ունի, ուրեմն, բնակչության աննշան փոքրամասնությունը միայն:

Այս կապիտալիստական պետություններում, վորտեղ շատ ժողովուրդներ են բնակվում, սահմանափակված են ազգային վորտամասնությունների իրավունքները: Որինակ, Լեհաստանում բնակչության 40%՝ կազմող ուկրաինացիները, բելոռուսները, հրեաները և յեմում (պառլամենտ) ունեն պատգամավորների ընդհանուր թվի միայն 10%՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում համարյա ամբողջնեղը բնակչությունը, անդիւն չիմանալու պատրավակով, զրկված են ընտրելու իրավունքներից: Գերմանիայում ընտրական իրավունքներից զրկված են «հյուսիսային» արիստոկրատական» (գերմանական) չպատկանող բնակչությունը:

Մեր Խորհրդային սոցիալիստական պետության մեջ ըստ սահմայական կամ ազգային հատկանիշի ընտրական իրավունքների վոչ մի սահմանափակում չկտ: Ըստ մեր Սահմանադրության, վոչ մեզ մոտ պատժվում են որենքով վորպես հանցագործություն: Մասայական կամ ազգային բացառիկության կամ ատելության կամ նույնիսկ արհամարհանքի ամեն տեսակ քարոզ մեզ մոտ նմանապես պատժվում են որենքով վորպես հանցագործություն (տես Սահմանադրության 123-րդ հոդվածը):

Բոլոր կապիտալիստական պետություններում ընտրական իրավունքներ ստանալու համար սահմանափակ է բարձր տարիք: Այսպես, որինակ, Ֆրանսիայում, Բելգիայում, Զեխոսլովակիայում, Ռումինիայում յերիտասարդ քաղաքացիները մինչև 21 տարեկան հասակը զրկված են ընտրական իրավունքներից, Հունգարիայում և Լեհաստանում մինչև 24 տարեկան հասակը, Դանիայում մինչև 25 տարեկան հասակը: Պալամենտի անդամ ընտրվելու իրավունք ստանալու համար զանազան յերկրներում պահանջվում է ելավելի բարձր տարիք: Որինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգ-

Ներում այդ իրավունքն ստանում էն սկսած 25 տարեկանից՝ կեհաստանում՝ 30 տարեկանից: Այս սահմանափակումը ուղղված է յերիտասարդության ավելի ակտիվ մասի գեմ, վորը հաճախ աչքի յե ընկնում իր հեղափոխական տրամադրություններով:

Մեզ մոտ, խորհրդային սոցիալիստական պետարյան մեջ լինտրական իրավունքներ ունեն բայր չափանակ բաղադրյան 18 տարեկանից սկսած (տես Սահմանադրության 135-րդ հոդվածը): Մեզ մոտ վոչ միայն չեն սահմանափակվում յերկու սեռի յերիտասարդության իրավունքները, այլ ընդհակառակը, նա ամեն կերպ քաջալրկում և առաջ և քաշում պետական աշխատանքի: Գյուղխորհուրդների անդամների թվում մինչև 25 տարեկան յերիտասարդները կազմում են 26% ից ավելի, քաղաքային խորհուրդներում—մոտ 18%: Գյուղխորհուրդների նախագահների թվում յերիտասարդությունը կազմում է մոտ 15%, շրջանային գործադիր կոմիտեների անդամների թվում՝ մոտ 13%:

Բուրժուական շատ պետություններում սահմանված են ընտրական իրավունքների սահմանափակում ըստ գույքային հատկանիշի: Որինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների վորոշ նահանգներում քաղաքացին պետք է ունենա 300 դոլարից վոչ պակաս արժողության գույք, կամ 40 ակրից վոչ պակաս հողամաս (ակրը հավասար է 0,4 հեկտարի), վորպեսզի ընտրական իրավունքներ ստանա: Ութ նահանգներում քաղաքացիները պետք է վճարեն հատուկ «ընտրական գլխահարկ» ընտրողների ցուցակի մեջ ընկանելու համար: Շատ նահանգներում հասարակական նպաստ ստացող քաղաքացիները (որինակ՝ գործազուրկները) զրկված են ընտրական իրավունքներից: Նույն բանն է Հունգարիայում, Դաշնայի ամառագույն մասում, Ֆինլանդիայում, Շվեյցարիայում: Անգլիայում ընտրական իրավունքից զրկված են սեփական ընակարան չունեցող քաղաքացիները (ընակարան վարձողի հետ ապրող՝ չափանակավակները), Ավստրիայում՝ ընտրական իրավունքները ունի միայն «ընտանիքի գլխավորը»: Բուլղարիայում ընտրական իրավունքներից զրկված են վարձուբանվորները: Այս բոլոր սահմանափակումներն ուղղված են չունեող և սակավազոր ընտրական իրավունքյան, նախ և առաջ բանվորներից:

Մեզ մոտ չետարկան իրավունքների վոչ մի սահմանափակում ըստ գույքային հատկանիշի: Անկախ գույքային դրությունից,

բոլոր չափահաս քաղաքացիներն ունեն ընտրական իրավունքներ (տես Սահմանադրության 135-րդ հոդվածը):

Կապիտալիստական յերկրներում սովորաբար ընտրական իրավունքներ իրավունքների սահմանափակում և սահմանվում՝ յելնելով նստակեցությունից: Վորպեսզի քաղաքացին ընտրական իրավունքներ ստանա, նա պետք է վորոշ ժամանակ անընդհատ ապրի տվյալ վայրում, Անգլիայում և Ֆրանսիայում՝ կես տարուց վոչ պակաս, ձապոնիայում՝ մեկ տարուց վոչ պակաս, Հունգարիայում, Յեգիպտոսում՝ յերկու տարուց վոչ պակաս, ՀԱՄՆ-ի Պանազան նահանգներում՝ յերեք ամսից մինչև յերկու տարի, Նորվեգիայում՝ հինգ տարուց վոչ պակաս: Այս սահմանափակումներն ուղղված են բանվորների դեմ, վորոնք ստիպված են մի տեղից մյուսը թափառել՝ աշխատանք վնասելով նամանավանդ անսենական ձնաժամաների ժամանակ: Այս սահմանափակումները հարցածում են նաև հեղափոխական բանվորներին, վորոնց ձեռնարկատերերը հաճախ դուրս են շպրտում ձեռնարկությունից:

Մեզ մոտ նստակեցության կապակցությամբ ընտրական իրավունքների վոչ մի սահմանափակում չկա: Բոլոր չափահաս քաղաքացիները, անկախ այն բանից, թե նրանք վորքան ժամանակ են ապրում տվյալ վայրում, ունեն ընտրական իրավունքներ (տես Սահմանադրության 135-րդ հոդվածը): Յեթե ընտրողը փոխում է իր բնակության վայրը ընտրություններն սկսվելու նախորդեյին, յերբ արդեն կազմված են ընտրողների ցուցակները, նա խորհրդագից կստանա «քվեարկության իրավունքի վկայական», վորպեսզի նոր վայրում մասնակցի ընտրություններին (տես «ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության 15-րդ հոդվածը»):

Շատ պետություններում ընտրական իրավունքներ ստանալու համար վարու կրություն և պահանջվում: Որինակ, ձապոնիան, Բրազիլիան, Չիլին, Կոլումբիան, Պերուն ընտրողից գրագիտություն են պահանջում: Հունգարիայում պահանջվում է չորսամյա կրթությունից վոչ պակաս (կանաց համար՝ վեցամյա կրթությունից վոչ պակաս): ՀԱՄՆ-ի 15 նահանգներում պահանջվում է անգլիակեն լեզու գիտենալ: Նման սահմանափակումներն ուղղված են ժողովրդական մասսաների դեմ, վորոնց բուրժուական պահում և ազիտության մեջ և «անկիրթ լինելու» պատըրվակով զրկում են ընտրական իրավունքներից:

Մեզ մոտ կրության կապակցությամբ ընտրական իրավունքների

վաշ մի սահմանափակում չկա: Բոլոր չափահաս քաղաքացիները, անկախ կրթության մեջ, մեզ մատ ունեն բնութական իրավունքներ (տես Սահմանադրության 135-րդ հոդվածը): Ընտրական բյուլետենները տպագրվում են համապատասխան բնութական ոկրուգի բնակչության լեզվով: Անգրագետ քաղաքացիներին լիակատար հնարավորություն և ապահովվում մասնակցելու քվեարկությանը (տես «ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի ընտրությունների կանոնադրության» 68 և 81-րդ հոդվածները):

Կապիտալիստական յերկրներում հաճախ ընտրական իրավունքների անհավասարություն և սահմանվում՝ հոգուտ բնակչության ունենոր և կրթված խավերի: Որինակ, Անգլիայում արդյունաբերական և առևտրական ձեռնարկատերները կարող են ընտրել թե ըստ իրենց բնակության վայրի և թե ըստ ձեռնարկության վայրի: Համալսարանական ոկրուգի և թե ըստ բնակության վայրի: Այսպիսով բուրժուական խավերին պատկանող շատ քաղաքացիներ ունեն յերկուական ձայն:

Մեզ մոտ ընտրական իրավունքների անհավասարություն չկա: Մեր Սահմանադրության 136-րդ հոդվածը ասում է. «Պատգամավորների բնութարյան հավատար են. յուրաքանչյաւր քաղաքացի ունի մեկ ձայն. բոլոր քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են հավատար հիմունքներով»:

Վերջապես, կապիտալիստական յերկրներում սովորաբար բնութական իրավունքներից գրեթե են բանակի և նախատրմի զինվորական ծառայողները: Այս կերպ քաղաքականությունից հեռացվում են շարքայինները, այսինքն՝ զինվորական համազգեստ հագած աշխատավորները: Իսկ ունենոր դասակարգերին պատկանող սպայական կազմին այդ չել խանգարում քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն ունենալու: Բավական և մատնանշել ձապոնական, լեհական և սպանական զինվորականության որինակը:

Ըստ մեր Սահմանադրության, կարմիր բանակում գտնվող քաղաքացիներն ընտրական իրավունքից սպավում են բոլոր քաղաքացիների հետ հավասարապես:

Այդ բոլոր սահմանափակումների իմաստը պարզ է: Բուրժուազիան ջանում և այսպիսի ճանապարհներով աշխատավորների հնարավորին չափ լայն խավեր հեռացնել ընտրություններից, պետության կառավարման գործին մասնակցելուց և

Ընարավորություն ապահովել իր համար պառկամենտ անցկացնելու իրեն ավելի ցանկալի մարդկանց:

Ֆաշիստական պետություններում ընտրությունները վերածված են զաղբերի բանի կատակերգության: Թեկնածուների ցուցակները վաղորոք կազմում են ֆաշիստական կուսակցությունների պարագլուխները: Որինակ, Գերմանիայում 1936 թվի ընտրություններին ֆաշիստական ցուցակում կար 1035 թեկնածու, ընդունությունը՝ 59 ֆաշիստական պարագլուխներ մտնում եյին բոլոր տեղական ցուցակների մեջ և յենթակա եյին պարտադիր «ընտրման»: Իսկ մասցած թեկնածուների ընտրության հարցը վճռում եր ներքին դործոց մինիստր Ֆրիկը: Նա վորոշում եր, թե զրանցեց ում տեսք և «ընտրել». Խտակիայում ընտրողները պարտավոր են «այս» կամ «վոչ» պատասխանել մի հարցի: «Հավանություն տալիս եք ֆաշիստական մեծ խորհրդի կողմից կաղմած ցուցակին»: Յեվ թող վորեև մեկը փորձի պատասխանել «վոչ»: Նա ուղղակի իր կյանքը վտանգի յե յենթարկում: Ֆաշիստական յերկրներում պարագանենաները վերածված են ֆաշիստների նշանակած մարդկանց ժողովի, վորոնք յերբեմն հրավիրվում են ֆաշիստական զեկավարների ճաները լսելու համար:

Մեր խորհրդային ընտրական սիստեմը արմատապես տարբերվում է բուրժուական ընտրական սիստեմներից:

Խորհրդային սոցիալիստական պետության մեջ, վորտեղ իշխանությունը պատկանում է աշխատավորներին՝ հանձին նրանց խորհրդական կազմի վոչ մի կարիք չկա ընտրական իրավունքների վորեև սահմանափակում մտցնելու: Խորհուրդների իշխանությունը ժողովրդից յերկյուղ չի կրում: Մեր իշխանությունը հենվում է ժողովրդի վրա: Նա անխտիր բոլոր աշխատավորներին ուղում է ներդրավել պետությունը կառավարելու գործի մեջ:

Մեր Գերագույն Խորհուրդը, վորն ընտրվում է ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ դադունի քվեարկությամբ, աշխատմիս միտի իսկական ժողովրդական ներկայացնելությունն ե, վորը լիովին արտահայտում է Խորհուրդների Միության ժողովուրդների կամքը:

ՎԵՐԻՆ ՊԱԼԱՏՆԵՐ ԲՈՒՐՃՈՒԱԿԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բացի պառլամենտից կամ ստորին պարատից, բուրժուական պետություններում սովորաբար կան նաև վերին պալատներ:

Տեսնենք, թե դրանք ինչպես են կաղմվում և ինչ են ըրանց նպատակը:

Իտալիայում վերին պալատը կամ սենատը բաղկացած են բազավորի կողմից նշանակված բարձրաստիճան մարդկանցից՝ սպայության, հոգեորականության ներկայացուցիչներից։ Անգլիական վերին կամ լորդերի պալատում նստած են «արքայական ծագութ» ունեցողները և այլ տիտղոսավոր ազնվականներ՝ գուքսեր, մարկիզներ, կոմսեր, վիկոնտներ, բարոններ։ Թագավորի շնորհած իրենց տիտղոսները և լորդերի պալատում մասնակցելու իրենց իրավունքը նրանք ժառանգաբար հանձնում են անդրանկության կարգով։ Վերին պալատի ճնշող մեծամասնությունը բաղկացած է այդպիսի անդամներից։ Բացի դրանից, վերին պալատին մասնակցում են Շոտլանդիայի 18 պերեր, փորոնքը ընտրված են ցման, Իռլանդիայի 28 պերեր, փորոնք ընտրված են վերին պալատի լիազորության ժամկետով, 26 արքեպիսկոպոսներ և յեպիսկոպոսներ, դատական 3 բարձր աստիճանավորներ համաձայն իրենց վարած պաշտոնի։

Ճապոնիայում պերերի վերին պալատն ունի այսպիսի կաղմանդամ կայսերական տնից, 14 պրինցներ, 28 մարկիզներ՝ բոլորը տոհմական իրավունքով և 18—20 տարեկան դառնալուց հետո, 18 կոմսեր և 66 վիկոնտներ՝ ընտրված այդ կոչումներն ունեցող մարդկանց կողմից, 123 անդամ, փորոնց կայսրը «աչքի ընկնող մարդկանցից» նշանակում են ցման. 64 անդամ, ընտրված առնվազն 40 տարեկան հասակ ունեցող քաղաքացիների կողմից, փորոնք վճարում են տարեկան 300 յենից վոչ պակաս ուղղակի հարկ, և 4 անդամ, փորոնց ընտրում են կայսերական ակադեմիան։

Այն յերկրներում, վորտեղ վերին պալատներն ընտրվում են, նրանց ընտրության համար սահմանված են առանձնապես բարձր պահանջներ։ Վերին պալատի անդամ ընտրվելու համար պետք է պատկառելի հասակ ունենալ. ՀՄՆ-ում, Արգենտինայում, Կանադայում վոչ պակաս 30 տարեկանից, Դանիայում, Հունգարիայում, Շվեդիայում վոչ պակաս 36 տարեկանից, Ֆրանսիայում, Բելգիայում, Ռումինիայում վոչ պակաս 40 տարեկանից, Չեխոսլովակիայում վոչ պակաս 45 տարեկանից։ Բացի դրանից, վերին պալատի անդամության թեկնածուն պետք է ունենա խոշոր գույքային ցենզ։ Որինակ, Արգենտինայում պետք է ունենա տարեկան 2000 պեղոյից վոչ պակաս յեկամուտ, Կանադայում՝ 4000 դոլարից վոչ պակաս արժողության սեփականություն։ Յե-

գիպտոսում թեկնածուն պետք է պաշտոնական բարձր գիրք ունենա (մինիստրներ, բարձրաստիճան հոգեորականություն)։ Բելգիայում սենատորներ կարող են ընտրվել միայն բարձր աստիճանավորներ (նահանգապետներ, հոգեորականներ տաս տարվա ծառայության ստաժով)։

Մի քանի յերկրներում սահմանված են վերին պալատի բազմաստիճան ընտրություններ։ Ֆրանսիայում սենատորների ընտրությունները կատարվում են այսպես։ Նախ, մունիցիպալիտետները (քաղաքային ինքնավարություններ) պատվիրակներ են ընտրություն։ Այնուհետև պատվիրակները զիսավոր (նահանգային) և ոկրուգային խորհրդականների և յուրաքանչյուր դեպարտամենտի (նահանգգի) պառլամենտի պատգամավորների հետ միասին սենատոր են ընտրություն։ Դանիայի վերին պալատն ընտրվում է յերկաստիճան քվեարկությամբ, իսկ նրա անդամների մի մասն ընտրվում է ստորին պալատի կողմից։ Արգենտինայում վերին պալատն ընտրվում է նահանգների պառլամենտների կողմից։ Բելգիայում, Դանիայում, Հունգարիայում վերին պալատների մի մասը «կոոպտացիայի» յեն յենթարկվում իրենց կողմից, այսինքն՝ լրացգում է հենց պալատի վորոշմամբ (հաճախ ընտրություններում տապալված տիրող կուսակցությունների անդամներից)։

Սովորաբար վերին պալատներն ունեն հատուկ իրավունքներ և առավելություններ։ Որինակ, ԱՄՆ-ում նախագահը կարևորագույն շատ հարցերի նկատմամբ պետք է ստանա սենատի յերկու յերրորդ մասի համաձայնությունը, այնինչ ստորին պալատից վոչ մի համաձայնություն չի պահանջվում։ Ֆրանսիայում հանրապետության նախագահը՝ սենատի հետ հաճախակի կարող է արձակել ստորին պալատը, այն ժամանակ, յերբ սենատը (վերին պալատը) չի կարելի արձակել։

Նույնպես և ճապոնիայում ստորին պալատը կարելի յեն արձակել, իսկ վերին պալատն արձակել չի թույլատրվում։ Առանց վերին պալատի ճապոնական կառավարությունը վոչ մի որենք չի կարող անցկացնել։ Վերին և ստորին պալատների տարբերությունը ճապոնիայում պլրոֆեսոր Իվասակին նկարագրում է այսպիս։ «Յերբ վորև մինիստր հայտարարություն է անում վերին պալատում, միշտ նա իր տերերին դիմող ծառայի դիրք ե ընդունում. իսկ յերբ նա յերկում է ստորին պալատում, նա սովորաբար իրեն պահում է ինչպես տերը իր ծառաների զրջանում»։ Վերին պալատների լիազորությունների ժամկետը սահման-

վում և սովորաբար ավելի յերկար, քան ստորին պալատների համար: Որինակ, ֆրանսիայում՝ 9 տարի սենատի համար և 4 տարի պառամենտի համար: Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ սենատի համար 6 տարի և պառամենտի համար՝ 2 տարի: Հունգարիայում՝ 10 տարի վերին պալատի և 5 տարի ստորին պալատի համար և այլն: Բացի դրանից, վերին պալատների կազմը վոչ թե ամբողջովին միանգամից, այլ միայն մաս-մաս և ընտրվում: Որինակ, ֆրանսիայում յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ վերընտրվում են սենատի կազմի մի յերրորդ մասը: Ամերիկայի Միացյալ Նահանգներում յուրաքանչյուր յերկու տարին մեկ անգամ վերընտրվում են սենատի մի յերրորդ մասը: Շվեդիայում ամեն տարի վերընտրվում են վերին պալատի մեկ ութերրորդ մասը և այլն:

Պարզ ե, թե ինչի համար են ընտրությունների այսպիսի սահմանափակումները, ինչի համար են վերին պալատներ կազմելու այսպիսի կարգը: Այս ճանապարհով բուրժուազիան վերին պալատներից ստեղծել են մի վստահելի մարմին՝ ստորին պալատների վրա հսկելու համար: Լինում են գեղքեր, յերբ ստորին պալատները ժողովրդական մասսան տակ ընդունում են այս կամ այն որենքը, վորը բուրժուազիայի ղեկավար ըրջանները իրենց համար անընդունելի յեն գտնում: Այսպիսի որենքը մերժվում են վերին պալատի կողմից: Այդ գեղքում ստորին պալատը կամ բոլորովին պետք են հրաժարվի այդ որենքից, կամ վերամշակի այն, համապատասխան վերին պալատի պահանջների: Ստորին պալատի «համառելու» գեղքում այդ կարող են հանգել կառավարության ճգնաժամի, կառավարության հրաժարականի, ստորին պալատի արձակման:

Քերենք մի որինակ: Ֆրանսիայում 1936 թվի մայիսին պառամենտի ընտրությունների ժամանակ, ինչպես հայտնի յե, հաղթեցին ժողովրդական ճակատի կուսակցությունները (սոցիալիստական կուսակցությունը, կոմունիստական կուսակցությունը, ռազմակաների ծախ բուրժուական կուսակցությունը): Կառավարությունը կազմվեց սոցիալիստներից և ռազմականերից, սոցիալիստ Բլյումի գլխավորությամբ: Խոշոր բուրժուազիան, քանիւները կատաղի պայքար մղեցին նոր կառավարության դեմ, աշխատելով իսկական յերկրի ֆինանսական դրությունը վուկին արտասահման փոխադրելու և սպեկուլացիաների միջոցով: Այդ ժամանակ պառամենտը 1937 թվի հունիսին ընդունեց կառավարությանը արտակարգ լիազորություններ տալու որենքը:

բանկային սպեկուլացիաների դեմ պայքարելու համար: Բայց սենատը (վերին պալատը) մերժեց այդ որենքը: Բյուլումի կառավարությունը հրաժարական տվեց: Կազմվեց նոր կառավարություն սաղիկալ Շատանի գլխավորությամբ, սոցիալիստների մասնակցությամբ և կոմունիստների աջակցությամբ: Այսպիսով, ֆրանսական սենատը խոշոր կապիտալի ձեռքում հանդիսացավ ժողովրդական ճակատի կառավարության դեմ հարձակվելու գործիքը: Մոտավորապես նոյն դերն են խաղում վերին պալատները նաև մյուս պետություններում:

